AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 1


# Ազգ
Azg

15 ՆՈՅԵՄԲԵՐ 2019 ՈՒՐԲԱԹ 43(5590)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Հայտարարություն

2019թ. նոյեմբերի 10-ին «Անի գրանդ հոթել» հյուրանոցում տեղի ունեցավ Ռամկավար Ազատական կուսակցության 4-րդ (27-րդ) ընդհանուր պատգամավորական ժողովը՝ համագումարը, որին մասնակցեցին գրանցված 130 պատգամավորներից 127-ը: Ժողովի օրակարգային գլխավոր հարցերից էին ՌԱԿ ատենապետի եւ Կենտրոնական վարչության ընտրությունները: ՌԱԿ պատգամավորական ժողովը փակ գաղտնի քվեարկության արդյունքում՝ 72 կողմ ձայնով ՌԱԿ ատենապետ ընտրեց Հրաչյա Իսկանդարի Կարապետյանին: ՌԱԿ պատգամավորական ժողովը ընտրեց ՌԱԿ Կենտրոնական վարչություն:

Կենտր. վարչության քաղաքական գործունեության վերաբերյալ շուտով տեղի կունենա մամլո ասուլիս, որի ընթացքում կլուսաբանվեն բոլոր տեսակետները:

**ՌԱԿ Կենտրոնական վարչություն**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Հայկական գործոնը չի կարող խուսափել աշխարհաքաղաքականությունից

Դատելով ներքաղաքական օրակարգերից, խորհրդարանի ու կառավարության նիստերի բովանդակությունից, հրապարակներում ու համալսարանների առջեւ անցկացվող բողոքի ցույցերից ու հրաժարականի պահանջներից, դատական անվերջանալի գործերից, հատկապես վարչապետի ջղաձիգ ճառերից ու ասֆալտաբանություններից, նաեւ լրատվամիջոցների հրապարակումներից, կարելի է կարծիք կազմել, որ աշխարհաքաղաքական բուռն զարգացումները շրջանցել են մեր երկիրը, եւ Հայաստանը գտնվում է գլոբալ խնդիրների լուսանցքներում՝ երջանիկ մեկուսացման, ավելի շուտ՝ ինքնամեկուսացման մեջ: Փոփոխվող աշխարհը կարծես մեզ ծանոթ է միայն մակերեսային դրսեւորումներով, եւ մենք, ազգովին, դեռեւս 100 տարով ետ ենք գտնվում մեր ամենաարդիական բանաստեղծի՝ Եղիշե Չարենցի գիտակցական մակարդակից (Հիշո՞ւմ եք՝ «Վաղո՜ւց է դարձել աշխարհը մի փոքրիկ, փոքրիկ փողոց»):

Մեր ներկա համարի 4-րդ էջում, ինչպես խոստացել էինք նախորդ համարում, թարգմանաբար ներկայացնում ենք հայտնի հրապարակախոս Երվանդ Ազատյանի հոդվածը Մ. Նահանգների կոնգրեսի ստորին պալատում Հայոց ցեղասպանության օրինագծի ընդունման հանգամանքների, կուլիսների հետեւում ծավալվող գործընթացների, միջինարեւելյան եւ հատկապես սիրիական թնջուկի մեջ հայկական գործոնի շահարկման եւ այլ երեւույթների մասին: Մինչ Հայաստանում բնականաբար գոհունակությամբ ընդունված օրինագծի հաջողության պատճառ էին համարվում գլխավորաբար ամերիկահայ լոբբիստների հետեւողական աշխատանքը եւ, թերեւս, դեմոկրատների հակամարտությունը նախագահ Թրամփի հետ, ինչպես նաեւ Թուրքիա-ԱՄՆ սրված հարաբերությունները, պարզվում է՝ բանաձեւի ընդունման գործում խառնված են եղել նաեւ տարածաշրջանային ու միջազգային տարբեր խաղացողներ՝ իրենց ուրույն շահերով: Ոչ թե հանուն Հայաստանի ու հայության, այլ ընդդեմ ա՛յս օրերի Թուրքիայի ու Էրդողանի արկածախնդիր քաղաքականության:

Եվ կարծես հաստատելու համար հայկական գործոնի կամա թե ակամա ներգրավումը աշխարհաքաղաքական առճակատումներում, ընդամենը մի քանի օր առաջ պատահեց Ղամիշլիի հայ կաթողիկե քահանայի ու նրա հոր սպանությունը, որի մանրամասնությունների ու հետեւանքների վերլուծության մեջ, ի տարբերություն մեզ, այս օրերին խորապես մխրճված են ռուսական լրատվամիջոցներն ու վերլուծաբանները: Նրանք բնավ չեն խուսափում, դարձյալ ի տարբերություն մեզ, այդ, ինչպես նաեւ նախորդ 8 տարիների ընթացքում Սիրիայում պատահած հակահայկական եւ ընդհանրապես հակաքրիստոնեական բազում ոճիրների վրա սեւեռվելուց եւ դրանք դիտարկելուց որպես Թուրքիայի թաքուն-բացահայտ քաղաքականությունը մեր եւ մեր բախտակիցների նկատմամբ, ինչպես կարելի է եզրակացնել կողքի սյունակներում համադրված ռուս վերլուծաբանների կարծիքներից:

Ավելին՝ դեռ երեկ, Վաշինգտոնում, նախագահներ Թրամփ-Էրդողան հանդիպման եւ դրան հետեւած մամուլի ասուլիսի ընթացքում, ինչպես մեր թերթի 3-րդ էջում տեղեկացնում է մեր թուրքագետ աշխատակիցը, հայտնապես բանակցության հարց է դարձել Հայոց ցեղասպանության ճանաչման թեման՝ Ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձեւի համատեքստում: Ու թեեւ մենք չլսեցինք ԱՄՆ նախագահի կարծիքը, փոխարենը մեկ անգամ եւս ծանոթացանք Էրդողանի փչոցներին՝ պատերազմ էր, երկուստեք եղան հազարավոր զոհեր, մեր արխիվները բաց են, ֆլան-ֆստան: Այս պարագայում էլ փաստորեն ոչ թե ցեղասպանության հարցի էությունն ու հետեւանքներն էին շոշափվում, այլ՝ այդ հարցի շրջանակներում հայկական գործոնի ժխտման խնդիրը թուրքերի ու թուրքամետների կողմից:

Այո, ուզենք թե չուզենք, մեզ ձեռնտու է թե ոչ, հայկական գործոնը առկա է եւ առկա է լինելու տարածաշրջանային հակադրությունների եւ հավասարումների, նաեւ՝ առաջին հերթին՝ Թուրքիայի ծավալապաշտական նկրտումների ու դրանց զսպման գործում, ներառյալ մեր հարցերի հարցի՝ Արցախի խնդրի կարգավորման խնդրում: Այս պայմաններում տեղին է հարցնել՝ Արցախը ավելի կարեւոր է Ադրբեջանի՞ համար, թե՞ Թուրքիայի: Ինձ թվում է՝ ավելի շուտ՝ Թուրքիայի, որի ծավալապաշտական ծրագրերի դիմաց նեղաշերտ Զանգեզուրի պատվարի նվաճումը հայկական հզոր Արցախի առկայության պայմաններում դառնում է անհաղթահարելի, եւ դրանով իսկ կարեւորվում է հայկական գործոնի աշխարհաքաղաքական դերը տարածաշրջանի քարտեզի փոփոխման-չփոփոխման կատաղի պայքարում:

Հիմնովին խախտելով Կարսի պայմանագրի մի քանի դրույթներ, Թուրքիան դե ֆակտո այժմ յուրացրել է Նախիջեւանի՝ իբր թե ինքնավար հանրապետությունը ու երազում է մեր սահմանները կտրել-անցնել ու միանալ «Մեծ Թուրանի» կրտսեր եղբորը՝ Ադրբեջանին եւ մյուսներին...

Ահա՛ թե ինչ նշանակություն ունի հայկական գործոնը տարածաշրջանի երկրների, մեծ խաղացողների եւ առաջին հերթին Թուրքիայի համար:

Այդ գործոնի դերի, պարտականությունների, պաշտպանության ու ամրության ամբողջական գիտակցումը նախապայման է հայկական գերիշխան պետության գոյատեւման ու զարգացման համար: Տասներորդական հարցերը պետք է դուրս մղվեն մեր իշխանությունների օրակարգից: Ինչպես մեր քաղաքական դասականն է ասել՝ «Պահն է լրջանալու»:

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

# Հայկական հարցը կրկին Մերձավոր Արեւելքում

*Քրիստոնյա փոքրամասնության վիճակի մասին*

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ



Սիրիայի Ղամիշլի քաղաքում նոյեմբերի 12-ին տեղի ունեցավ հայ կաթոլիկ համայնքի քահանա Տեր-Հովսեփ Պետոյանի եւ նրա հոր՝ Աբրահամի հուղարկավորությունը: Նրանք սպանվել էին նոյեմբերի 11-ին, երբ ավտոմեքենայով Դեր-Զոր էին գնում տեղի հայ կաթողիկե եկեղեցու վերականգնման աշխատանքների վիճակին ծանոթանալու: Ճշտված տեղեկությունների համաձայն, նրանց «Հայ կաթոլիկ եկեղեցի» մակագրությունը կրող ավտոմեքենային մոտեցել էին երկու մոտոցիկլիստներ, որոնք կրակ էին բացել: Ոճրագործության պատասխանատվությունը ստանձնել է «Իսլամական պետությունը»: Սպանությունը տեղի է ունեցել գրեթե նույն պահին, երբ Ղամիշլիի քրդական շրջանում պայթեցվել են ավտոմեքենաներ: Դրանցից մեկը պայթել է Քաղդեական կաթողիկե եկեղեցու առջեւ, այլ տեղեկությունների համաձայն՝ դա եղել է Հայ կաթողիկե եկեղեցու տաճար:

Կատարվում է հետաքննություն: Հռոմի Ֆրանցիսկոս պապը իր ցավակցությունն է հայտնել սիրիահայերին: Սիրիայի քաղաքացիական պատերազմի տարիներին, իհարկե, պատահել էին հոգեւորականների վրա հարձակման դեպքեր: Զոհերի թվում եղել էին մեկ հոլանդացի ճիզվիտ եւ մեկ ֆրանցիսկյան վանական, անհետ կորել էին մեկ իտալացի ճիզվիտ եւ մեկ ուղղափառ եպիսկոպոս: Ինչ վերաբերում է Հայ կաթողիկե եկեղեցուն, նա կորցրել էր կաթոլիկ հոգեւորական Միշել Կայալին, որին գերի էին վերցրել 2013-ի փետրվարին: Բայց այդ ժամանակ Սիրիայում «Իսլամական պետություն» դեռեւս գոյություն չուներ:

⇨11

# Ավարտվեց երկար սպասվող Թրամփ-Էրդողան հանդիպումը

*Դրա ավարտին հրավիրված մամուլի ասուլիսը կատարյալ խայտառակություն էր*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**Թուրքագետ**

Նոյեմբերի 12-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը պաշտոնական այցով ուղեւորվեց Վաշինգտոն: Հաջորդ օրը նրան Սպիտակ տանը ընդունեց ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը: Էրդողանի այցը, որին ուղեկցում էին արտգործնախարար Մեւլութ Չավուշօղլուն, պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը, պետգանձարանի եւ ֆինանսների նախարար Բերաթ Ալբայրաքը, նախագահի խոսնակ եւ գլխավոր խորհրդական Իբրահիմ Քալընն ու այլ գործիչներ, իրականացվում էր ամերիկյան կողմի հրավերով: Չնայած հրավերին՝ դա բուռն հակազդեցություն առաջ բերեց ԱՄՆ-ում: Հակազդեցության պարագայում խոսքը սոսկ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի մասին չէ, այլ ամերիկյան հեռուստատեսությունների, տպագիր մամուլի, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների: Թերեւս այդ առումով պատահական չէր Էրդողանի եւ նրա պատվիրակության իջեւանած հյուրանոցին հարող փողոցների փակումը բեռնատարներով, ինչը,որպես աննախադեպ երեւույթ, ավերի քան զարմացրել էր թուրք լրագրողներին:

Էրդողանը չափազանց մեծ կարեւորություն էր տալիս նոյեմբերի 13-ի այցին: Ռուսաստանը, Իրանը, Սիրիան, ինչպես նաեւ Սիրիայի քրդերը ուշադիր հետեւում էին դրան, Եվրոպական միությունը առաջնակարգ երկրների գլխավորությամբ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում, իսկ թուրքական քաղաքական շրջանակները՝ մտահոգություն ապրում, պատճառաբանելով դա ԱՄՆ-ում համատարած բնույթ ստացած հակաթուրքական տրամադրություններով:

⇨9



**Մեծ իրաբանցումներ՝ հիմնականում ոչնչից**

էջ 2,3



**Ռուսական ավանգարդի հայազգի փրկիչը. Նիկոլայ Խարջիեւ**

էջ Գ



**Գիտությունը եւ պետության ապագան**

էջ 3

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Էրտողանի նուէրը

### Հայ քահանայի սպանութեան առիթով

Էրտողանը ռմբակոծեց Սուրիոյ հիւսիս-արեւելեան քրտական շրջանները եւ այդ ընթացքին թիրախ դարձուց ու քանդեց ԻՊ-ի աւելի քան հազար ահաբեկիչներու կալանավայրը, որուն պատճառով բանտարկեալները ազատ արձակուեցան ու վերադարձան իրենց «մասնագիտութեան»...

Մարդասիրական առաքելութեամբ Տէր Զօրի մէջ գտնուող Գամիշլիի կաթողիկէ համայնքի քահանայ Յովսէփ Պետոյեան եւ իր հայրը սպաննուեցան, իրենց ինքնաշարժին վրայ արձակուած փամփուշտներէն: Այս միջադէպին հետեւեցաւ Գամիշլիի ռմբակոծումը, որուն պատճառով զոհ գացին վեց խաղաղ բնակիչներ:

Էրտողանը Արեւմուտքին սպառնաց իր մօտ գտնուող եւրոպացի իսլամիստներին վերադարձնել իրենց երկիրները, ուրկէ եկած ու միացած են ԻՊ-ին: Արդէն յայտարարուեցաւ, որ վեց ֆրանսացի ահաբեկիչներ պիտի ուղարկուին Ֆրանսա:

Այդ ահաբեկիչները եւ իր հողերուն վրայ գտնուող գաղթականներն ընդհանրապէս բաւական ազդեցիկ «զէնքեր» են, որոնց վերադարձումի սպառնալիքները լրջօրէն կը մտահոգեն Եւրոպան:

Պահ մը պատկերացնենք, որ Էրտողանը իր սպառնալիքներուն դէմ իր ակնկալած «հատուցումը» չստացաւ եւ այդ ծանր, բայց «շահաբեր» բեռը ուղարկեց Եւրոպա: Ի՞նչ կացութեան պիտի մատնուին զանոնք ակամայ ընդունած երկիրները: Գաղթականներու անտանելի բեռէն անջատ, իւրաքանչիւր երկիր, պարզ է, որ իր քաղաքացին, որ տարիներ առաջ երկիրը լքած ու միացած է այդ ահաբեկչական կազմակերպութեան, պիտի ընդունի, սակայն ինչպէ՞ս պիտի վարուի անոր հետ. պիտի հարցաքննէ, պիտի դատապարտէ ու պատժէ՞, պիտի ների՞. ի՞նչ պիտի ընէ: Անոնցմէ շատեր, շատ երիտասարդ, նոյնիսկ պատանի, հաւանաբար արկածախնդրութեան սիրոյն գացած ու միացած են ահաբեկիչներուն, հաւանաբար վերջը զղջացած, սակայն անոնց դասալքութիւնը ոչ միայն հակաօրինական է, այլեւ ծանրագոյն պատիժի սպառնալիքով եղած է: Իսկ իգական սեռի կամաւոր մասնակիցները, որոնք կամայ թէ ակամայ կենակցած են ահաբեկիչներու հետ եւ երեխաներ ալ ունեցած են, ի՞նչ պիտի ըլլայ անոնց վիճակը, եթէ անշուշտ անոնց Տաէշական հայրը չէ յաջողած արգիլել անոնց փախուստը:

Հեռատեսիլէն ցոյց կը տրուէր լրագրողի մը հանդիպումը այդ տեսակի ամուսնութիւններէն ծնած երեխաներու հետ, որոնք արդէն 6-7 տարեկան մանուկներ դարձած են: Խարտեաշ մազերով ու կապոյտ աչքերով մանուկի մը երբ լրագրողը հարցուց, թէ ո՞ւր տեղացի է, պզտիկը լեհ եմ ըսաւ, որմէ ետք տեսանք, որ իսլամ պահպանողական կիներու նման սեւերու մէջ փաթթուած կին մը անոր ձեռքէն քաշեց ու տարաւ, դժգոհ՝ եղածէն: Հաւանաբար հայրը, կամ մայրը լեհ է, որ երախան եւրոպացիի կը նմանի:

Եւ մարդու ուղեղին մէջ կը շարունակէ մրճահարել «ինչո՞ւ»-ներու տարափը: Մարդ Աստուծոյ, ի՞նչ գործ ունէիք այս կողմերը, չէի՞ք գիտեր թէ ո՞ւր կ'երթաք, ի՞նչ կազմակերպութեան կը միանաք: Գիտէիք, սակայն արկածախնդրութեան ծարա՞ւը ձեզ մղեց, թէ՞ խոստացուած դրամն ու վայելքը: Անմիտ երիտասարդութիւն, այս ձեւով դուք ձեր ձեռքերով չքանդեցի՞ք ձեր ապագան:

Հիմա, արդէն ազատութեան մէջ գտնուող ԻՊ-ականները կա՛մ Իրաք գացած են, կա՛մ Սուրիա մնացած ու վերամիացած իրենց կազմակերպութեան եւ արդէն վերսկսած իրենց ահաբեկչութիւններուն, քանի որ թատրաբեմէն Պաղտատիի չքացումէն ետք, նոր ղեկավարութիւնը անհրաժեշտաբար զարթօնք մը պիտի ապրի, շրջան մը բաւական թուլացումէ ու անգործութեան մատնուելէ ետք:

Էրտողանի նուէրը մարդկութեան: Ու կը շարունակեմ չհասկնալ Թուրքիոյ առեղծուածը, որուն մասին գրած էի քանի մը շաբաթ առաջ: Հիմա Թուրքիոյ առեղծուածին կողքին Էրտողան առեղծուածն է ամենաանհասկնալին... Բոլոր կողմերէն փչող քամիներուն ի հեճուկս, այս մարդը աննկուն կանգնած է ու կքելու ալ նպատակ չունի:

Զօրաւորը ի՞նք է, թէ՞ շուրջիններն են տկար:

## Մեծ հրարանցումներ՝ հիմնականում ոչնչից

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Զարմացած եմ՝ Լավրովն է գալիս-գնում, Դեր Զորում իսլամականները հայ կաթողիկե եկեղեցու քահանային ու նրա հորն են սպանում, պետական նշանակության այլ կարեւոր իրադարձություններ են տեղի ունենում՝ հայոց խորհրդարանը երկու օր խռված է Հայաստանում չեղած բանի՝ մեր Սահմանադրությամբ իսկ արգելված միասեռական ընտանիքի կողմից երեխա որդեգրելուց փրկող օրինագծի հարուցած սկանդալի ծանծաղուտը, որին (խռվելուն) հավանաբար կոչված էր ԲՀԿ-ական Գեւորգ Պետրոսյանի օրինագիծը, այն է՝ հնարավորինս մեծ աղմուկ բարձրացնել ոչնչից: Եթե ինչ-որ մեկի սցենարը կար՝ դրսում (փողոցում) ու ներսում (խորհրդարանում) միաժամանակյա մեծ աղմուկ բարձրացնել մեր ժողովրդի համար զգայուն՝ազգային ավանդույթների դեմ «ոտնձգության» մոտիվներով, որին, առանց խորանալու բուն նպատակների կամ շարժառիթների մեջ, սովորաբար արձագանքում է հայ հանրության զգալի մասը՝ դա սցենարիստին հաջողվեց: Բայց միթե հայերս ունե՞նք այդպիսի հարց, չնայած միշտ էլ մի քանի շեղված ու հիվանդ, զոր ամբողջ զորինչքան ինչ- որ աննշան թվով առանձնյակներ հանրության մեջ եղել են: Ու անգամ Վարդանիկը (Վարդան Ղուկասյանը) գիտե հազար յոթ հարյուր տարի առաջ Պապ թագավորի՝ իբր այդ կարգի հակումների մասին: Ու ոչինչ, այդու մեր ժողովուրդը մնացել է ավանդական ընտանիքի կրողը, իր բոլոր ավանդույթներն անվթար հասցրել է մեր օրեր եւ 2020 թվական: Եւ հիմա էլ,մեր իսկ Սահմանադրությամբ, հայկական ընտանիքը տղամարդու եւ կնոջ միությունն է, եւ ոչ թե գենդերային, ինչ կարիք կա այդպիսի նախաձեռնություններով մի ավելորդ անգամ համասեռամոլության որակյալ գովազդ կազմակերպել (գիտեք չէ՝ հակագովազդն ամենաազդեցիկ գովազդն է), իրար խառնել էլ Ֆրոյդ ու Յունգ, էլ բռնության դեմ «հայկական-ժողովրդական օրենք» ընդունելու միտք երկնել, էլ գեյ ու տղամարդ, էլ ծիծակ կոշիկ, գիտահետազոտակա՞ն, ֆլանֆստան: Դուք օրենսդի՞ր եք, թե բռնության շեղումների դեմ պայքարող առողջապահական հիմնարկ:

Առհասարակ՝ ի՞նչ է կատարվում խորհրդարանում, ինչո՞ւ են պատգամավոր ու լրագրող սեռական, գողական, գողականների ու քրեական «ենթամշակույթի» մասին թեմաները հաճույքով ծամում, ինչո՞ւ է խորհրդարանական առօրյան հագեցած հակագեղագիտական գոռգոռոցով, ու բանն արդեն հասել է նրան, որ տապալվում է խորհրդարանի դերի բարձրացմանն ուղղված նախագիծը՝ անընդունելի պատճառաբանություններով: Ու այդ պատճառով գուցե այս երեքշաբթի Ազգային ժողովի «տղամարդկային» սրացումները երեւի հիմնական պատճառ դարձան, որ չորեքշաբթի տապալվեց պետական նշանակության՝ ԱԺ կանոնակարգ-օրենքը լրացնող այն նախագծի ընդունումը, որով խորհրդարանական հանրապետության թիվ մեկ պաշտոնյան (գոնե օրենսդրությամբ)՝ ԱԺ նախագահը ներկա կլիներ Ազգային անվտանգության խորհրդի նիստերին: Սա նույնն է՝ խմբային շահերը գերադասել պետական նշանակության հարցից, եւ պատերազմ հայտարարելու մասին որոշմանը օրենսդրորեն հավանություն տալու լիազորություն ունեցող ԱԺ-ին, այդպիսով, զրկել ԱԱԽ- ում պետության վերաբերյալ կարեւորագույն որոշումների ընդունմանը ներկա լինելուց:

Չունենամ այսպիսի խորհրդարանական ընդդիմություն, որն ասում է՝թող խմբակցության ղեկավարներն էլ ներկա լինեն ԱԱԽ -ում՝ քվեարկենք, կամ անձնավորում է քվեարկությունը՝ նախորդ օրը սեփական կուսակցին ուղղված Արարատ Միրզոյանի կոշտ



վերաբերմունքին ի պատասխան: Լավ, չեք տարբերո՞ւմ գլխավորը երկրորդականից, ԱԺ-ն որ նվաստացնում եք եւ ԱԱԽ-ում անտեսում են՝ ձեզ էլ հետն են անտեսում...:

Ի դեմ՝ մեզ հետ զրույցում «Իմ քայլի» պատգամավոր **Հերիքնազ Տիգրանյանը**, պատասխանելով մեր այն հարցին, թե ինչու իշխող խմբակցության բացակա եւ երկրում չգտնվող պատգամավորները, ուրիշ անգամների պես, գրավոր չէին հավաստել իրենց քվեն՝ մեկնելուց առաջ, պատասխանեց, թե իրենց համար անսպասելի է եղել ընդդիմադիրների «դեմ» քվեարկելը կամ չմասնակցելը քվեարկությանը, քանի որ դրա համար պատճառ չի եղել: Իսկ իմքայլականներից ոմանց՝ առավոտյան գրանցվելն ու հետո չմասնակցե՞լը քվեարկությանը նույնպես անսպասելի՞ էր, որը խոսում է միմյանց դեմ տրամադրված իշխանական խմբակցության մի շարք թեւերի առկայության մասին: Հավանաբար օրինագիծը մի անգամ եւս կբերվի խորհրդարան՝ միգուցե այս անգամ անձնավորված հակասությունները հարթելուց հետո:

### Երթացուցարարներ-կրթության նախարար Արայիկ Հարությունյան դիմակայության մասով

Դիմակայությունը հասել է իր բարձրակետին: Կրթության մասին օրենքի նախագծից պրոյեկտել այդպիսի անհաշտ դիմակայություն՝ անհավանական է ուղղակի, եթե խորքային այլ պատճառների մասին հայեցողը գլխի չընկներ, ու բազմամոտիվացված ցուցարարների խայտաբղետությունը առանց մեծ ջանքի տեսանելի չլիներ: Կողմերին ասում ենք՝ կանգ առեք, եւ մի քայլ հետ գնացեք ձեր գրաված դիրքերից երկու կողմերդ էլ: Եթե դա պայքար է հայ արժեքների համար, եւ ի վերջո երկրի համար, ինչպես ցուցարարներն են պնդում, եւ կրթության բարեփոխման համար, ինչպես Արայիկ Հարությունյանն է պնդում, շատ զարմանալի է բանակցությունների եւ քննարկումների սեղանին չնստելու կողմերի կոշտությունը: Հո տղայական «ռազբորկա» չէ, ուզած նախագիծ կարելի է քննարկել եւ միմյանց համոզել սխալ կամ ճիշտ լինելու մեջ, անգամ եւ հատկապես՝ եթե այդ բոլորի տակ քաղաքական դրդապատճառներ կան: Եւ համալսարանի դասախոսներին եւ հեղինակավոր մասնագետներին կուզենայի համոզիչ խնդրել՝ մի թաքնվեք կյանք չտեսած եւ զգացմունքային ուսանողների թիկունքում, այլ փորձեք հանդես գալ նախագիծը վերախմբագրելու ձեր հիմնավորված առաջարկով: Մանավանդ՝ փոխնախարար Ա. Անափիոսյանը մի օր առաջ էլ շեշտել էր՝ քննարկման պատրաստ են, եւ Ա. Հարությունյանն էլ պետք է հետ կանգնի իր անառարկելի տոնից (իսկ միգուցե Ա. Հարությունյանի շրջապատում էլ կան նրա պաշտոնին հավակնողներ՝ դա էլ չպետք է բացառել ըստ որոշ ասեկոսեների): Ի վերջո պետության շահը պահանջում է այդպիսի խնդիրների՝ հանգիստ-հավասարակշռված պայմաններում լուծում, եւ ոչ թե անիմաստ հարայ-հրոց եւ հրարանցում: Որոշների՝ խառնաշփոթ (մոդայիկ բառով՝ բոլոլա) սարքելու ցանկությունը չհաշված:

### «Բոլոլա» բառի մասին

Սիրելի եւ անմոռանալի քաղաքական գործիչներ, հարգելի լրագրողներ, մի օգտագործեք այդ բարբառային ու ոչ հաջողված բառը՝ չափազանցություն, հրարանցում, խառնաշփոթ, հարայ-հրոց սիրուն հայկական բառերի փոխարեն, անգամ ոչ հայեցի սկանդալն ավելի լավ է, քան «բոլոլան», որից խաշի հոտ է գալիս: Երկու-երեք տասնամյակ մեր կառկառուն լրագրողների շնորհիվ «հաթաթա» թուրքախառը բառը դուրս չէր գալիս քաղաքական գործիչների բառապաշարից, հիմա էլ «բոլոլան»: Ակամա ուզում ես քրքրել այդ բառն օգտագործող քաղաքական գործիչների կենսագրությունը, ծագումը, ծննդավայրը, որ հասկանաս՝ ինչու խաշահոտ, սխտորահոտ «բոլոլա», եւ ոչ թե հայեցի հարայ-հրոց, խառնաշփոթ եւ մի շարք այլ հոմանիշներ:

### Լավրովի այցի արձագանքը

Լավրովի այցի ընթացքում հնչած խոսքից Արցախի հարցի կարգավորման նոր տարբերակ դուրս բերելու կասկածներին ի պատասխան վարչապետ **Փաշինյանը** կառավարություն-ԱԺ հարցուպատասխանի ժամանակ փաստորեն մի թեթեւ քննության ենթարկեց Մադրիդյան սկզբունքները՝ մի օրինակի վրա եզրակացնելով, որ եթե Մադրիդյան սկզբունքներով կարգավորումը լուծման ճանապարհ է՝ նախ պետք է հասկանանք, թե ուր է տանում այդ ճանապարհը, հասցնելո՞ւ է այն մեր ուզած կետին, ու նոր որոշենք՝ գնում ենք այդ ճանապարհով, թե՞ ոչ:

⇨3

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 3



# Գիտությունը եւ պետության ապագան

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
*Պատմական գիտությունների թեկնածու*

Գիտությունը հիմնարար նշանակություն ունի պետության զարգացման, դրա կայացման եւ ապագայի տեսլականի միտումները հասկանալու համար: Պետությունը, որը ուշադրություն չի դարձնում գիտության վրա, նման է ոչ լիարժեք պետական ինչ-որ կազմավորման, որը որպես կանոն գտնվում է այս կամ այն կայսրության վերահսկողության ներքո:

Այսինքն կիսագաղութային կազմավորումներն են, որ անուշադրության են մատնում գիտությունը, քանի որ չունեն համապատասխան մշակույթ, ավանդույթ, եւ որ ավելի կարեւորն է՝ չեն հասկանում գիտության ֆինանսավորման իմաստը: Անկեղծ լինենք, աշխարհում կան շատ պետություններ, որոնք գոյատեւում են առանց գիտության եւ կարծես թե դրանց ոչինչ չի պատահում ու դեռ կան:

Սակայն ցավալի իրականությունը այն է, որ առանց գիտության գոյատեւող պետությունները չունեն ապագա, չեն կարող ստեղծել զարգացման սեփական ռազմավարությունը եւ վերլուծական միտքը: Այսինքն մենք ականատեսն ենք առանց ուղեղի պետական կազմավորումների գոյությանը, որոնց նույնիսկ պետություն չենք կարող անվանել, քանի որ դրանց ապագան ամբողջովին կախված է նրանց հանդեպ այլ երկրների մտավոր «բարյացակամությունից»:

«**Ազգ**» օրաթերթի 22-րդ համարում, «Գիտության դերը պետությունների զարգացման հիմնախնդիրներում եվ դրա արդի միտումները» (09-06-2017) հոդվածում առիթ եղել է անդրադառնալու այս թեմային, նշելով, որ ժամանակակից աշխարհում պետության զարգացման դինամիկան ուղիղ համեմատական է այդ երկրում գիտությանը տրված ֆինանսավորումից: Խոսքը առաջին հերթին հենց պետության կողմից հատկացվող ֆինանսական հատկացումներին է վերաբերում, քանի որ այդ միջոցները առաջին հերթին տրվում են հենց հիմնարար գիտությանը, այլ ոչ կիրառականին:

Հոդվածում բերված աղյուսակները հստակ կերպով ցույց են տալիս, որ ֆինանսավորման ամենաբարձր ցուցանիշը ունեցող պետությունները՝ Հարավային Կորեան, Իսրայելը, Չինաստանը, որտեղ գիտությանն է տրամադրվում ՀՆԱ-ի մոտ 3,8-4%-ը, այսօր աշխարհի ամենաարագ զարգացող պետություններն են: Հետեւաբար պետության զարգացման հիմքում հենց գիտությունն է, որը նաեւ պետության ինքնիշխանության կարեւորագույն պայմաններից մեկն է:

Այսինքն, նորանկախ պետություններում ոչնչացնելով գիտությունը՝ մեծ տերությունները նպաստում են այդ երկրներում ինքնիշխանության կործանմանը եւ նրանց գիտական, տեխնիկական ու մտավոր կախվածության խորացմանը այլ պետություններից: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նույն իրավիճակը ստեղծվեց նաեւ ՀՀ-ում, որտեղ սիստեմատիկաբար սկսվեց ոչնչացվել գիտությունը եւ նույնիսկ հարցականի տակ դրվեց Գիտությունների ազգային ակադեմիայի գոյությունը:



Իրավիճակը մի փոքր կարգավորվեց 2000-ականների սկզբին, երբ օրենք ընդունվեց («Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության մասին») գիտության ֆինանսավորման մասին, որի նպատակն էր կասեցնել գիտության վերջնական կործանումը: Օրենքով նախատեսվում էր, որ գիտության ֆինանսավորումը ամեն տարի պետք է ավելացվի պետական բյուջեի նախորդ տարվա եկամտի աճին համապատասխան:

Օրենքի այս պահանջը, որոշակի շեղումներով, ամեն տարի իրականացվել է, եւ չնայած ֆինանսավորման ցածր տոկոսադրույքի՝ ՀՆԱ-ի մոտ 0,24-0,25%-ի, այն պահպանվում էր, ինչը հնարավորություն էր տալիս եթե ոչ զարգացնել, գոնե պահպանել այն, ինչը ունեինք: Հանուն ճշմարտության սակայն նշենք, որ պահպանման այս «քաղաքականությունը» իր մեջ գիտությունը կամաց-կամաց «մաշելու» տարրեր էր պարունակում:

Գիտությունը հնարավոր չէ պահպանել, այն կարելի է միմիայն զարգացնել, երբ այն դադարում է զարգանալ, սկսվում է գիտության լճացման-ոչնչացման ժամանակաշրջանը, իսկ դրա համար հարկավոր է, որ պետությունը իր վրա վերցնի գիտության, հատկապես խոսքը հիմնարար գիտության մասին է, ֆինանսավորումը: Չնայած ֆինանսավորման ցածր մակարդակի, պետք է շեշտել, որ այնուամենայնիվ հայ գիտության արդյունավետությունը միշտ էլ բարձր է եղել համեմատած հարեւան պետությունների:

ՀՀ-ում տեղի ունեցած այսպես կոչված «թավշյա հեղափոխությունից» հետո գիտության իրավիճակը էլ ավելի բարդացավ: Ներկա իշխանությունները չունեն ՀՀ-ում գիտության զարգացման հստակ տեսլական, իսկ այն քայլերը, որոնք կատարվում են, միայն մտահոգիչ են:

Մասնավորապես մեկը մյուսի հետեւից դադարեցվեցին ուղեղային կենտրոնների (Think Tank) ֆինանսավորումը, կասեցվեց ոչ միայն «Նորավանք» հիմնադրամի գործունեությունը, այլեւ Ռազմավարական հետազոտությունների եւ նորարարության կենտրոնը: Եթե առաջինը ֆինանսավորվում էր պետության կողմից, ապա երկրորդի հովանավորը գործարար Ռուբեն Վարդանյանն էր:

Ուղեղային կենտրոնների կասեցումից հետո սկսվեցին տարբեր տիպի մշակումներ, որոնք իրականացվում են ԿԳՍՄ-ի ներսում, Գիտությունների ազգային ակադեմիայի լուծարման, մասնավորապես առաջարկվում է վերջինիս համակարգում գործող ինստիտուտների միացումը տարբեր համալսարանների հետ: Սա նշանակում է, որ այս ծրագրերի իրականացման հարցում մենք գնում ենք Վրաստանի ճանապարհով, որը լուծարեց իր Ազգային ակադեմիան եւ հետո միայն հասկանալով կատարած սխալը, փորձում է այն վերականգնել:

ՀՀ-ում սկսված գիտության եւ կրթության «բարեփոխումների» կիզակետում չգիտես ինչու հայտնվել են հենց հայագիտական առարկաները՝ Հայոց պատմություն, լեզու, եկեղեցու պատմություն եւ այլն: Ընդհանրապես 2020թ. բյուջեում գիտությանը՝ տրամադրվելիք գումարը կազմում է մոտ 13 մլրդ դրամ գումար, ինչը համապատասխանում է 2016թ ցուցանիշին:

Այսինքն, չնայած հնչեցվող տնտեսական աճի մասին հայտարարություններին, գիտությանը հատկացվելիք գումարները չեն ավելանում, ինչը նաեւ գիտության մասին գործող օրենքի խախտում է: Գործ ունենք մի կառավարության հետ, որը, ինչպես նշեցի, ոչ միայն չունի գիտության զարգացման ռազմավարություն, այլեւ իր քայլերով նպաստում է նույն այդ գիտության թուլացմանը եւ ոչնչացմանը: Այս քաղաքականությունը պետք է կասեցվի եւ դրա գնահատականը պետք է հնչի հնարավորինս բարձրաձայն:

# Մեծ իրարանցումներ՝ հիմնականում ոչնչից

⇨2 Իսկ Մադրիդյան սկզբունքների բոլոր պարամետրերը մեզ համար թափանցիկ չեն, ըստ վարչապետի, դրա համար էլ դժվար է պատասխան ունենալ այն հարցին՝ թե այդ սկզբունքներն ընդունում ենք որպես հիմք, թե՞ ոչ: Եւ եթե Մադրիդյան սկզբունքներում ինչ-որ մեկն ինչ -որ մեկին խաբում է, այնտեղ պրոբլեմ կա՝ մենք չենք ուզում ինչ- որ մեկին խաբել:

Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Լավրովյան այն մտքերին, թե ժամանակի ռուսական կողմը զգուշացրել է, որ Թուրքիան Արցախն է այդ հարաբերությունների համար նախապայման համարելու, բայց նաեւ այժմ չի կարելի բացառել այդ հարաբերությունների որեւէ նոր գեներացիա, երբ որ հարմար մթնոլորտ լինի, վարչապետը պատասխանեց.«Տարածաշրջանային իրավիճակն ու մթնոլորտը ցույց են տալիս, որ այդտեղ փետրվարն է, եւ պետք չէ իրերը հավաքել ու գնալ լողալու, որովհետեւ կարող է մրսենք ու թոքաբորբ ստանանք, համաձայն եմ Լավրովի մտքի հետ, որ պետք է ճիշտ համատեքստում լինել», ասել է նա՝ պատկերավոր նկարագրելով հուլիսին ու փետրվարին Սեւանում լողալու մտադրությունների տարբերությունը: Դե իսկ ԱՄՆ հանրապետական սենատոր Լինդսի Գրեմի՝ Էրդողանի հետ հանդիպումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունման արգելափակումը Սենատում այդ անբարենպաստ մթնոլորտի եւս մի դրսեւորում է:

Ընդհանուր առմամբ Ֆրանսիայում այցի ընթացքում արված արցախյան թեմայով փաշինյանական հայտարարություններում անհանգստանալու բան չկա, թե՝ հայ իրականության մեջ չկա բանավեճ ղարաբաղյան հարցի վերաբերյալ, Հայաստանի եւ Արցախի տեսակետները նույնական են, եւ շուտով կհասնենք այն վիճակին, երբ ողջ հայության դիրքորոշումները Արցախի հարցի կարգավորման վերաբերյալ նույնական կլինեն: Ինձ համար մասնավորապես այս մոտեցումը թեեւ հուսադրող է, բայց անհասկանալին Նիկոլ Փաշինյանի կողմից մշտապես բարձրաձայնվող այն բանաձեւն է, թե լուծումը պետք է ընդունելի լինի Արցախի, Հայաստանի եւ Ադրբեջանի համար միաժամանակ: Բայց միթե հնարավոր է մի բան, որ պարզապես հնարավոր չէ: Այն՝ ինչ երազում է Ադրբեջանը՝ մենք պարզապես ընդունել չենք կարող , իսկ այն ինչ ամրագրվել է մեր ռազմական հաղթանակով՝ Ադրբեջանի համար երբեք ընդունելի չի լինի:

# Ո՞ր երկրում եք ապրում դուք

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Ի շարս բազմաթիվ որոշումների, վերջերս իմացանք, որ նախարար Արայիկ Հարությունյանը կասկածի տակ է դրել նաեւ «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի դպրոցական ծրագիր լինելու կարեւորությունը:

Ինչպես գիտենք, տարիներ շարունակ ներհայաստանյան մի շարք հասարակական թափթփուկներ, որոնցից շատերը սնվում են «բարի համբավ» ունեցող Սորոսյան հիմնադրամից, պայքարել են Հայաստանի, իրենց ձեւակերպմամբ, ռազմականացման դեմ: Իհարկե, բթամտություն է՝ պայքարել մի երկրի ռազմականացման դեմ, որի հարեւանը պարբերաբար զինված հարձակումներ է գործում եւ սպառնում լայնածավալ պատերազմ սկսել, բայց, ինչպես Թումանյանն է ասում. «...ի՞նչ հասկացնես բըռի չոբանին»:

Այդ երկարատեւ պայքարի արդյունքն էր նաեւ, որ վերջերս լուծարվեց ՊՆ ենթակայության տակ գտնվող «Փոքր Մհեր» կրթահամալիրը, այդ նույն պայքարի արդյունքում էր, որ սեւ ամպեր էին կուտակվել նաեւ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի գլխին, որը գրվեց մի խումբ նվիրյալ հայորդիների ջանքերով:

Արդեն ոչ մեկիս համար գաղտնիք չէ, որ Արայիկ Հարությունյանը շոկոլադե հարաբերություններ ունի Սորոսյան հիմնադրամի շահառուների հետ, իսկ այդ հիմնադրամը, ինչպես բացահայտվեց, բանակներ ու ազգային գոյության համակարգեր քանդելուն է ուղղված, եւ ՆԶՊ առարկայի դեմ պլանավորվող այս դիվերսիան իրականացվում է նաեւ ի հաճություն սորոսահպատակ քաղաքացիների:

Ժամանակն է, որ ինքներս մեզ հարց տանք՝ ո՞ւր պիտի գնանք եւ ո՞ւր են փորձում տանել մեզ: Մինչ մեր երկրում ոմանք փորձում են ամեն կերպ ապառազմականացնել մեզ, հարեւան Ադրբեջանն իր դպրոցներում խստացված ռեժիմով ռազմական դասեր է անցկացնում, աշակերտներից ոմանք նույն ռեժիմով հայերեն են սովորում, մի՞թե այս ամենը մեզ չի հուշում, որ օրորոցից վերկացողն արդեն պետք է վարժվի զենքին:

Բանակում չծառայած, ռազմական գործից անտեղյակ նախարարն ի՞նչ հիմքով է եզրակացրել, որ 3 տարի պահանջող ծրագիրը կարելի է երեք շաբաթում յուրացնել: Հուսամ՝ նախարարը չի մոռացել, որ ՆԶՊ-ն իր մեջ ներառում է նաեւ քաղպաշտպանության հիմունքներ, որը շատ կարեւոր է Ադրբեջանի պես հարեւան ու սեյսմիկ անկայուն տարածք ունեցող ՀՀ բնակչի համար:

Եթե մեր նախարարը գաղափար ունի «Ռազմական դոկտրին» հասկացության մասին, ապա պետք է իմանար, որ այն ռազմական անվտանգության պայմաններում պետության որդեգրած քաղաքականության հռչակագիրն է, որը փոփոխվում է քաղաքական զարգացումներին, նոր գիտական ձեռքբերումներին ու հասարակարգային, արտադրողական ուժերի զարգացումներին զուգահեռ, իսկ ՀՀ ռազմական դոկտրինի սահմանումը հետեւյալն է,

«ՀՀ ռազմական անվտանգության ապահովման, ռազմական, քաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական եւ ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակարգերի համախումբն է»: Արդեն պարզ է, չէ՞, որ ՆԶՊ-ն առարկան դպրոցից դուրս բերելն աղերս չունի այս դոկտրինի հետ:

*Հ.Գ.- Բացի վերոնշյալից՝ կրթական ծրագրից ՆԶՊ-ի դուրսբերումը հակասում է նաեւ ՀՀ կառավարության 1999թ. օգոստոսի 25-ի որոշմանը:*

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 4



# Տեսանելի եւ անտեսանելի գործոններ, որոնք խթանեցին ճանաչումը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ

Վերջապես, ԱՄՆ-ի կառավարության բարձրագույն օրենսդրական մարմնի՝ կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը քվեների ջախջախիչ մեծամասնությամբ (405-11) ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող HR 296 բանաձեւը: Ավելի քան 35 տագնապալի տարիներ հայերիս հույսերը կախված էին Ամերիկայի եւ Թուրքիայի միջեւ անկայուն քաղաքական հարաբերություններից: Վերջինիս շարունակական սպառնալիքներն ու պարծենկոտ նկրտումները, ինչպես նաեւ Միացյալ Նահանգների երկարամյա անվճռականությունը հող նախապատրաստեցին ճանաչման համար եւ այն դարձրին ավելի գնահատելի:

Բանաձեւի ընդունման նշանակությունը կարեւորվում է մասնավորապես իր համապարփակ բովանդակությամբ: Այն ի մի է բերում նախկին բոլոր օրենսդրական եւ հիշատակման որոշումները՝ ներառյալ կառավարության 1951 թվի մայիսի 28-ի որոշումը՝ ուղղված արդարադատության միջազգային դատարանին, նախագահ Ռեյգանի 4838 հայտարարությունը, 1975 թվի ապրիլի 8-ի Ներկայացուցիչների պալատի թիվ 148 համատեղ բանաձեւը, ինչպես նաեւ այն փաստը, որ հիսուն նահանգներից 49-ը, աշխարհի երկրներից 30-ը եւ Եվրոմիությունը արդեն իսկ ընդունել են եւ ճանաչել ցեղասպանությունը: Այս բոլորը ընդարձակում են կատարվածի քաղաքական եւ օրինական սահմանները եւ հասցնում այն համաշխարհային մակարդակի:

Չափազանց ազդեցիկ էր նաեւ տեսնել, թե ինչպես էին մեկը մյուսի ետեւից պատգամավորները վկայություն տալիս եւ փաստարկում հօգուտ բանաձեւի ընդունման, մեջբերելով դեսպան Հենրի Մորգենթաուի եւ հյուպատոս Լեսլի Դեյվիսի («Սպանդի նահանգը» գրքի հեղինակ) խոսքերը, երբեմն նաեւ հուզական ինչերանգներով:

Քաղաքական վերլուծաբաններն ու ժողովրդական զանգվածները փորձում են հասկանալ, թե ինչո՞ւ 35 տարի առկախ մնացած բանաձեւն, այնուամենայնիվ, ընդունվեց հիմա, այս ժամանակահատվածում: Բացատրություններից մեկն այն է, որ երկնքի աստղերը աննախադեպ համամտություն էին դրսեւորել դրական արդյունքի հասնելու համար: Այդ աստղերն, անշուշտ, քաղաքական այն գործոններն են, որոնք գրեթե միշտ հակասական դիրքերում են եղել Կոնգրեսի իրենց բարեկամներին եւ հակառակորդներին համոզելու, որ «առայժմ ժամանակը չի ընդունելու նման որոշում, որպեսզի չնեղացնենք մեր դաշնակից Թուրքիային»:

Բայց Ադամ Շիֆն իր խոսքում նշեց, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու ժամանակը միշտ էլ ճիշտ է: Անցյալում շատ անգամներ բանաձեւը շատ մոտ է եղել ընդունվելու, բայց մի անգամ պալատի խոսնակ Նենսի Պելոսին է այն հետաձգել, մեկ ուրիշ անգամ Սպիտակ տունն է (Բիլ Քլինթոնի օրոք) միջամտել հանրապետական խոսնակ Դենիս Հաստերտի գործերին: Եվ չնայած Քլինթոնն ու Հաստերտը հակադիր կարծիքներ են ունեցել գրեթե բոլոր հարցերի վերաբերյալ, Հայոց ցեղասպանության բանաձեւը օրակարգ չբերելու հարցում նրանք համակարծիք են եղել: Հետագայում Հաստերտը դիմակազերծվեց եւ պարզվեց, որ կոռումպացված է եւ անունը թուրքական վճարացուցակներում է ընդգրկված:

ՄԱԿ-ում նախագահ Օբամայի կարգադրությամբ դեսպան նշանակված Սամանթա Փաուերը նույնպես կապ ունի այս պատմության հետ: Որպես մարդասեր, նա հայկական համայնքին սիրաշահել էր հրատարակելով իր «Խնդիրը՝ դժոխքից: Ամերիկան եւ Ցեղասպանության դարը» ցնցող գիրքը Հոլոքոստի, Հայոց եւ Կամբոջական ցեղասպանությունների մասին: Այդ գիրքը ճանապարհ հարթեց, որ նա մուտք գործի Սպիտակ տուն, հակառակ, որ որպես մրցակից ուներ մեկ այլ ուժեղ կին՝ հանձին Հիլարի Քլինթոնի:



Փաուերը նամակով հավաստիացրել էր հայկական համայնքին, որ նախագահի ընտրվելու դեպքում Բարաք Օբաման կճանաչի Հայոց ցեղասպանությունը, ինչը իհարկե սուտ դուրս եկավ:

Նա ուշացումով փորձում է արդարանալ հիմա, «Նյու Յորք Թայմսի» էջերում 2019-ի հոկտեմբերի 29-ին կարծիք հայտնելով. «Ես գրել եմ Հայոց ցեղասպանության մասին եւ պաշտպանել դրա ճանաչումը, նույնիսկ (թեեւ անհաջող), երբ ես Օբամայի վարչակազմի անդամ էի: Ես ամերիկահայերի հետ եմ եղել հիշատակի բազմաթիվ միջոցառումների ժամանակ»:

Հաշվի առնելով ռեալպոլիտիկի մաքիավելիական բնույթը, հայերս գուցե կարող ենք ներել Փաուերի զանցանքը, չնայած «Ջերուսալեմ փոստ-ի» 2019-ի նոյեմբերի 5-ի համարում հրեա ռաբբի Շմուլի Բոտիչը արդեն խստագույնս դատապարտել է նրան իր արարքների համար:

Այո, շատ գործոններ նպաստեցին բանաձեւի ընդունմանը, դրանցից ոմանք բացահայտ են, մյուսները՝ ոչ այնքան նշմարելի: Անշուշտ, երկու քարոզչական հաստատությունները՝ Ամերիկայի հայ ազգային (Հայ դատի) գրասենյակը եւ Ամերիկայի Հայկական համագումարը անխոնջ պայքար են մղել լուսաբանելու օրենսդիրներին եւ զորակոչելու իրենց ուժերին: Բայց այս կառույցները նախկինում էլ անդուլ աշխատանք են տարել, առանց հաջողության հասնելու: Փաստն այն է, որ քաղաքական այլ զարգացումներ եկան ամրապնդելու նրանց գործունեությունը եւ ապահովելու հաջողությունը: Դրանցից մեկը ամերիկա-թուրքական հարաբերությունների վատթարացումն էր:

Թուրքիայի ներսում իրականացվող բռնությունները ճիշտ է որոշակի վնաս հասցրեցին երկրին, բայց նախագահ Էրդողանի ամբարտավան կեցվածքն ու Սպիտակ տան հասցեին ձեռնոց նետելն էր, որ կացությունը թեժացրեց: Սիրիայի տարածքում «անվտանգության գոտի» ստեղծելու մարմաջով տարված, Անկարան սկսեց կոտորել քրդերին, ներառյալ YPG զորամիավորումների մարտիկներին, որոնք ԱՄՆ-ի զորքերի կողքին քաջաբար կռվելով պարտության էին մատնել ԻՊ-ին: Սա զայրացրեց ամերիկյան հասարակությանը եւ անշուշտ նախագահ Թրամփին, որ սակայն երեխայական պնդումների դիմելով սկսեց անտեսել քրդերի նպաստը: Նա 24 ժամվա ընթացքում մեկ պատժամիջոցներ կիրառեց Թուրքիայի դեմ, մեկ էլ չեղյալ հայտարարեց դրանց կիրառումը, բայց քվեարկության օրը Հայոց ցեղասպանությունը ճանաչելուն զուգահեռ Ներկայացուցիչների պալատը համատեղ որոշմամբ եւ դարձյալ ջախջախիչ մեծամասնությամբ ընդունեց Թուրքիայի դեմ ի՛ր պատժամիջոցները կիրառելու որոշումը:

Նշեցինք, որ որոշակի գործոնների համակցությունն էր նպաստել բանաձեւի ընդունմանը: Սակայն հարկ է ընդգծել, որ յուրաքանչյուր գործոն իր ուրույն զորությունն ուներ: Առաջին հերթին, դա ամերիկա-թրքական հարաբերությունների վատթարացումն էր եւ ՆԱՏՕ-ին շրջանցելով Ռուսաստանից ծանր հրթիռային համակարգ ձեռք բերելու Թուրքիայի մարտահրավերը: Երկրորդ գործոնը թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացումն էր:

Նախագահ Էրդողանը արբեցած է իշխանությամբ: Ոչ ոք չի կարող դեմ գնալ երկրի ներսում նրա ձեռնարկած բռնություններին, բայց նրա ամբարտավանությունն այն աստիճան է կուրացրել իրեն, որ արտաքին քաղաքականության բնագավառում հատել-անցել է բազմաթիվ կարմիր գծեր:

Հեգնական կարող է թվալ, բայց բանաձեւի ընդունումը փաստորեն Էրդողանի անուղղակի նվերն էր՝ հայերիս ընծայված: Քաղաքականության խրթին իրավիճակները հասկանալու համար, մենք պետք է ավելի խորը զննենք Միջին Արեւելքում տիրող կացությունը:

Նախ նշենք, որ ամերիկյան զորքերի միջոցով Իսրայելը պատժել է տարածաշրջանի բոլոր այն բռնատիրական իշխանություններին, որոնք սպառնալիք են դարձել իր գոյատեւմանը: Լիբիան, Իրաքը, Սիրիան վառ օրինակներ են: Այժմ Իրանն է թիրախավորված: Դրան հակադիր, այսինքն բարեկամ երկրներին պարգեւատրելու քաղաքականությունը նույնպես կարող է գործել:

Թուրքիան մարտահրավեր է նետել Միջին Արեւելքում Իսրայելի գերիշխանությանը: Հակառակվել է Իրաքում Քուրդիստանի անկախությանը՝ պաշտպանելով Իրաքի տարածքային ամբողջականությունը, կարծես Թուրքիան երբեւէ մտահոգված է եղել որեւէ երկրի տարածքային ամբողջականությամբ: Կիպրոսն ու Սիրիան հակառակը փաստող օրինակներ են:

Մյուս կողմից, վարչապետ Նաթանյահուն միակ երկրի ղեկավարն էր, որ կողմ էր Քուրդիստանի անկախությանը, որովհետեւ լայն գործունեություն էր ծավալել այնտեղ, ինչպես քաղաքական եւ զինվորական, այնպես էլ հետախուզական՝ Իրանի սահմաններին մոտիկ: Մինչդեռ Թուրքիան «մտահոգվում էր», որ անկախ Քուրդիստանը կարող է ոգեւորել եւ դրդել տարածաշրջանի (այդ թվում նաեւ Թուրքիայի 25 միլիոնանոց) քրդերին պայքարելու հանուն անկախության:

Սիրիայի քրդերը պատրաստվում էին ինքնավար անկլավ ստեղծել Սիրիայում՝ Թուրքիայի սահմանի հարեւանությամբ: Այդ պատճառով էլ Էրդողանը, անվտանգության գոտի կառուցելու քողի տակ, հիմնահատակ արեց քրդերի պատմական բնակավայրերը: Մինչ քրդերը դուրս էին մղվում իրենց բնօրրանից, նրանք բարձրաձայնում էին ավելի քան սոսկ խորհրդանշական մի կարգախոս՝ «Կեցցե բարեկամությունը Քուրդիստանի եւ Իսրայելի միջեւ»:

Այսպիսով, Իսրայելը Սիրիայում կորցրեց իր հենակետերից եւս մեկը:

Թուրքիան միաժամանակ պաշտպանում էր պաղեստինցիներին, Գազայում՝ Համասին, Եգիպտոսում՝ մահմեդական եղբայրներին, եւ Լիբիայում՝ իսլամիստներին: Նա նաեւ Քաթար-Սաուդյան Արաբիա սառը հարաբերություններում ընտրել էր պաշտպանել Քաթարին, մինչդեռ Իսրայելը Սաուդյան Արաբիայի կողմն էր բռնել: Ավելին, Թուրքիան իր մարտանավն էր ուղարկել Միջերկրականի արեւելյան հատվածը, խոչընդոտելու համար Իսրայելի, Եգիպտոսի, Լիբանանի եւ Կիպրոսի կողմից նավթի եւ գազի համաձայնեցված հետազոտությունները: Թուրքիայի նպատակն էր իբր պաշտպանել Հյուսիսային Կիպրոսի 1974-ին զավթված տարածքի ենթադրյալ իրավունքները: Պարզ է ուրեմն, թե ինչպես էր թուրք-իսրայելական թեժացող հարաբերությունները ազդում նաեւ Իսրայելի անդրատլանտյան հարաբերությունների վրա: Փաստ է, որ ամեն անգամ, երբ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը Ներկայացուցիչների պալատի օրակարգ էր մտնում, իսրայելական քարոզչական կազմակերպությունները ԱՄՆ-ում, իրենց կառավարության համաձայնությամբ անշուշտ, փորձում էին կանխել ճանաչումը: Թուրքիան միշտ էլ նշել է, որ Թուրքիայում ապրող հրեաներին վտանգ չի սպառնում այնքան ժամանակ, որ նրանք կհետեւեն իրենց կառավարության հետեւած քաղաքականությանը:

Այս անգամ, սակայն, հրեական կազմակերպություններից շատերը պաշտպանեցին հայկական բանաձեւը: Նրանց թվում էին «Հակազրպարտչական լիգան», «Ամերիկա-հրեական ռեսուրսների խորհուրդը» եւ այլն: Նրանք մասնակցեցին հօգուտ ճանաչման քարոզչությանը: Պարզ էր, որ Իսրայելի կառավարությունը կանաչ լույս էր վառել նրանց առաջ: Մենք պարտավոր ենք ճիշտ գնահատել այս փաստը, որովհետեւ դա ամենահզոր եւ ամենաազդեցիկ գործոնն էր, որ գրեց Ներկայացուցիչների պալատի բոլոր պատգամավորների տարակուսանքները:

Իսրայելում ճանաչման արձագանքը նույնպես նպաստավոր էր: «The Times of Israel» պարբերականը նշել էր. «Այն բանից հետո, որ Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատը միաձայն ճանաչեց Առաջին աշխարհամարտի ժամանակ իրագործված հանցագործությունը, հակադիր կուսակցությունների երկու ականավոր իսրայելցի քաղաքագետներ իրարից անկախ Երուսաղեմին կոչ են արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Ակնարկը Լիկուդ բլոկի նախկին նախարար Գիդեոն Սաարի եւ Հայոց ցեղասպանության ճանաչման երկարամյա պաշտպան Յաիր Լապիդի մասին է: Վերջինս ասել է. «Ես շարունակելու եմ պայքարել, որ Իսրայելը ճանաչի Հայոց ցեղասպանությունը»: Այո, իրականում կան գիտնականներ եւ պետական գործիչներ, որոնք կողմ են, որ Իսրայելը ճանաչի հայերի ողբերգությունը, սակայն Իսրայելի կառավարությունը ցեղասպանության հարցը Դամոկլյան սրի նման կախված է պահում Թուրքիայի գլխավերեւում եւ Քնեսեթի օրակարգում ընդգրկում ամեն անգամ, որ որեւէ զիջում է ակնկալում Թուրքիայից:

⇨5

ՄԱՆՈՒԿ ԱՐԱՄՅԱՆ

# Արտագաղթը Հայաստանից շարունակվում է

Դժբախտաբար, Հայաստանի Հանրապետությունից արտագաղթը շարունակվում է, իսկ երկրի բնակչության թիվը շարունակում է նվազել։ Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակման, Հայաստանի բնակչության թիվը այս տարվա հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 2 մլն 957 հազար մարդ։ Տարվա սկզբի համեմատ այն նվազել է մոտ 8 հազարով։ Ըստ եռամսյակների Հայաստանի մշտական բնակչության թիվը տարվա ընթացքում հետեւյալ կերպ է փոխվել.

Հունվարի 1-ի դրությամբ՝ 2 մլն 965 հազար մարդ

Ապրիլի 1-ի դրությամբ 2 մլն 962 հազար մարդ

Հուլիսի 1-ի դրությամբ 2 մլն 961 մարդ



Դատելով այս տվյալներից, բնակչության թվի նվազման միտումը պահպանվում է եւ վերջին երեք ամիսներին անգամ սկսել է ակտիվանալ։ Դա պայմանավորված է արտագաղթի ծավալների աճմամբ։ Ինչո՞ւ են լքում Հայաստանը «հպարտ» քաղաքացիները «սիրո եւ հանդուրժողականության» հեղափոխությունից հետո։ Չէ՞ որ վարչապետը գրեթե երկնային դրախտ էր խոստանում եւ իշխանության անցնելուց հետո հայտարարում էր, որ ներգաղթը սկսել է գերազանցել արտագաղթին։ Ինչպես ցույց է տալիս իրականությունը, այդ ամենը փուչիկ էր, որը պայթում է։

Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը շարունակում է վատթարանալ, ինչն էլ շարունակվող արտագաղթի հիմնական պատճառն է։ Թեեւ նոր պատճառ էլ կա՝ հիասթափությունը պաշտոնական հայտարարությունների եւ իրականության միջեւ։ Այլեւս բոլորը տեսնում են, որ հակառակ երկրի տնտեսական վիճակի եւ բնակչության սոցիալական կացության վատթարացման, կտրուկ բարձրացել է նոր իշխանության ղեկավարի, նրա ընտանիքի, պատգամավորների, նախարարների եւ «քայլած» իշխանության մյուս ներկայացուցիչների բարեկեցությունը։ Ուստի, պատահական չէ, որ երկրից հեռացողների թիվը գերազանցում է երկիր մուտք գործածների թվին։

## Հայաստան եկող եւ երկրից դուրս գնացող ՀՀ քաղաքացիների ցուցանիշը բացասական է

Այսպես, 2019 թ.-ի հունվար-սեպտեմբերին սահմանային սահմանակետերով 35 հազար 549 ավելի ՀՀ քաղաքացիներ են դուրս եկել Հայաստանից, քան վերադարձել։ Շեշտենք, որ խոսքը միայն ՀՀ քաղաքացիներին է վերաբերվում, այլ ոչ թե Հայաստան ելումուտ անող բոլոր՝ նաեւ այլ երկրների քաղաքացիներին։ Նախկինում, հիմք ընդունելով հենց այս՝ Հայաստան ելք ու մուտք անող բոլոր, այդ թվում օտարերկրյա քաղաքացիների տվյալները, վարչապետը հայտարարում էր, որ ներգաղթը դեպի Հայաստան գերազանցել է արտագաղթին։ Օրերս նրա գրառման մեջ դարձյալ այդ տվյալն էր բերված, բայց այս անգամ շեշտը դրված էր այն բանի վրա, որ բացասական տարբերությունը նվազել է։ **Դա մի կողմից փաստում էր նախկինում նրա գրառման անհիմն լինելը, մյուս կողմից՝ որ արտագաղթը, ցավոք, շարունակում է գերազանցել ներգաղթին։**

Միեւնույն ժամանակ հարկ է նշել, որ Հայաստան մտնող եւ դուրս եկող մարդկանց թվի վրա վերջին մեկուկես տարում էապես ազդել է Հնդկաստանից աշխատանքային միգրացիայի կամ ուսման նպատակով Հայաստան եկողների ցուցանիշը։ Դա ներկայացնել որպես արտագաղթ-ներգաղթի դրական միտում՝ առնվազն երեսպաշտություն է։ Ավելին, այս ցուցանիշը, այդուհանդերձ, բացասական է՝ Հայաստանից մեկնած օտարերկրյա քաղաքացիների թիվը 9 հազար 857-ով գերազանցել է Հայաստան եկածների թվին։

Սրանք այս տարվա ընթացքում արձանագրված ամենեւին էլ ոչ մխիթարական ցուցանիշներն են։ Ինչ մնում է վերջին մեկ-երկու տարվա Հայաստանի ժողովրդագրական վիճակին, ապա այն բավականին ուշագրավ է։

## Հայաստանի ժողովրդագրական տագնապները

Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2019 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ 2 մլն 965 հազար է։ 2018 թ.-ի ընթացքում այն նվազել է ավելի քան 7 հազարով։

**Քաղաքային բնակչությունը 2019 թ.-ի հունվարին 2018 թ.-ի հունվարի համեմատ նվազել է 900-ով եւ կազմել մոտ 1 մլն 894 հազար մարդ**։ Ընդ որում, Երեւան քաղաքի բնակչությունը ոչ միայն չի նվազել, այլեւ մոտ 4200-ով աճել է եւ կազմել 1 մլն 81 հազար մարդ։ Քաղաքներից ամենաշատը նվազել է Գյումրիի բնակչությունը՝ մոտ 1000-ով եւ կազմել 113,5 հազար մարդ։

**Գյուղական բնակչությունը նվազել է 6,5 հազարով եւ կազմել մոտ 1 մլն 70 հազար։** Ամենից շատ վերջին մեկ տարվա ընթացքում նվազել է Արագածոտնի, Տավուշի, Շիրակի մարզերի գյուղական բնակչության թիվը։ Լոռու մարզի գյուղական բնակչությունն է միայն աճել։

**Հետաքրքրական են ամուսնությունների եւ ամուսնալուծությունների ցուցանիշները,** որոնք չգիտես ինչու վարչապետն ընդգրկել էր իր «100 փաստ»-ի մեջ։ Ըստ այդմ, նա հպարտանում էր, որ իր կառավարման շրջանում ամուսնությունների թիվն աճել է, իսկ ամուսնալուծություններինը՝ նվազել, այդպես էլ չասելով, թե այդ ամենը ինչ կապ ուներ կառավարության գործունեության հետ։ Սակայն, զավեշտն այն է, որ անգամ այդ թվերը հպարտանալու պատճառ չէին։

Իրականում 2018 թ.-ի ընթացքում ամուսնությունները Հայաստանում ոչ թե ավելացել են, այլ նվազել՝ 2017 թ.-ի 15214-ի փոխարեն կազմելով 14822։ Ամուսնալուծություններն էլ թեեւ նվազել են 120-ով եւ կազմել 3820, բայց այս թիվը գերազանցել էր 2016 կամ 2015 թվականներին արձանագրված ամուսնալուծությունների ցուցանիշին։

**Բնակչության տարիքային ցուցանիշը նույնպես մտահոգություն է առաջացնում՝** մեր երկիրը շարունակում է «ծերանալ»։ 65 եւ ավելի տարիքի բնակչության թիվը վերջին մեկ տարվա ընթացքում ավելացել է 0,3 տոկոսով եւ կազմել 353 հազար։ 0-14 տարեկանների թիվն անփոփոխ է մնացել, 15-64 տարեկաններինը ավելացել մոտ 1,5 տոկոսով։ Մեկ այլ ցուցանիշ էլ ցույց է տալիս, որ աշխատունակ տարիքի անձանց թիվը նվազել է 0,4 տոկոսով, դրանից բարձր տարիքինը՝ նույնքան աճել, իսկ դրանից ցածր տարիքինը աճել 0,2 տոկոսով։

**Սեռային կազմն էլ հետեւյալն է՝** կանանց թիվը այս տարվա հունվարի 1-ի դրությամբ 1 մլն 563 հազար է, տղամարդկանցը՝ 1 մլն 401 հազար։ Այստեղ չափազանց մտահոգիչ են անհամաչափությունները կախված տարիքային խմբերից։ Օրինակ՝ եթե 0-19 տարեկան աղջիկների թիվն էապես զիջում է տղաների թվին (ամենայն հավանականությամբ բացասական դերն է ունեցել սելեկտիվ աբորտների ցավալի երեւույթը), 20-24 տարեկանների դեպքում այդ ցուցանիշը գրեթե հավասարվում է, իսկ ահա 25-39 տարեկանների դեպքում տղամարդկանց թիվն է կտրուկ զիջում կանանց եւ աղջիկների թվին (այստեղ էլ աշխատանքային միգրացիան է իր բացասական դերն ունենում)։

Դատելով այս տվյալներից, ակնհայտ է, որ Հայաստանը ժողովրդագրական լրջագույն մարտահրավերների առջեւ է կանգնած եւ դրանց լուծումը թողնել երեւութական 2050 թվականի վրա, ինչի մասին տարփողում է կառավարության ղեկավարը, մեղմ ասած, անլուրջ է։

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
Պրոֆեսոր

# Խոսք ողջերթի

«ԵՍ ՀՊԱ՛ՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՅ ԵՄ ԾՆՎԵԼ»։

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ

Գիտական հետազոտություններ իրականացնելիս երբեմն անդրադարձել եմ հայ մամուլի պատմությանը։ Հեղինակել եմ մի քանի ուսումնասիրություններ այդ թեմայով եւ ընդհանրապես տեղյակ եմ, թե ինչ է կատարվել ու կատարվում այդ դաշտում։ Ծանոթ եմ նաեւ 1958 թ. ապրիլի 4-ից Սասունցի Ծուռ՝ Սիմոն Սիմոնյանի խմբագրությամբ Բեյրութում լույս տեսած «անկախ, բայց ոչ երբեք չէզոք» «ՍՓԻՒՌՔ» պարբերականի համառոտ պատմությանը։ Պարբերական, որն իր իսկ խմբագրի ասելով սկսեց լույս տեսնել, որովհետեւ, խմբագրակազմը «խաչութեամբ էր լեցուած, ընելիք մը ունէր եւ կը հաւատար իր ընելիքին» եւ միշտ հավատարիմ մնաց «Ամենուն հետ եւ ամենուն դէմ, բայց միշտ եւ միմիայն հայութեան համար» իր որդեգրած սկզբունքին։

Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմի պատճառով ընդհատված թերթի հրատարակության իրավունքը Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի համահիմնադիր ու գլխավոր գաղափարախոս Գեւորգ Աճեմյանը 1980-ականների վերջին փոխանցեց Հ.Ա.Հ.Գ. Բանակի քաղաքական-հասարակական թեւը ներկայացնող Հայկական Ժողովրդային Շարժմանը՝ «նորագոյն սերունդի այն հատուածին, որ հաւատաւոր կերպով կը գործէ արդէն ժամանակէ մը ի վեր՝ ծառայելով հայութեան սրբազան եւ անժամանցելի դատին»։

Հայաստանի վերանկախացումից հետո որոշ թվով սփյուռքահայեր հայրենադարձվեցին։ Օրերս տեղեկացա, որ «Նոր Սփիւռք» անունով հայրենադարձվել է նաեւ «Սփիւռք» պարբերականը, որպեսզի իր համեստ նպաստը բերի հայրենի պետականության հզորացմանն ու ողջ հայության գերագույն՝ Հայաստանի բոլոր հատուածների վերամիավորման, հայրենի հողի վրա ազգահավաքի, հայավայել ու մարդավայել ապրելու երազանքի իրականացման գործին։

Ողջունում եմ «Սփիւռքին» հայրենադարձվելու առիթով եւ մաղթում արգասաբեր գործունեություն հայրենի հողի վրա՝ ի շահ հայոց պետականության եւ դեպի լուսավոր ապագա հայ ժողովրդի հավերժական ընթացքի։

# Տեսանելի եւ անտեսանելի գործոններ, որոնք ...

⇨4

Այնպես որ, կառավարությունը հեշտությամբ չի հրաժարվի այդ «պարգեւից», որովհետեւ այն դեռ պիտանի կարող է լինել մեկ այլ առճակատման դեպքում։

Առայժմ սենատորներ Ռոբերտ Մենենդեսի եւ Տեդ Կրուզի հովանավորած «SR 150» բանաձեւը ընդամենը 20 կողմնակից ունի Սենատում։ Այնպես որ, դեմոկրատների 18 եւ հանրապետականների 2 քվեները ապահոված բանաձեւը կարծես, այսօրվա դրությամբ, չի վայելում երկկուսակցական պաշտպանություն։

Աշխարհով մեկ սփռված հայերը ցնծությամբ ընդունեցին ճանաչման լուրը։ Նախագահ Արմեն Սարգսյանն ու վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեցին **ԱՄՆ**-ի Ներկայացուցիչների պալատին, մինչդեռ թուրքական կառավարությունը բարկությամբ արձագանքեց։

Նախագահ Էրդողանի հաղորդակցությունների տնօրեն Ֆահրետտին Ալթունը հայտարարեց, որ «ովքեր կողմ են քվեարկել այդ բանաձեւին՝ պատասխանատու են լինելու կրիտիկական հարաբերությունների վատթարացմանը անհանգիստ մի տարածաշրջանում»։

Թուրքիայի խորհրդարանը նույնպես դատապարտեց որոշումը, մինչ արտգործնախարարության բողոքը սխալմամբ նշել էր մեկ այլ՝ հղիության բռնի ընդհատման որոշումը։ Էրդողանն ինքն էլ խոսելով իր AK կուսակցության անդամների առաջ ասաց. «Ներկայացուցիչների պալատի որոշումները առնվել են օգտագործելով ամերիկյան հասարակության շրջանում մեր երկրի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի մթնոլորտում։ Որոշ իմաստով, պատգամավորները պատեհապաշտական դիրքորոշում են որդեգրել»։

Ի պատասխան Թուրքիայի արձագանքին, Սամանթա Փաուերը գրառել էր. «Երբ խաբեբաները տեսնեն, որ իրենց կիրառած մեթոդները արդյունավետ են գործում, նրանք է՛լ ավելի են լկտիանում եւ խաբում», եւ եզրակացրել. «Եթե Էրդողանը հանուն Ռուսաստանի եւ Չինաստանի հետ կապերը սերտացնելու, երես թեքի մի հարաբերությունից, որը չափազանց ձեռնտու է եղել Թուրքիայի համար, ապա պատճառը ոչ թե Հայոց ցեղասպանությունը ճանաչելն է լինելու, այլ իր բռնատիրական եւ ճնշողական գործելակերպը, որ շատ է նմանվում ռուս եւ չինացի ղեկավարների գործելակերպին։ Ներկայացուցիչների պալատն արդեն ասել է իր խոսքը։ Հերթը Սենատինն է եւ նախագահ Թրամփինը։ Մեկ դար առաջ կատարված փաստերը դա են պահանջում»։

Տեսնենք, թե արդյոք այս անգա՞մ էլ աստղերը կհամախմբվեն հօգուտ մեզ։

Թարգմանեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

# Մարտի են գնում միայն... երիտասարդները

ՆԱԻՐ ՅԱՆ

Նոյեմբերի 10-ն աշխարհը նշում է որպես երիտասարդության համաշխարհային օր: Բոլոր ժամանակներում դարակազմիկ իրադարձություններն ու փոփոխությունները մեծ մասամբ երիտասարդներն են արել: Բարքերն ու վարքերը թարմացնողը, ընդվզողն ու պայքարողը, փոփոխություններ ու շրջադարձեր անողը նրանք են: Երիտասարդներից միշտ ակնկալում ենք ամենահամարձակ ու ազնիվ խոսքը, արարքն ու մղումը:

Շատ հեռուն չնայենք ու չհասնենք խորհրդային ժամանակներ, որովհետեւ այն ժամանակվա պահանջները, ինչպես նաեւ հասարակարգը տարբեր էին: Մի հայացքով ընդգրկենք հետանկախության շրջանի հայ երիտասարդության ընդհանուր նկարագիրը: Հետ գնանք 1980-ականներ՝ 88-ի շարժում: Ակունքներում երիտասարդներն էին կանգնած, բայց ոչ 20-22 տարեկան, այլ մեր հայրերի սերունդը: Արցախյան ազատամարտը եւ դասական իմաստով երիտասարդները չնախաձեռնեցին, այլ դարձյալ մեր հայրերի սերունդը: Իհարկե, արցախյան պատերազմում երիտասարդներ մասնակցեցին: 30 տարվա ընթացքում առնվազն 4 անգամ տեղի ունեցած իշխանափոխությունը եւ երիտասարդների ձեռքի գործը չէր: Այսինքն՝ էնտուզիազմով, հախուռն, անկաշկանդ, խենթ ու խելառ մղումներով երիտասարդական շարժում մինչեւ հիմա չենք ունեցել: Եթե ժամանակ առ ժամանակ կարճատեւ բուռն դրսեւորումներ եղել են, ապա շատ կարճ ժամանակում պարզվել է, որ ուղղորդված ու քաղաքականացված են:



Վերլուծությունն այստեղ դադարեցնենք, անցնենք վիճակագրական տվյալների: Երիտասարդական ակումբների դաշնություն, որը 20 տարի առաջ է ստեղծվել, սեպտեմբեր-հոկտեմբերին 800 երիտասարդների շրջանում հարցումներ է անց կացրել, որոնց արդյունքը հետեւյալն է. երիտասարդների 40 տոկոսը ցանկանում է կրթություն ստանալ արտերկրում: Ոչ ֆորմալ կրթություն ստանում է, այսինքն՝ ուսուցողական տարբեր ծրագրերի մասնակցում է 36 տոկոսը՝ առավելապես 22-25 տարեկան երիտասարդները, որոնք նաեւ հասարակական կյանքին են ակտիվ մասնակցում: Ուսմանը զուգահեռ աշխատում է 45 տոկոսը: Որտեղի՞ց են գոյանում երիտասարդների եկամուտները. մինչեւ 30 տարեկանների մոտ 50 տոկոսը ծնողներից է ֆինանսական օգնություն ստանում: 19 տոկոսը եկամուտներն ապահովում է սեփական աշխատանքով, 7 տոկոսը աջակցություն է ստանում արտերկրից՝ բարեկամներ, ընտանիքի անդամներ եւ այլն:

Ինչ վերաբերում է երիտասարդների մասնակցությանը մեր քաղաքական ու քաղաքացիական կյանքին, ապա այս ոլորտում երիտասարդության ներգրավվածության 12 տոկոս աճ է գրանցվել, ու ցուցանիշը հասել է 80-82 տոկոսի: Մինչեւ իշխանափոխությունը այս թիվը 70 էր: Հարցումները ցույց են տվել, որ գործադիր եւ օրենսդիր մարմինների նկատմամբ երիտասարդության շրջանում վստահությունը չի աճել: ՀՀԿ-ի իշխանության ժամանակ էլ, հիմա էլ այդ թիվը 50 տոկոս է:

ԱԺ-ում մինչեւ 40 տարեկան պատգամավորները 60 տոկոս են կազմում: Քաղաքական ակտիվ դիրքորոշում ունեցող երիտասարդները մտել են քաղաքականություն, ինչի հաշվին էլ այս ցուցանիշը ձեւավորվել է: Երիտասարդների գրեթե 100 տոկոսը սոցցանցերում է: 80 տոկոսը կամավորական աշխատանքի փորձ ունի: Եվրոպական կառույցների ինտեգրմանը դրական է վերաբերում երիտասարդների 80 տոկոսը, իսկ 65 տոկոսը նախապատվությունը տալիս է Հայաստանի՝ եվրասիական համագործակցությանը:

Այն հարցին, թե Հայաստանից դուրս որտե՞ղ կուզենային ապրել երիտասարդները, 37 տոկոսը ընտրել է Ռուսաստանը, ԱՄՆ-ն նախընտրողների տոկոսը նվազել է՝ 27, իսկ եվրոպական երկրներում ուզում է ապրել 36 տոկոսը:

Տղաներն իրենց համար ամուսնության լավագույն տարիքը համարում են 25-27 տարեկանը, աղջիկների համար՝ 22-24-ը: Իսկ իրական թվերն այլ են. տղաների ամուսնության միջին տարիքը մոտենում է 30-ի, աղջիկներինը՝ 26-ի: Այս թվերը վերջին տարում Հայաստանում աճում են, այսինքն՝ ամեն տարի ամուսնության միջին տարիքը մեկ նիշով բարձրանում է: Գրեթե նույն պատկերն է մեր տարածաշրջանի մյուս երկրներում: Մասնագետները այս նկարագրի պատճառների պատճառը համարում են սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները: Հատկապես տղաներն ընտանիք կազմելու համար դժվարությամբ եւ ուշ են նախադրյալներ ստեղծում՝ ցածր աշխատավարձ, բնակարանային պայմաններ եւ այլն:

Վերադառնանք հայ երիտասարդության հետաքրքրություններին, մղումներին ու երիտասարդական կյանքի վերլուծությանը: Բուհական համակարգում մշտապես իշխել է կուսակցական ուղղորդումն ու քաղաքական հակվածությունը: Ուսանողական խորհուրդներում ակտիվ գործող երիտասարդներն ըստ 100 տոկոսանոց կանխատեսումների շատ արագ մտել են քաղաքականություն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, ԱԺ-ում կամ կառավարությունում պաշտոն զբաղեցնելով: Այսինքն՝ անվիճելի է, որ ուսանողական տարիներին նրանք կարիերայի համար ճանապարհ են հարթել՝ քաղաքական իշխող թիմի հովանավորությունը վայելելով, նույն թիմին անհրաժեշտ ծառայություններ մատուցելու դիմաց: Նրանք, ովքեր ուսխորհուրդներում ակտիվ չեն եղել, ուրեմն քաղաքական կարիերայի նպատակ չեն ունեցել: Իհարկե, կարիերիստ, առնվազն պատգամավորի ախորժակով ուսանող երիտասարդների կողքին միշտ եղել են նկարագրով, բովանդակությամբ ու տեսակով բոլորովին այլ երիտասարդներ, որոնց համար կրթությունը, ուսումը, մասնագիտական ոլորտներն ու գիտելիքներն առաջնայինն ու կարեւորն են: Ցավոք, նրանք իրենց ապագան ոչ նախորդ, ոչ այս իշխանությունների ժամանակ Հայաստանում չեն տեսնում:

Մի առիթով Հայաստանի նախագահ **Արմեն Սարգսյանը** ֆիզմաթ կրթություն ստացող պատանիների ու երիտասարդների հետ հանդիպման էր: Նրանց գիտելիքներով ու գյուտերով նախագահը հիացած էր. հարց տվեց՝ որտե՞ղ եք տեսնում ձեր ապագան: Մեծ մասը պատասխանեց՝ կրթության հետագա փուլերն ու աշխատանքը տեսնում ենք ոչ Հայաստանում: Պատասխաններն Արմեն Սարգսյանի սրտով չէին, իհարկե, բայց սա է իրականությունը: Ներքաղաքական անցուդարձով չհետաքրքրվող երիտասարդները ոչ թե քթած ունեն իրենց երկրի ներկայի ու ապագայի վրա կամ անտարբեր ու անսիրտ են, այլ պարապ բաների վրա ժամանակ չեն կորցնում, ինքնակրթվում են, մտահորիզոն ու աշխարհայացք զարգացնում ու նայում հեռու՝ Հայաստանի սահմաններից դուրս: Այնտեղ էլ աթոռի, կարիերայի, քաղաքական դիրքի համար կռիվ ու պայքար կա, բայց նրանց հետաքրքրում են ինքնադրսեւորման այլ ոլորտներ՝ գիտություն, կրթություն, բիզնես, բարձրագույն տեխնոլոգիաներ:

«Ազգային ժողովի ապագա պատգամավոր է: Խոսքս լավ հիշեք, վերջը այս տղան քաղաքապետ է դառնալու: Դուխով քայլածների մեջ այս երիտասարդն էլ է եղել. շուտով մի պաշտոնի կնշանակեն»,- ստույգ կանխատեսել եւ նույնքան անվրեպ կանխատեսում է հասարակությունը քաղաքական ու քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող երիտասարդների վերաբերյալ: Ոչ մի բողոքի ակցիա, ցույց, հրահրված ծեծկռտուք, ծեծկռտուքի ժամանակ ստացած ապտակ, բարձրագոչ ելույթ հենց այնպես, ինքնաբուխ, չծրագրված չի լինում: Ամեն ինչ իր սցենարն ունի՝ վճարված կամ վճարվելիք սցենարիստով, ռեժիսորով, գլխավոր ու երկրորդական դերակատարներով:

Ցավն այն է, որ անկախության ժամանակներից սկսած մինչեւ հիմա որեւէ իշխանավոր, որեւէ կառավարություն ի դեմս երիտասարդների՝ հզոր, աննկուն, անկաշառ ուժ չի տեսել: Հայ երիտասարդությունից հայրենի իշխանությունները երբեք չեն վախեցել ու չեն զգուշացել: Իսկ սա դեգրադացիա է նշանակում: Նաեւ նշանակում է, որ անպատժելիությունը շարունակվելու է՝ նորանոր հանցանքներ ծնելով: Քանի դեռ պաշտոնյան երիտասարդական համախմբված, միավորված, մեկ բռունցք դարձած ուժ չի տեսնում, որը ոչնչից չի ընկրկի ու չի կոտրվի, այդ պաշտոնյան իր ասածի ու արածի համար պատասխանատվություն երբեք չի կրելու: Խենթությունների, անկանխատեսելի արարքների, հանուն արդարության անգամ ինքնազոհության պատրաստ միակ շերտը երիտասարդությունն է. այդպես եղել է պատմության բոլոր ժամանակահատվածներում: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ հայ երիտասարդությունը երբեք որեւէ հարցում առաջամարտիկ չի եղել, թելադրող, ընդվզող, պայքարող չի եղել: Ազնիվ, սեփական սկզբունքներից բխած մղումներ չեն եղել պարզապես: Եղել են ուղղորդված, ցուցումների ու հրահանգների ենթարկված երիտասարդական արարքներ, որոնք ըստ սցենարի՝ մարվել ու ավարտվել են փոխհամաձայնության երաշխիքով: Ըստ էության այդ շարժումներում շահել ու շահում են ընդամենը ոմանք: Մյուսներն ուղղակի օգտագործվում ու մսխվում են՝ հետագայի համար փորձ ձեռք բերելով: Հաջորդ սցենարում իրենք են դառնում գլխավոր դերակատարներ՝ դարձյալ կարիերայի մեծ հավակնություններով:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի վաստակավոր լրագրող

# Եթե ընդունակ լինեն... հասկանալու

**Նայում եմ մեր այսօրվա պետական կառավարման համակարգի ամենաբարձր հարթակներն զբաղեցնող շատ ու շատ երիտասարդների, եւ գալիս եմ մի դառն ու դաժան եզրակացության. նրանք ամեն ինչ ունեն, բացի...իմաստությունից: Իսկ իմաստությունը գալիս է փորձառության հետ: Հենց փորձառության պակասն է, որ մեր որոշ պաշտոնյաների տալիս է ավելորդ ինքնավստահություն՝ կատարելու կատեգորիկ հայտարարություններ, անելու վատ կշռադատված քայլեր: Ամեն ինչ ներելի է, դեռ կսովորեն: Աններելին այսօր ուրիշներին սովորեցնելու անթաքույց ձգտումներն են:**

**Մոտ երեք տասնամյակ առաջ, երբ դեռ Խորհրդային Միությունը չէր փլուզվել, առիթ ունեցա անկեղծ զրուցելու անկախության ճանապարհը բռնած Հայաստանի առաջին վարչապետ Վազգեն Մանուկյանի հետ: Այն ժամանակ նոր էր վերադարձել Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ Մոսկվա կատարած հերթական ուղեւորությունից, ուր մասնակցել էր ամենաբարձր մակարդակի մի խորհրդաժողովի: Պատմում էր այդ խորհրդաժողովից, եւ բավական անկեղծորեն զայրանում էր, որ կարծեմ Բորիս Ելցինի մի խոսք վիճահարույց պնդման առթիվ ձայն խնդրելով՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը ակադեմիական ոճով մի ամբողջ դասախոսություն էր կարդացել, թե ինչո՛ւ չի կարելի այդպես անել, այդպես մտածել: Նկատեցի, որ սեղանի շուրջ նստածները քթների տակ հեգնախառն ժպտում էին,-պատմում էր Հայաստանի առաջին վարչապետը,- ընդմիջմանը փորձեցի բացատրել, թե ա՛յ Լեւոն ջան, էս ո՞ւմ ես ուզում բան սովորեցնել, ի՞նչ իմաստ ունի: Միգուցե մեզ նման երիտասարդներին փորձելու համա՞ր էին այդ թեման արծարծում: Չկարողացա համոզել, մնաց իր կարծիքին: Պարոն Մանուկյանը մեր այս զրույցը հիշում է, թե՞ ոչ՝ չեմ կարող ասել: Բայց ես սա հիշելու բազմաթիվ առիթներ եմ ունենում գրեթե ամեն օր, երբ ցավով տեսնում եմ, որ զանազան նորաթուխ պետական պաշտոնյաներ, որոնց շուրթերին, ինչպես ասում են, մոր կաթը դեռ չի չորացել, ամենահավակնոտ կեցվածքով, բացարձակապես վստահ սեփական ճշմարտություններին՝ փորձում են իրենցից շատ ավելի փորձառու, շրջահայաց, տասնամյակներով հազար ու մի բան տեսած հարգարժան մարդկանց ոչ միայն առարկել, այլեւ իրենց չիմացածը... սովորեցնե՛լ: Այդ թվում՝ Վազգեն Մանուկյանին: Բնական, հասկանալի եւ բացատրելի երեւույթ է: Որովհետեւ տգետը միշտ ձգտում է ուրիշներին սովորեցնել այն, ինչ ինքը կա՛մ չգիտի, կա՛մ դրա մասին տեղյակ է դիլետանտի մակարդակով:**

**Միշտ դեմ եմ եղել եւ այսօր առավել քան դեմ եմ պետական բարձրաստիճան պաշտոնյաներին ֆետիշացնելու, նրանց շուրթերից դուրս թռած ամեն միտք համարյա թե իբրեւ Աստվածաշնչից կատարված մեջբերում տարփողելու մտայնությանը: Նախ, դա կռապաշտություն է, նույնիսկ ամենաբարձր բարոյական հեղինակությունների առաջ այդպես ստրկահաճորեն քծնելը անվայել է ե՛ւ մեր ժողովրդին, ե՛ւ մեր պաշտոնյաներին: Անկեղծորեն արձանագրում եմ, որ նման ստրկամտություն, նման ստրկահաճություն չեմ տեսել ոչ միայն Անկախ Հայաստանի նախորդ իշխանությունների, այլեւ նույնիսկ Խորհրդային Միության մեջ ապրածս տասնամյակների ընթացքում (*): Իսկ թե՛ այն ժամանակ, թե՛ հետխորհրդային երեսուն տարիներին ես միշտ ապրել եմ ամենաակտիվ կյանքով, հնարավորություն եմ ունեցել տեսնելու, զրուցելու, նույնիսկ մտերմանալու բազում ու բազմաթիվ երեւելիների հետ: Այդ թվում՝ պետական ամենաբարձր պաշտոնյաների, գիտության, գրականության, մշակույթի անմոռաց, լուսավոր դեմքերի հետ: Կարող էի այստեղ այդպիսի համբուրելի մարդկանց մի անվերջանալի ցուցակ ներկայացնել, բայց վախենամ, թե դա դիտվի որպես իմ ապրած կյանքի ինքնագովազդ:**

**Փոխարենը կուզենայի ծրի մի խորհուրդ ուղղել բոլոր նորերին: Աշխատեք վեր կանգնել մարդկային թուլություններից ու թերություններից: Մի՛ կեղծեք, մի՛ ամբարտավանացեք, մի սարսափեք այլ կարծիքներից: Ամեն տեղ դավադիրներ մի՛ փնտրեք, մի՛ վախեցեք հնարավոր պաշտոնանկություններից, քանզի դեռ այնքա՜ն վերելքներ ու վայրէջքներ կունենաք ձեր ճանապարհին: Եվ համոզված եղեք՝ ո՛վ էլ լինեք՝ այսօր ձեզ է վիճակված մեր պետական նավը առաջ տանելու առաքելությունը: Ուստի նույնիսկ նորերին չսիրողները, անգամ այսօր նրանց հրաժարականը պահանջողները ո՛չ թե իրենց սիրուն աչքերի, այլ հանուն մեր երկրի ու ժողովրդի՝ բոլորին սրտանց հաջողություն են մաղթում: Եթե միայն ընդունակ լինեն... հասկանալու:**

***) Այ այստեղ են ասել՝ ի՜նչ եք ասում, ստրկահաճությունը անմահ է, շողոքորթասիրությունը՝ նույնպես: Իզուր չէ, որ Մեծն Պարոնյանն ասել է. «Շողոքորթությո՛ւն, քեզ բոլորը կը սիրեն»: Խմբ.:**

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 7



# Որպես «Սառը պատերազմի» ժամանակաշրջանից մնացած խորհրդանիշ

*Հայ եկեղեցին. հայկական քրիստոնեության ներածություն, Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս*

**Անթիլիաս, Լիբանան, Կիլիկիո հայոց կաթողիկոսություն, 2016 թ., 241 էջ [ii]. ISBN 978-9953-0-3710-3**

**ԴՐ. ՎՐԵԺ (ՆԵՐՍԵՍ) ԱՎԱԳ ՔՀՆ. ՆԵՐՍԵՍՅԱՆ**

Լոնդոն




***Անգլերեն բնագրից արեւելահայերեն թարգմանությամբ ստորեւ լույս ենք ընծայում դոկտ. Վրեժ (Ներսես) ավագ քահանա Ներսեսյանի գրախոսությունը նվիրված Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի հեղինակած անգլերեն «Հայ եկեղեցին» հատորին: Նույն գրքին եւ ներկա գրախոսությանը մեր անդրադարձումները վերապահելով «Ազգ»ի հետագա համարներին, հիշեցնենք որ դոկտոր Վրեժ (Ներսես) Ներսեսյան քահանան միջազգայնորեն ճանաչված աստվածաբան ու մատենագետ է եւ հանդիսանում է կուրատորը Բրիտանական գրադարանի միջինարեւելյան քրիստոնեական բաժնի:***

**Խմբ.**

Արամ Ա [Քեշիշյան] Կիլիկիո հայոց աթոռի կաթողիկոսը միջազգայնորեն ճանաչված էկումենիկ եկեղեցական առաջնորդ է: Նա ծառայել է որպես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) ատենապետ՝ երկու ժամկետով (1991-2005 թթ.) եւ որպես Մերձավոր Արեւելքի Խորհրդի նախագահ՝ երկու ժամկետով (2006-2016 թթ.): Նրա բազմաթիվ հրատարակումներն ընդգրկում են նաեւ «Փոփոխվող աշխարհում եկեղեցի լինելու մարտահրավերը» (1997 թ.), «Քրիստոնեական վկայություն Միջին Արեւելքի խաչմերուկում» (2004 թ.) եւ «Եկեղեցին կանգնած է մեծ մարտահրավերների առջեւ» (2001 թ.), որը ԵՀԽ-ի ատենապետի պաշտոնում նրա ներկայացրած զեկույցների ժողովածուն է:

Հեղինակի խոսքերով՝ Հայ եկեղեցու նպատակը ոչ թե Հայ եկեղեցու համապարփակ պատմությունը, աստվածաբանությունը կամ առաքելությունը ներկայացնելն է, այլ կարեւորելը Հայ եկեղեցու այն առանձնահատկությունները, որոնք պահպանում են նրա ինքնությունը եւ մասնավորում նրա առանձնահատուկ առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Տասներեք առանձին վերնագրերի ներքո, որոնցից յուրաքանչյուրը կենտրոնանում է Հայ եկեղեցու նկարագրի վրա, նա ներկայացնում է Հայ եկեղեցու պատմությունը, հավատքն ու վկայությունը եւ ուրվագծում է նրա ապագայի տեսլականը:

Այս հատորում գրախոսողին գրավեց Նորին Սրբության տեսակետը «Երկու կաթողիկոսություններ մեկ եկեղեցու մեջ» (73-75 էջեր) թեմայի շուրջ:

Այս «հերձվածի» ծագումը Հայ եկեղեցում, թեեւ եկեղեցական շղարշի ներքո եւ աստվածաբանական նախադեպի վկայակոչմամբ, ըստ էության քաղաքական է: Դրա ակունքները գալիս են 1922-ի դեկտեմբերի 13-ից, երբ Հայաստանը դարձավ ԽՍՀՄ-ի բաղկացուցիչ մասը: Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը դժգոհ էր կոմունիստական գերիշխանության տակ գտնվող Էջմիածնի («Միածին Որդու իջման վայրը») մայր եկեղեցում տիրող իրավիճակից, որի գլուխը՝ Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսը, 1938 թվականին սպանվեց բոլշեւիկների կողմից: Դրանից մի քանի տարի առաջ՝ 1933-ի դեկտեմբերի 24-ին, Հյուսիսային Ամերիկայի թեմի առաջնորդ Ղեւոնդ արքեպիսկոպոս Դուրյանը, Խորհրդային Հայաստանին իր աջակցության համար սպանվեց մի խումբ դաշնակցական գրոհայինների կողմից, մինչ պատարագիչը թափորով անցնում էր Նյու Յորքի Սուրբ Խաչ եկեղեցու հավատացյալների միջով:

303 թ-ին Հայոց կաթողիկոսությունը հիմնադրվեց Սուրբ Էջմիածնում՝ Վաղարշապատ քաղաքում, որի եկեղեցական իրավասությունը տարածվում էր Մեծ եւ Փոքր Հայքերի բոլոր 13 թեմերի վրա: Այդ ժամանակ կաթողիկոսի տիտղոսը «Կաթողիկոս Հայոց Մեծաց» էր, որն ընկալվում էր որպես աշխարհագրական սահմանում: Որպես հայ ժողովրդի միակ եւ ամենաերկար գոյատեւող հաստատություն՝ այն հարմարվում էր քաղաքական իրարանցման եւ անկայունության պահանջներին՝ հետեւելով իր հոգեւոր հոտի մեծամասնության գաղթական սովորություններին: Պարսկաստանի եւ Բյուզանդիայի միջեւ Հայաստանի բաժանումից հետո, համապատասխանաբար 387 եւ 391 թվականներին, կաթողիկոսական նստավայրը տեղափոխվեց մի քանի վայրեր, որտեղ գտնվում էր ազգի քաղաքական կենտրոնը՝ Սուրբ Էջմիածին (301-484/5 թթ.), Դվին (484-927 թթ.), Աղթամար (927-947 թթ.), Արգինա (947- 1001 թթ.), Անի (1001-1051 թթ.), Սեբաստիա (1051- (1062 թթ.), Թավբլուր (1066-1090 թթ.), Քեսունի Կարմիր Վանք (1090-1116 թթ), Ծովք (1116-1149 թթ.), Հռոմկլա (1149-1292 թթ), եւ Սիս (1293-1441 թթ): Երբ 1375-ին Կիլիկյան Հայոց Թագավորությունը դադարեց գործել, ազգային-եկեղեցական ժողով գումարվեց Սուրբ Էջմիածնում, եւ որոշում ընդունվեց փոխադրել Աթոռն իր ծննդավայր՝ Վաղարշապատ: Քաղաքական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 1113 թ-ից մինչեւ 1895 թ. ի հայս եկան տասներեք տարածաշրջանային աստանդական կաթողիկոսներ, որոնք բոլորն էլ՝ ներառյալ Երուսաղեմի (638 թ.) եւ Կոստանդնուպոլսի (1461 թ.) հայոց պատրիարքությունները, ընդունում էին Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինական, առաքելական գերիշխանությունն ու իրավասությունը: 14-րդ դարում պապական աթոռի վիճակը նույնպես քաոսային էր:

1309 թվականին Հռոմի Կղեմես Ե Պապը պապական աթոռը տեղափոխեց Ավինյոն՝ Հռոմ քաղաքում մշտապես առկա վտանգավոր իրավիճակի պատճառով, իսկ 1378-ին Հռոմի Գրիգոր ԺԱ Պապը պապական աթոռը կրկին տեղափոխեց Հռոմ: Ֆրանսիացի կարդինալները հրաժարվեցին ընդունել այդ տեղափոխությունը եւ հակապապ ընտրեցին Ավինյոնում՝ այդպիսով Մեծ Հերձվածի պատճառ դառնալով, որը տեւեց մինչեւ 1417 թվականը: Այնուամենայնիվ արժե շեշտել, որ հակապապերը երբեք կասկածի տակ չեն դրել Սբ. Պետրոսի Աթոռի գերիշխանությունը:

1946-ի մարտի 5-ին պաշտոնական այցով Միացյալ Նահանգներում գտնվող Ուինսթոն Չերչիլն իր «Երկաթյա վարագույր» կոչվող ելույթով հանդես եկավ Միսսուրիի Ֆուլթոն քաղաքում՝ արեւմտյան ժողովրդավարական երկրներին նախազգուշացնելով խորհրդային կոմունիզմի տարածման վտանգների մասին: 1947 թ. մարտի 12-ին ԱՄՆ նախագահ Հերի Ս. Թրումանը հայտարարեց ամբողջ աշխարհում կոմունիստական ագրեսիային դիմակայելու իր որոշման մասին, որը դարձավ ամերիկյան արտաքին քաղաքականության առանցքային կետը: «Սառը պատերազմը» ահագնացավ՝ խորացնելով աշխարհասփյուռ հայկական սփյուռքի եւ խորհրդային գերակայության տակ գտնվող հայրենիքի միջեւ արդեն իսկ գոյություն ունեցող ճեղքերը:

Երբ Սուրբ Էջմիածնի Միաբանության անդամ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը (1943 թ.) ընտրվեց Կիլիկիո Աթոռի կաթողիկոս, կողմերից ոչ մեկը որեւէ առարկություն չհայտնեց նրա թեկնածության վերաբերյալ, քանի որ այդ ժամանակ հայկական միասնական ճակատ կար: Սակայն իրավիճակը փոխվեց, երբ նա մահացավ 1952 թ-ին. «Սառը պատերազմն իր սառցե սայրը մխրճեց հայ համայնքի մեջ»: Կտրուկ ավարտվեցին 1945-46 թթ. նախաձեռնված բոլոր այն քայլերը, որոնք միտված էին վերամիավորվելու 1933 թ-ին Ղեւոնդ արքեպիսկոպոս Դուրյանի սպանությունից հետո համարյա բաժանված եկեղեցական հատվածները: Դաշնակցականները պատրաստվում էին հաղթել հաջորդ կաթողիկոսի ընտրություններում եւ մեծացնել անդունդն այդ երկու եկեղեցական իշխանությունների միջեւ, որը հիմնականում դրսեւորվեց Միջին Արեւելքում եւ Միացյալ Նահանգներում՝ Սիրիայի եւ Լիբանանի դաշնակցականների թելադրանքով եւ ձեռնածություններով: Միաձայն որոշում կայացվեց մասնակցել Խորհրդային Միության, որին անդամակցում էր Խորհրդային Հայաստանը, եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից առաջնորդվող Արեւմտյան աշխարհի միջեւ ընթացող համաշխարհային քաղաքական պայքարին: Դաշնակցական առաջնորդները բառացիորեն առեւանգեցին սփյուռքում Հայ եկեղեցու նվիրապետության ճյուղերից մեկը՝ այդպիսով խորտակելով ավանդաբար միավորող միակ դարավոր հաստատության ամբողջականությունը: Տարածելով այն սխալ կարծիքը, թե Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոմունիստների «գործիքն ու գործակալն է», դաշնակցականներին հաջողվեց վերացնել սփյուռքի հայկական համայնքների հավատարմությունն ու միասնականության զգացումը:

1950 թ-ին Գեւորգ Զ Չորեքչյան կաթողիկոսի խնդրանքով (1945-1954 թթ.) Սուրբ Էջմիածինը ներկայացնող երկու պատվիրակներ՝ Ռուբեն արքեպիսկոպոս Դրամփյանը եւ պրոֆ. Աշոտ Աբրահամյանը ուղարկվեցին մասնակցելու Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությանը: Կրոնական հարցերով զբաղվող նախարարին ուղղված նամակում կաթողիկոսը շեշտում է այս այցի կարեւորությունը. «Քանի որ սա նաեւ նրանց հնարավորություն կտա հանդիպել Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսին եւ նրանից լսել քաղաքական կուսակցությունների եւ նրանց աջակիցների բաժանարար գործունեության մասին: Չափազանց կարեւոր է արտասահմանում Հայ եկեղեցու հանդեպ կուսակցութիւնների եւ այդ ու այլ նպատակներով գործադրած աններելի միջոցներն ուսումնասիրելու, հակահարված տալու նպատակով» [Գարեգին Ա Հովսեփյանց, Փաստաթղթեր, Հտ. Ա, Սուրբ Էջմիածին, 2017 թ., էջ 624): Դրանից մի քանի տարի առաջ՝ 1938 թվականին, Գարեգին Հովսեփյանցը, Էջմիածնի Հոգեւոր Խորհրդին գրելով թեմակալ առաջնորդի սպանությունից հետո Կալիֆորնիայում եւ Ամերիկայի Արեւելյան թեմում գերիշխող մթնոլորտի մասին, խորհուրդ է տալիս. «Սփյուռքում նրա ներկայությունը կրկնակի կարեւոր է ինչպես բարոյական, այնպես էլ ֆինանսական առումով՝ մինչեւ նոր թեմակալ առաջնորդի ընտրությունը: Քանի դեռ [թեմակալ առաջնորդի պաշտոնը] թափուր է, առանց Սուրբ Էջմիածնի թեկնածուի ներկայության մենք շատ բան կկորցնենք ամբողջ ազգի եւ Սուրբ Էջմիածնի տեսանկյունից»: Նա եզրակացնում է. «Ի նկատի պիտի ունենալ, որ այժմ յստակապէս դաշնակցական թերթերը սուտ ու չափազանցուած աղմկարարութեամբ հող են պատրաստում, աշխատանք թափում ժողովրդի միտքը շփոթել եւ համակրութիւնը նուազեցնել, եւ կտրել, եթէ հնարաւոր է Հայաստանի կառավարութիւնից եւ Էջմիածնից: Իմ ներկայութիւնը մասամբ թումբ կլինի այդ ձգտումների դէմ»: (Անդ, էջ 540): Դեռեւս 1925 թ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը (ապագա կաթողիկոս՝ 1932-1938 թթ.) եւ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը Գեւորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսին (1911-1930 թթ.) ուղղված զեկույցում տեղեկացնում են Նորին Սրբությանը, որ Հայ կոմունիստական կուսակցության առաջին հայոց կոմիսարի՝ Արամայիս Երզնկյանի (1878-1937 թթ.) հետ իրենց հանդիպման ժամանակ նախարարը բողոքել էր, որ սփյուռքում, մասնավորապես Թավրիզում, Ամերիկայում եւ Եվրոպայում գործող Սուրբ Էջմիածնի որոշ թեմակալ առաջնորդներ համագործակցում են Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների հետ իրենց հակահայկական գործունեության մեջ: Մեր ցանկությունն է, որ եկեղեցին, իր ներկայացուցիչների միջոցով, չեզոք դիրք ընդունի սփյուռքի քաղաքական կողմնորոշման հարցում»: [«Դոցանից ամէնից կարեւորը Էջմիածնի ներկայացուցիչների կամ առաջնորդների վարած քաղաքականութիւնն է արտասահմանի հայ գաղութներում, մեր ստացած տեղեկութիւններով, ընդդէմ խորհրդային իշխանութեան»: [Անդ, 399-400 էջեր]: Ուղղակի հիշատակված սակավաթիվ անուններից են Գրիգորիս եպիսկոպոս Փալաքյանը (Եվրոպա), Տիրայր Տեր Մովսեսյանը (Ամերիկա), Ներսես Տեր Մելիք-Թանգյանը (Թավրիզ) [Անդ, 399-40 էջեր]:

Հայ եկեղեցու պառակտումը սրվեց 1956 թ-ին՝ Զարեհ Ա Փայասլյան կաթողիկոսի ընտրությամբ (20 փետրվարի, 1956 թ.), եւ երկու հայ եւ մեկ ասորի եպիսկոպոսների մասնակցությամբ նրա օծումը Սուրբ Էջմիածինը միանգամայն հասկանալիորեն համարեց «թերի եւ ոչ կանոնական»: 1963 թ. փետրվարի 23-ին Խորեն Ա Բարոյան կաթողիկոսը հաջորդեց Զարեհ կաթողիկոսին, որն իր ընտրությամբ իրեն հռչակեց «Մեծի Տանն Կիլիկիո ամենայն հայոց կաթողիկոս սփյուռքում». պատմական լեգիտիմություն եւ կանոնական նախադեպ չունեցող անվայել ու պատիր մի պնդում, որով իրեն հավասարեցնում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Կարճ ժամանակահատվածում, ճնշումների ներքո եւ համայնքների կամքին հակառակ, Սիրիայի, Լիբանանի, Կիպրոսի, Հունաստանի թեմերը հարկադրաբար իրենց հավատարմությունը հայտնեցին Անթիլիասին, եւ քաղաքական ուժեղ ճնշման ներքո զուգահեռ թեմեր ստեղծվեցին Միացյալ Նահանգներում, Կանադայում եւ Ֆրանսիայում: 1994 թվականին գահ բարձրանալուց ի վեր Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսն ակտիվորեն խրախուսել է ոտնձգությունն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ժամանակավոր իրավասության նկատմամբ՝ անտեսելով Խորհրդային Միության փլուզման եւ Հայաստանի պետական անկախության իրականությունը:

«Նվիրապետություն եւ որոշումների ընդունում» բաժնում հեղինակը եզակի եւ հակասական բացատրություն է տալիս Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ստեղծման մասին:

⇨8

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 8



# Դպրոց փակելը ազգաշահ գործ չէ

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
Պրոֆեսոր

Ճակատագրի հեգնանքով հայերը սփռված են աշխարհով մեկ եւ գրեթե չկա մի երկիր, որտեղ նրանք չեն բնակվում: Հայ մնալու կարեւոր գործոնները եղան ու մնացին հայեցի դիմագիծ ունեցող կառույցները, որոնց մեջ առանձնակի դերակատարություն են ունեցել եւ ունեն դպրոցները: Հոդվածը չծանրաբեռնելու նկատառումով ձեռնպահ ենք մնում թվարկելու բոլոր այն երկրները՝ Հնդկաչինից սկսած մինչեւ Ամերիկյան ու Աֆրիկյան մայրցամաքներ, որտեղ դեռ՝ նույնիսկ միջնադարից գործել ու այսօր էլ գործում են հայեցի կրթարաններ: Սակայն վերջին տարիներին այդ ասպարեզում նկատվում է տխուր ու ցավալի մի գործընթաց՝ իրար հետեւից փակվում են միջնակարգ եւ բարձրագույն հայկական կրթօջախներ, որոնք անուրանալի ներդրում են ունեցել ազգապահպանության, սփյուռքահայ մատաղ սերնդին հայեցի կրթություն ու դիմագիծ տալու գործում:

Նկատենք նաեւ, որ Սփյուռքի ձեւավորման սկզբից ինչպես շատ երեւույթներ, այնպես էլ կրթության գործը ցավոք կուսակցականացվեց եւ տնօրինվում էր կա՛մ ուղղակի կուսակցությունների, կա՛մ այդ կուսակցությունների կողմից ստեղծված կրթամշակութային, պատանեկան ու երիտասարդական, սպորտային եւ նմանատիպ կառույցների կողմից: Այդ գործում հիմնադրման օրվանից իր կարեւորագույն դերակատարությունն է ունեցել 1906 թ. Եգիպտոսում հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային զարգացմանը նպաստելու համար հիմնադրված Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը: Երկար տարիներ ՀԲԸՄ-ի գործունեության հիմնական նպատակն է եղել կրթական, մշակութային եւ բարեսիրական ծրագրերի միջոցով պահպանել եւ տարածել հայ լեզուն, ինքնությունն ու ժառանգությունը: Այդ նպատակով 1926 թ-ին ՀԲԸՄ-ն Նիկոսիայում հիմնում է Մելքոնյան կրթական հաստատությունը, Նուպարյան սաներ հիմնադրամը, որը թոշակներ էր հատկացնում հայ երիտասարդներին եվրոպական համալսարաններում ուսանելու համար, իսկ 1930-ին՝ Մարի Նուպար ուսանողական տունը Փարիզում:

Կազմակերպությունը Ալեք Մանուկյանի նախագահության օրոք (1953-1989 թթ) հիմնվեց «Ալեք եւ Մարի Մանուկյան», «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամները, որոնց միջոցներով հետագա տարիներին հնարավոր է դարձել կառուցել մի շարք կրթական, երիտասարդական եւ այլ հաստատություններ:

Այժմ ՀԲԸՄ-ի տարեկան միջազգային բյուջեն կազմում է մոտ 36 միլիոն ԱՄՆ դոլար: Մասնաճյուղեր ունի 22 երկրների մոտ 80 քաղաքներում: Այսօր հաշվվում են ավելի քան 22.000 ՀԲԸՄ անդամ, 120 մասնաճյուղ եւ 27 մշակութային կենտրոն, որոնք սփռված են ամբողջ աշխարհով՝ ԱՄՆ, Եվրոպա, Մերձավոր Արեւելք, Հարավային Ամերիկա, Ավստրալիա: ՀԲԸՄ-ն տնօրինում է մոտ 20 դպրոց (6600 աշակերտ) եւ ֆինանսավորում ավելի քան 16 կրթական հաստատություն: Փարիզում եւ Նյու Ջերսիում ՀԲԸՄ-ն ունի 2 գրադարան եւ այլն: Սակայն ցավոք դրանց թիվը գնալով պակասում է: Իրար հետեւից փակվեցին Կիպրոսի Մելքոնյան, Տորոնտոյի Ալեք Մանուկյան, Ծառուկյան, վերջերս էլ վտանգված են Լոս Անջելեսի Վաչե Մանուկյան եւ այլ դպրոցներ: Շատ չէ՞, պարոններ, կանգ առնելու ժամանակը չէ՞:

«Դպրոցները փակելու փոխարեն դրանց «տէր»երը պիտի հասկնան, որ կրթական-մանկավարժական աշխատանքը մասնագիտական է եւ ոչ միութենական: Որ դպրոցը հանրութեան պէտք է ներկայանայ իր մանկավարժական-ուսուցողական ծրագրով: Յաճախ կարծիքներ են հնչում, որ քաղաքակիրթ երկիրներու պետական վարկերու մեծագոյն տոկոսը կը յատկացուի կրթական գործին: Հայկական սփիւռքը պետութիւն չէ, բայց անմիջականօրէն իր ինքնութեամբ ապրելու խնդիր ունի, իսկ այդ ինքնութիւնը կը կերտուի-կը պահուի դպրոցով եւ ոչ թէ կարգախօսներով: Երբեմն քաջութիւն պէտք է ունենալ անարժան լուսապսակները վար առնելու, եւ ըսելու, թէ ինչո՞ւ կը փակուի դպրոց մը, եւ կամ օր մը կրնայ փակուիլ դպրոց մը: Երբեմն կը մտածեմ, որ դպրոցի մը բացման առիթով հանդիսութիւն կը կազմակերպուի, բեմին վրայ մարդիկ զիրար կը հրմշտկեն պատմական լուսանկարին վրայ անմահանալու համար: Դպրոցի մը փակման առիթով ինչո՞ւ հանդիսութիւն մը տեղի չ ունենար, որպէսզի կրթական գործի ապագային իրապէս հաւատացողներ հոտած հաւկիթ եւ փտած լոլիկ տեղացնեն դպրոց փակող վարչագէտներուն գլխուն, որպէս դամբանական:

Ուսուցողական ծրագիրէ անտեղեակ եւ անոր չհաւատացող այդ վարչագէտներն են դպրոց փակողները: Նրանք խնայողութեան պիտակի տակ ուսուցչական որակը պակսեցրին, որից աշակերտութեան համրանքն ալ հետեւեցաւ նոյն նուազման ընթացքին, մինչդեռ որակի բարձրացումը պիտի աճեցնէր համրանքը եւ դպրոցը պիտի տեւէր:

Դպրոցի մը փակման առիթով դամբանական չի խօսուիր, գինեձօն չի կազմակերպուիր: Դպրոց կը փակուի մութի մէջ: Իսկ զարմանալին այն է, որ հայ զանգուածները, Հայաստան եւ սփիւռքներ, անոնք որոնք ճառ կը խօսին դպրոցի մը բացման եւ ներկայ կ ըլլան գինեձօնի, ընդարմացման վիճակի կ ենթարկուին, կը լռեն, փոխանակ ազգի գոյատեւման իրաւունքը պաշտպանելու: Կարեւոր է ըմբռնել վերջապէս, որ հայ դպրոցը ազգին կը պատկանի, ոչ միութեան մը, որոնք հաշուետու են ազգին, իրենց տրուած վստահութեան համար: Ինչպէ՞ս բացատրել դպրոցներու փակման դիմաց ազգի անդամներու կրաւորականութիւնը: Ի՞նչ կը բանին հանրային կարծիքը առաջնորդելու կոչուածները եւ կառոյցները:

Սփիւռքի համար ոչինչ չկայ աւելի աւերող, քան հայ դպրոցի փակումը:

Սրահի մը մէջ հաւաքուիլ արժէքներու ցուցադրութեան համար կամ տարին անգամ մը փողոց իջնել դաս մը պաշտպանելու համար, պիտի չփոխարինեն հայ դպրոցը:

Այս գիտակցութեամբ ճակատ պէտք է յարդարել, զօրաշարժի ենթարկել հայ զանգուածները, աստ եւ անդ, դպրոցի մը փակման որոշում կայացնողներուն դէմ, եւ պայքարի՛ որպէսզի մեր դպրոցները տոկան եւ տեւեն իրենց իրաւ ազգային ծրագիրով: Պէտք է գիտնալ, թէ ո՞ւր եւ ինչո՞ւ ներդրումներ կ ըլլան, միշտ նկատի ունենալով սփիւռքի ազգային ինքնութեամբ տոկալու եւ տեւելու անմիջական եւ հեռանկարային գաղափարախօսութիւնը»:

Այնպէս որ, հարգարժան այրեր, ՀԲԸՄ ղեկավարներ, դպրոց ու կրթարան փակելու որոշում ընդունելուց առաջ ձեզ նեղություն տվեք եւ մի պահ մտածեք, թե ձեր նախորդներն ինչ դժվարություններով, ինչ պատնեշներ հաղթահարելով ու զոհողություններով են ստեղծել ու ձեզ փոխանցել այն ամենը, որ այսօր տնօրինում եք եւ նոր միայն որոշում կայացրեք: Միշտ հիշեք, որ տնօրինելը չի նշանակում սեփականել, որ այդ արժեքները բոլորինն են, ազգին ու նրա յուրաքանչյուր անդամինը:

⇨7 Մի կողմից նա դա վերագրում է «աճող լարվածությանը, որն առաջացել էր կիլիկյան հոգեւորականների ազատամտության եւ Հայաստանի հոգեւորականության պահպանողականության պատճառով», իսկ մյուս կողմից՝ այն փաստին, որ «սփյուռքի մեծ մասն ավելի հակասովետական էր»: Հայ եկեղեցում առկա ներկայիս հերձվածը չպետք է օրինականացվի՝ թելադրելով, որ դա 1441 թ. տեղի ունեցած իրադարձության շարունակությունն է [(«Պէտք չէ մոռնալ, որ Կիլիկեան Աթոռը հերձուած մըն է, որ պէտք չէ նուիրականացմամբ տեւականացուի» (Տիրան արք. Ներսոյեան, Վավերագրեր, գիրք 12, Երեւան, 2004 թ., էջ 417), երբ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո կաթողիկոսությունը փոխադրվեց իր ծննդավայր՝ Վաղարշապատ: Հարկ է նշել, որ կիրառվում է փոխադրվել կամ վերադառնալ եզրը, եւ [աթոռի փոխադրման] տոնը համընկնում է մեր Տիրոջ Համբարձման տոնին: Այս եզրը օգտագործվում է շատ կարեւոր եկեղեցաբանական պատճառներով: Աթոռի տեղաշարժը մի վայրից մյուսը որեւէ կերպ չի ազդում գործող կաթողիկոսների դիրքի, իրավասության եւ իշխանության վրա: Կաթողիկոսը ոչ թե Էջմիածնի կաթողիկոսն է, այլ [նրա նստավայրն է] Էջմիածնում: Տեղանքն ինքնին ամբողջովին երկրորդական է: Բայց Եկեղեցու առաջնորդի իրավասության հարցում միասնությունն առաջնային է: Որոշ քաղաքներ ունեն նվիրական զուգորդումներ/ասոցիացիաներ. մեր Տեր Հիսուս Քրիստոս խաչվեց եւ հարություն առավ Երուսաղեմում, Պետրոս եւ Պողոս առաքյալները նահատակվեցին Հռոմում, Էջմիածինն «Աստծո Միածին Որդու» իջման վայրն է: Անտիոքի պատրիարքի նստավայրն այժմ Դամասկոսում է, բայց նա կոչվում է Անտիոքի պատրիարք, Ղպտի եկեղեցու Պապի նստավայրը Կահիրեում է, բայց նա պահպանում է Ալեքսանդրիայի պատրիարքի կոչումը: Հռոմի Պապն Ավինյոնում աքսորի ժամանակ շարունակում էր իրեն անվանել Հռոմի եպիսկոպոս, իսկ հայ կաթողիկոսները Կիլիկիայում եղած ժամանակ պահպանում էին Վաղարշապատի եպիսկոպոս կոչումը:

# Որպես «Սառը պատերազմի» ժամանակաշրջանից մնացած խորհրդանիշ

Աթոռը կամ քաղաքը ձեռք են բերում որոշակի սրբություն եւ դառնում Եկեղեցու ինքնության եւ շարունակականության խորհրդանիշը: Փոխադրման համար պատճառ դարձան մամելյուկների շարունակական հարձակումների եւ Հայ եկեղեցու լատինականացման սպառնալիքները: Սուրբ Աթոռը հենց Հայաստան փոխադրելու ցանկությունը խթանել են ոչ թե Հայաստանի «պահպանողական» հոգեւորականները, այլ Կիլիկիայի այնպիսի հայտնի կաթողիկոսներ, ինչպիսիք են՝ Սբ. Գրիգոր Գ Պահլավունին (կաթողիկոս՝ 1113-1166 թթ.) եւ նրա իրավահաջորդ Ներսես Դ Կլայեցին, որ կոչվում է Շնորհալի (կաթողիկոս՝ 1166-1173 թթ.), որն իր «Թուղթ ընդհանրական»-ում իրեն կոչում է «Ամենայն Հայոց Կաթողիկոս»՝ փոխարինելով «Կաթողիկոս Հայոց Մեծաց» սահմանումը:



Իր եկեղեցաբանության մեջ Հայ եկեղեցին հետեւում է առաքելական կանոններին եւ առաջին երեք տիեզերաժողովների կանոններին: Հայ եկեղեցու առաքելական հատկանիշերը հիմնված են Սուրբ Բարդուղիմեոս եւ Սուրբ Թադեոս Առաքյալների ուսմունքների վրա: Առաքելական իշխանությունն ու իրավասությունը փոխանցելի չեն, ուստի շփոթեցնող է հնչում. «Երկու կաթողիկոսները հավասար են իրենց աստիճանով եւ ունեն նույն եկեղեցական իշխանությունը, պարտականությունները, իրավունքներն ու արտոնությունները Հայ եկեղեցուց ներս» (էջ 74): Չեն կարող լինել բազմաթիվ կաթողիկոսություններ տարբեր վայրերում:

Կոստանդնուպոլսի ժողովի 2-րդ կանոնը հստակ ասում է.

«Որք արտաքոյ քան զիւրեանց կարգաւորութիւն են եպիսկոպոսք, քան զիւրեանց սահմանս որ եկեղեցիքն են, ոչ պարտ է ի վերայ երթալ եւ շփոթել զեկեղեցիսն, այլ ըստ կանոնիցն», «Իսկ անկոչք եպիսկոպոսք որք արտաքոյ կարգաւորութեանն են՝ ոչ ի վերայ երթալ առ ի ձեռնադրել եւ կամ այլ ինչ իմիք եկեղեցական տնտեսութեան» [Կանոնագիրք հայոց, հտ. Ա, էջ 274]: Այս եկեղեցաբանությունը վերաբերում է նաեւ կաթողիկներին, որի իրականացումը սերտ կապված է առաջնորդության հետ: Առաջնորդությունը պետք է ստանձնել 34-րդ առաքելական կանոնի ոգով.

«Զեպիսկոպոսունս իւրաքանչիւր ազգի դիտել պարտ է զիւրեանց առաջինսն եւ համարել պարտ է իբրեւ զգլխաւոր. Եւ մի՛ ինչ աւելորդ առնել առանց նոր կամաց՝ բայց զայն միայն իւրաքանչիւր ումեք որչափ իւրում իշխանութեանն անկ է եւ որք ընդ նովաւ տեղիքն են. այլ եւ ոչ նմա առանց նոցա կամաց առնել ինչ, զի այսպէս միաբանութիւն իցէ եւ փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յիսուսի եւ սրբոյ Հոգւոյն» [Կանոնագիրք հայոց, հտ. Ա, 83-84 էջեր]:

1991-ին Խորհրդային Միության փլուզման արդյունքում Ուղղափառ եկեղեցին աննախադեպ դերակատարության ունեցավ ռուս հասարակության մեջ: Մոսկվայի պատրիարքարանը 80 տարի անց նորից իր մեջ ընդգրկեց Խորհրդային Միությունից փախած մոնարխիստների կողմից Արեւմուտքում հաստատված հակառակորդ խմբակցությանը: Ռուսական սփյուռքը վերականգնեց կապերը մայր եկեղեցու հետ՝ շքեղ տաճարում կատարված արարողության ժամանակ: Պատրիարք Ալեքսի Բ այն անվանեց պատմական օր. «Մեր հայրենիքի եւ եկեղեցու վերաբնակեցված զավակներին ի մի բերելու օր»:

Վազգեն Ա Կաթողիկոսի մահից հետո, 1995 թ-ին ժողովրդի ընտրությամբ Կիլիկիայի Գարեգին Բ Կաթողիկոսը դարձավ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա Կաթողիկոս՝ հույս ունենալով, որ երկու աթոռների միջեւ մրցակցությունը կդադարի: Ներկայիս կաթողիկոսը եւ գրախոսվող հատորի հեղինակը, կեղծ եւ անպատեհ ենթադրություններ անելով, նախանձախնդրորեն խուսափել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս դառնալու ժամանակ իր իսկ առաջադրած մարտահրավերից: Սրանք 1995 թ. հուլիսի 1-ին իր օծման արարողության ժամանակ արտասանած նրա քարոզի խոսքերն են.«Միասնությունը Աստծո պարգեւն է. այն նաեւ կոչ է: Եկեք չկորցնենք այս ոսկե հնարավորությունը՝ հանուն մեր եկեղեցու եւ ժողովրդի: Եկեք արձագանքենք Աստծո այս կոչին քաջությամբ, խոնարհությամբ եւ մեր նախնիներին եւ մեր ընդհանուր նպատակին հավատարիմ մնալով» (Հավակնոտ աշխարհում եկեղեցի լինելու մարտահրավերը, էջ 13): Արամ Ա կաթողիկոսը, իր նախորդի նման, մեծ ջանքեր է գործադրել եկեղեցիների միության հարցում ԵՀԽ-ի շրջանակներում, եւ հեգնական է, որ «սառը պատերազմի» արդյունքում առաջացած հերձվածը Հայ եկեղեցում շարունակում է մնալ որպես «սառը պատերազմի» դարաշրջանի խորհրդանիշ:

## Օգտագործված աղբյուրներ

- *Վազգեն Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, Հտ.Ա-Բ. ՀՍՍՌԳԱ, Երեւան,1964, 1971.*
- Գարեգին Ա Յովսեփեանց,Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1867-1952), Փաստաթղթեր եւ Նիւթերի Ժողովածու: Հատոր Ա:Սուրբ Էջմիածին, 2017, էջ 720
- Տիրան Արք.Ներսոյան (1904-1989 թթ.), Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության: Գիրք ԺԲ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ. 818

*Vrej.nersessian@ntlworld.com*

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 9



# Ավարտվեց երկար սպասվող Թրամփ-Էրդողան հանդիպումը

➩1 Ընդդիմությունն էլ, ի դեմս Ժողովրդա-հանրապետական եւ «Լավ» կուսակցությունների, մտահոգված էր, որ հանդիպմանը Էրդողանը հանցավոր լռությամբ, ինչպես Թրամփի հոկտեմբերի 9-ի տխրահռչակ նամակի դեպքում էր, կրկին թույլ կտա ԱՄՆ-ում ոտնակոխ անել Թուրքիայի «ազգային արժանապատվությունը»:

Մտահոգված էր նաեւ Էրդողանը: Թվում է, թե նրա տեսակետից ամենամտահոգիչը հոկտեմբերի 17-ին փոխնախագահ Մայք Փենսի պատվիրակության հետ Անկարայում ստորագրված թուրք-ամերիկյան համաձայնագրից, իսկ հոկտեմբերի 22-ին Սոչիում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ համատեղ ընդունած հուշագրից հետո Սիրիայի հյուսիս-արեւելքում տեղի ունեցած քաղաքական զարգացումներն են: Այն առումով, որ դրանք փաստորեն ստիպեցին Էրդողանին դադարեցնելու «Խաղաղության աղբյուր» գործողությունները, Սիրիայի հյուսիս-արեւելքում, ընդ որում առանց «անվտանգ» գոտին ընդարձակելու, առավել եւս քուրդ «ահաբեկիչներին» արմատախիլ անելու: Ավելին, Սոչիի հուշագրից հետո, երբ Թրամփը մեղադրվեց ամերիկյան զինվորներին դուրս բերելու որոշումով Սիրիայում նախաձեռնությունն ամբողջովին Ռուսաստանին եւ նախագահ Բաշար Ասադի վարչակարգին զիջելու մեջ, այդ զինվորները վերադարձան, տեղակայվելով մասնավորապես Հասաքեում եւ Ռաքքայում:

Ամերիկացի զինծառայողների հետ բնակության նախկին վայրեր վերադարձան նաեւ քրդական ուժերը: Այսպիսով Թուրքիայում կասկածի տակ դրվեց «Խաղաղության աղբյուր» գործողությունների նպատակահարմարությունը: Վերադարձը դեռ մի կողմ, ամերիկացիները պատրաստակամություն հայտնեցին քրդական ուժերին զիջել Ռաքքայի նավթահանքերից ստացած եկամուտի 20 %-ը, էլ չենք խոսում Սիրիայի դեմոկրատական ուժերի հրամանատար Մազլում Քոբանիին գեներալ հորջորջելու եւ նրան Վաշինգտոն հրավիրելու նախագահ Թրամփի արարքի մասին, ինչը թերեւս ավելի քան անընդունելի էր Էրդողանի համար: Այդ ընթացքում հայտնի դարձավ, որ նոյեմբերի 4-ին Էրդողանը Թրամփից ստացել է նաեւ 2-րդ նամակը, որտեղ ԱՄՆ նախագահը պահանջում էր չգործարկել ռուսական S-400 հակաօդային պաշտպանական համակարգերը եւ Ռուսաստանից այլեւս զենք չգնելու հավաստիացում տալ: Հոկտեմբերի 12-ին, երբ Էրդողանը պատրաստվում էր ուղեւորվել Վաշինգտոն, S-400 համակարգերին CBS հեռուստատեսության ուղիղ եթերում անդրադարձավ նաեւ ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական **Ռոբերտ Օբրայենը**, ասելով. «Եթե Թուրքիան չձերբազատվի S-400-ից, ապա Կոնգրեսը կհաստատի պատժամիջոցների մասին օրինագիծը եւ Թուրքիան անխուսափելիորեն կբախվի դրանց հետեւանքներին: Մենք այդ մասին պարզորոշ ասել էինք նախագահ Էրդողանին: Ռուսական համակարգերն անհամատեղելի են ՆԱՏՕ-ի հետ»:

Ուղեւորվելուց առաջ, Անկարայի օդակայանում **Էրդողանը** ԱՄՆ նախագահի հետ հանդիպման օրակարգի առնչությամբ որոշ պարզաբանումներ տվեց թուրք լրագրողներին: Նա մասնավորապես նշեց, որ այցը իրականացնում է թուրք-ամերիկյան հարաբերությունների առումով անառողջ մթնոլորտում, քննարկելու են ահաբեկչության դեմ պայքարի, ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության եւ միջպետական առեւտրի խնդիրները, դրա ծավալները 20 միլիարդից 100-ի հասցնելու ենթատեքստում: Խոսեց Ֆեթուլլահ Գյուլենի Թուրքիա հանձնման մասին, Իրաք-Շամ իսլամական պետության ահաբեկիչների դեմ պայքարը հետեւողականորեն շարունակելու վճռականության, ինչպես նաեւ նրանցից ոմանց վերադարձնելու մասին այն երկրներ, որտեղից եկել են, դռները բացելու պատրաստակամությամբ վերստին սպառնաց Եվրոպական երկրներին, ընդգծեց, որ հարկ եղած դեպքում կարող են հրաժարվել Եվրոպական Միության հետ ծավալվող անդամակցության բանակցություններից, ապա անուղղակի քննադատեց նախագահ Թրամփին, թե Ֆերհադ Աբդի Շահինը, այսինքն Մազլում Քոբանին, արյունարբու մարդասպան է, ինքը փաստերով դա կապացուցի հանդիպմանը, մի՞թե կարելի է շփվել այդ մարդասպանի հետ: Թեեւ Էրդողանը գանգատվեց ամերիկյան կողմից` ձեռք բերված պայմանավորվածությունները լիարժեք չկատարելու համար, բայցեւայնպես նշեց, որ երկկողմ հարաբերությունները զարգացնելու հարցում ինքն ու Թրամփը համամիտ են:

Լրագրողների հարցերին պատասխանելիս Էրդողանը կրկին անդրադարձավ քրդական ուժերին, մասնանշեց, որ հակառակ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների, «ահաբեկիչները» չեն հեռացել նախանշված վայրերից, ավելացնելով. «Չենք կարող ասել, որ նրանք ազատել են Մանբիջը: Մենք նրանց մասնակի հանդիպում ենք Թել Աբյադում, Թել Ռիֆաթում: Այս հարցերը հանդիպմանը բարձրացնելու ենք մեծարգո Թրամփի առջեւ, ինչպես նաեւ հանդիպումից հետո հեռաձայնելու ենք նախագահ Պուտինին»: Լրագրողի հարցին ի պատասխան նա նշեց Թրամփի ուղարկած երկու նամակը ես վերադարձնելու մասին:

Երբ Էրդողանը ինքնաթիռում ուղեւորվում էր Վաշինգտոն, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 15 դեմոկրատական եւ 2 հանրապետական անդամներ, ինչպես նշել էր BBC-ին, նամակով դիմեցին նախագահ Թրամփին, պահանջելով չեղյալ հայտարարի իր հրավերը Էրդողանին, քանի որ ստեղծված իրավիճակում Էրդողանի այցը Միացյալ Նահանգներ միանգամայն աննպատահարմար է: Իհարկե դա տեղի չունեցավ: Ավելին, Սենատի օրակարգից հանվեց նաեւ Թուրքիայի դեմ պատժամիջոցների կիրառման օրինագիծը, որն իրականում կոչվում է «Սիրիայում Թուրքիայի օկուպացիան կասեցնելու մասին», որտեղ հատուկ հոդվածով շոշափվում է Էրդողանի ու նրա ընտանիքի անդամների ունեցվածքի հարցը, ինչը խորապես մտահոգում, ավելի քան կաշկանդում էր Թուրքիայի նախագահին: Փոխարենը, սակայն, Պենտագոնը հայտարարեց, որ չեն պատրաստվում քրդական ուժերի հետ համագործակցությունից: Այս հայտարարությունն էլ պետք է մտահոգի ու կասկածանքի Թուրքիային, որովհետեւ ԱՄՆ պաշտպանության նախարար **Մայք Էսփերն** ասաց, որ իրենք դեռեւս չեն կողմնորոշվել Սիրիայում տեղակայվող զինծառայողների թվակազմի հարցում: Ներկայումս այդ թիվը 500-ից 600 է, ինչը նավթահորերը վերահսկելու հնարավորության հազիվ թե տա ամերիկացիներին: Սա խոսում է դրանք քրդական ուժերով պաշտպանելու Պենտագոնի մտադրության մասին: Եթե այդպես է, կնշանակի ամերիկացիները չեն հրաժարվել քրդական ծրագրերից:



Ինչ վերաբերում է Թրամփ-Էրդողան հանդիպմանը, ապա երկու երկրների նախագահներն ունեցել են առանձնազրույց, ապա համատեղ մամուլի ասուլիս են տվել, որից հետո բանակցությունները շարունակվել են ընդլայնված կազմով, պատվիրակությունների մասնակցությամբ: Թրամփ-Էրդողան առանձնազրույցը տեւել է մեկ ժամ 15 րոպե: Հաշվի առնելով այն, որ 3 րոպեն նախագահներին լուսանկարելու կամ տեսագրելու համար հատկացվում է լրագրողներին եւ Թրամփը Էրդողանի հետ շփվել է թարգմանիչի միջոցով, ապա պետք է որ առանձնազրույցի ժամանակը կրճատվի կիսով չափ, դառնալով 42 րոպե: Ի դեպ, մամուլի ասուլիսը սկսել է մեկ ժամ ուշացումով եւ հակառակ Էրդողանի հավաստիացման, թե ընդգրկուն է լինելու, եղել է բեմադրություն, վատ սցենարով: Թերեւս այդ առումով պատահական չէին Թրամփի ելույթից հետո հնչած խոսքերը. «Բարեկամ լրագրողներից բարեկամական հարցեր ենք ակնկալում»:

Ամբիոնին նախ մոտեցավ նախագահ **Թրամփը**, ասաց, որ ինքը Էրդողանի երկրպագուն է, վերջինի հետ առանձնազրույցը համարեց շատ արդյունավետ եւ նույնքան էլ հրաշալի, ռազմական գործողությունները Սիրիայում դադարեցնելու առնչությամբ գովեստի խոսքեր շռայլեց Թուրքիայի հասցեին, գոհունակությամբ նշեց Իսլամական պետության դեմ պայքարում ԱՄՆ-ի հետ Թուրքիայի համագործակցության մասին: Նա անդրադարձավ ռուսական S-400 համակարգերին, ասաց, որ թուրքիայի համառությունն այս հարցում դժվարին կացության մեջ է դնում ԱՄՆ-ին: Այնուհետեւ Թրամփը Թուրքիային համարեց ՆԱՏՕ-ի գծով կարեւոր դաշնակից, ինչ վերաբերում է քրդերին, ապա շեշտեց, որ նրանց հետ հրաշալի հարաբերությունների մեջ են:

Էրդողանը ելույթում ԱՄՆ-ի նախագահին անվանեց իր թանկագին բարեկամը, անդրադարձավ Իսլամական պետության ահաբեկիչների հետ պայքարին, ապա քուրդ «ահաբեկիչներին», վերջիններիս դեմ համատեղ պայքարի կոչ արեց նախագահ Թրամփին, խոսեց Թուրքիա ապաստանած սիրիացի փախստականներից, ընդգծելով, որ Թուրքիան 40 մլրդ. դոլար է ծախսել նրանց կարիքները հոգալու համար, ընդգծեց «անվտանգ» գոտին ընդլայնելու, դա Իրաքի սահմանից մինչեւ Ջարաբլուս հասցնելու, ինչպես նաեւ Դեր Զորն ու Ռաքքան գոտու մեջ ընդգրկելու անհրաժեշտության մասին, որպեսզի հնարավոր լինի մեկ մլն փախստականի վերաբնակեցնել Սիրիայի հյուսիսում, իսկ մեկ միլիոնին էլ Դեր Զոր-Ռաքքա հատվածում: Ապա նա նշեց, որ S-400 համակարգերի եւ ամերիկյան F-45 ինքնաթիռների հարցը լուծելու են ԱՄՆ-ի հետ երկխոսության միջոցով:

Էրդողանն այնուհետեւ գանգատվեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Ներկայացուցիչների պալատի որոշումից, անդրադարձավ քուրդ առաջնորդ Մազլում Քոբանիին, հայտնելով իր տարակուսանքը, թե ինչպես կարելի է գործընկերոջ տեղ դնել եւ շփվել այդ ահաբեկչի հետ: Չմոռացավ Վաշինգտոնում եւս փախստականներով սպառնալ ԵՄ-ի երկրներին:

Ինչ վերաբերում է լրագրողների հարցերին, ապա դրանք Թրամփի դիպուկ արտահայտությամբ միանգամայն բարեկամական էին, ուստի հարկ չենք համարում անդրադառնալ դրանց: Պարզապես ասեմ, որ ես Թրամփ-Էրդողան հանդիպման ավարտին հրավիրված ասուլիսին հետեւում էի «Halk TV-ի» էկրանից, դրա ավարտին հաղորդավար **Էնվեր Այսերը** դա անվանեց խայտառակություն, կարծես ընդգծելու, որ երբեմն խայտառակ են լինում նաեւ բեմադրությունները:

## Վետո` ԱՄՆ սենատում ընդդեմ Ցեղասպանության բանաձեւի



Լինսի Գրահամ

**ԱՄՆ-ի հանրապետական սենատոր Լինսի Գրահամը վետո է կիրառել է մեկ այլ սենատորի` Բոբ Մենենդեսի կողմից սենատ բերված Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծի դեմ: Գրահամի վետոյով արգելափակվել է Սենատի լիագումար նիստում օրինագծի քննարկումն ու քվեարկումը:**

**ԱՄՆ-ի օրենսդրության համաձայն, նույնիսկ մեկ սենատորի վետոյով կարող է արգելափակվել սենատ բերված որեւէ օրինագծի քննարկումն ու ընդունումը:**

**Սենատորն այդ որոշումը կայացրել է Վաշինգտոն մեկնած Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի եւ ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի հետ հանդիպելուց հետո:**

**Օրինագիծն արգելափակած Գրահամը հետեւյալ կերպ է մեկնաբանել իր քայլը. «Քիչ առաջ Սիրիայում Թուրքիայի կողմից իրականացվող ռազմագործողությունների հետեւանքները քննարկել եմ նախագահներ Էրդողանի ու Թրամփի հետ: Հուսով եմ, որ Թուրքիան ու Հայաստանը կնստեն սեղանի շուրջ ու կքննարկեն այդ խնդիրը (ցեղասպանության): Սենատորները չպետք է պատմությունը վերաշարադրեն ու այն ներկայացնեն ոչ այնպես, ինչպիսին որ կա»:**

**Սենատորն հավելել է նաեւ, որ ինքն այդ որոշումը կայացրել է ոչ թե անցյալին նայելով, այլ կենտրոնանալով թուրք-ամերիկյան հարաբերությունների ապագայի վրա:**

**Հիշեցնենք, որ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հոկտեմբերի 29-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ էր ընդունել, ինչից հետո սենատորներից ոմանք հայտարարել էին Կոնգրեսի վերին պալատում` Սենատում, նմանատիպ բովանդակությամբ օրինագիծ քննարկելու ու քվեարկության դնելու անհրաժեշտության մասին:**

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 10



# «Արժե՞ք գրել ի գին ցմահ բանտարկության»

***Ստորեւ թարգմանաբար ներկայացվող Ռոդ Նորդլենդի հոդվածը լույս է տեսել «Նյու Յորք Թայմսի» հոկտեմբեր 24-ի համարում:***

Խղճի ազատության համար բանտարկված գրողը ավելի մեծ հեղինակություն է վայելում, քան ազատության մեջ գտնվողը: Ցանկանալով իմանալ արդեն երեք տարի անազատության մեջ գտնվող՝ «**Ես այլեւս երբեք չեմ տեսնի աշխարհը**» գրքի թուրք հեղինակ (տես «**ԱԶԳ**-ի» 19 ապրիլի համարը) 69-ամյա **Ահմետ Ալթանի** կարծիքն այդ մասին, ես վերոնշյալ հարցը տվեցի նրան: Ասեմ, որ մեր հարցազրույցը կայացել է թաքուն, «մաքսանենգ» ճանապարհով, ինչպես Ալթանի հատորը, որը հրատարակվել է իր փաստաբանին փոխանցված գրառումները ի մի բերելով: Նրա պատասխանը անկեղծ էր: «Այո, արժեր: Ես երկու բան կասեմ իմ մասին: Առաջինն այն է, որ եթե չեմ գրում, հասարակ ոչնչություն եմ դառնում: Տարբերություն չկա՝ ներկա եմ, ողջ եմ, թե բացակա, մեռած: Գրելն ինձ պաշտպանում է այդ ոչնչությունից: Երկրորդը՝ շատ անհանգիստ մարդ եմ եւ գրելն ինձ այդ անհանգստությունից է ազատում»:


Ահմետ Ալթանի




Մենք նույն ճակատագիրն ենք կիսում: Երկուսս էլ ցմահ բանտարկության ենք դատապարտված: Ինքը քաղաքական հետապնդումների հետեւանքով, ես՝ անողոք հիվանդության: Երբ հաջող նախադասություն կամ հոդված եմ գրում, ես ավելի ճիշտ եմ հասկանում նրա խոսքերը:

Նրա գրքի վերնագիրը հուսահատության ճիչ չէ, այլ դաժան իրականության փաստագրում: 212 էջերում ամրագրված միտքն այն է, որ մտածողությունը բանտարկել հնարավոր չէ: «Ես բանտախցում եմ գրում, բայց բանտում չեմ զգում ինձ», գրում է նա՝ հիշատակելով բանտային կյանքի «ահաբեկիչ տեռորի կրակները», ինչպես ինքն է բնորոշում: Նա չի կարող իր ուզած ժամին ճաշել, լողանալ կամ մարմնամարզությամբ զբաղվել: 11 հազար քաղբանտարկյալներ «հյուրընկալող» հաստատությունում «հայելիներ չկան, եւ դու չես կարող ինքդ քեզ հետ հաղորդակցվել»:

2016-ի հուլիսի 14-ին Ալթանն ու եղբայրը՝ Մեհմետը, տնտեսագիտության դասախոս, մասնակցել էին Նազլի Իլիչակի հեռուստածրագրին: Հաջորդ օրը Էրդողանի կառավարության դեմ կազմակերպված հեղաշրջման փորձը ճնշվեց, բայց խորհրդարանի շենքը ռմբակոծվեց, եւ 300 հոգի էլ մահացան: Հաղորդումը կազմակերպողն ու Ալթան եղբայրները ձերբակալվեցին (Մեհմետը հետո ազատ արձակվեց) հեղաշրջմանը սատարող ենթատեքստեր պարունակող արտահայտություններ հնչեցնելու համար:

Ինձ էլ են արգելել Թուրքիա մուտք գործել քուրդ փոքրամասնությանը պաշտպանող հոդվածներիս համար: Երբ ես հարցրեցի Ալթանին, թե ի՞նչ կաներ, եթե զրկեին իրեն թուղթ ու գրչից, նա պատասխանեց. «Թեեւ չեն արել ցարդ, բայց իհարկե կարող են առգրավել գրիչներս ու թղթերս: Սակայն առայժմ ձեւացնում են, թե կատարվածը անկախ դատավորների վճիռն էր: Գիրքս մի քանի եվրոպական լեզուներով հրատարակվել էր նախքան Ամերիկայում լույս տեսնելը, եւ եթե գրելն արգելեն ինձ, ավելի ծանր պայմաններում կհայտնվեն իրենք՝ արդարացնելու համար իրենց կատարածը»:

«Իսկ չե՞ք վախենում ավելի ծանր փոխվրեժից» հարցիս նա պատասխանեց. «Այս պատերի ներսում գրելը ազատություն է պարգեւում ինձ: Վախը ինքնին միշտ էլ ավելի սարսափելի եւ վտանգավոր է, քան այն, ինչից դու վախենում ես: Վախը քեզ պատանդ է վերցնում եւ սպանում քո մեջ դիմադրությունը, իսկ բանտում դա ավելի ճակատագրական է, քան որեւէ այլ տեղ: Հասկանում եմ ձեր մտահոգությունը, բայց այստեղ ես իմ «գրությունները» պահպանելու մի լավ, արդյունավետ ձեւ եմ գտել, զբոսանքների ժամանակ մտքումս անդադար կրկնում եմ նախադասությունները, մինչեւ որ անգիր եմ անում դրանք: Այնպես որ, եթե նույնիսկ առգրավեն թղթերս, գործն ամբողջությամբ կորած չի կարելի համարել: Դժվար է, բայց ընտելացել եմ դրան»:

Բացի «I Will Never See The Worid Again» գրքից, Ահմետ Ալթանը հեղինակել է նաեւ «Like a Sword Wound» (Ինչպես թրի պատճառած վերքը) եւ «Endgame» (Ավարտախաղ) գրքերը: Այլախոհությունը նրա ընտանիքի տարերքն է եղել: Հայրը՝ բանավեճային լրագրող եւ պատգամավոր, նույնպես հետապնդվել է իշխանությունների կողմից: Հիացած եմ այս ընտանիքով եւ ցանկանում եմ մեջբերել այստեղ «Այլեւս երբեք չեմ տեսնի աշխարհը» գրքի վերջաբանը, որտեղ նա ասում է. «Դուք կարող եք բանտարկել ինձ, բայց ոչ իմ մտքերը, որովհետեւ կախարդական փայտիկի միջոցով ես կարող եմ հեշտությամբ քանդել այս պատերը եւ դուրս սողոսկել»:

**Պատրաստեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

# Ջերմոցատերերի սմբուկը, իշխանավորների էլ... թմբուկը

Հայաստանյան տնտեսվարական միտքը, որքանով որ այն կա, վերջին շրջանում հաճախ է նշում գնաճը կառավարելու ուղղությամբ իր ջանքերի արդյունավետությունը, գործընթացը հիմնավորելով հայկական արժույթի կայունությամբ: Որ այս ընթացքում պարբերաբար ամերիկյան ու եվրոպական արտարժույթ է գնվում-վաճառվում, Կենտրոնական դրամատունը ֆինանսական տոկոսադրույքների իջեցում-բարձրացում է իրականացնում, իր ծախսերն ու աշխատավարձերը բարձրացնում, դրանք կարծես ոչինչ. կարեւորը՝ ՀՀ դրամը կայուն է, պետական պարտատոմսերն էլ պահանջված, ոչինչ որ դրանք ձեռքբերողները 4 տոկոսից բարձր եկամուտներ են ստանալու, երբ արտերկրներում դրանք 1 տոկոսի սահմաններում են: Տնտեսվարողների ու նրանց ձայնակցող տնտեսագետների մի ստվար հատված էլ սկսել է պնդել, որ կայացող տնտեսություններ ունեցող երկրների համար անհրաժեշտությունից առավել պարտադիր է նաեւ գնաճի գործոնը, այնպես որ կարիք չկա զսպել գների աճը, քանզի այդկերպ անուղղակի խոչընդոտվում է արտադրողների՝ սեփական արտադրություններն ընդլայնելու ցանկություն-պահանջը, տնտեսական զարգացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը:




Դե եկ ու բան հասկացիր այսօրինակ տնտեսավարումից ու տնտեսագիտության հայկական կոչվող տարբերակից: Օրեր առաջ հայաստանյան առեւտրային ողջ ցանցում, մեր խոհանոցներում հաճախ պատրաստվող, ասենք սմբուկի կիլոգրամը վաճառվում էր 120-160 դրամով: Հայերս հաճույքով ենք վայելում այն, քանզի պտուղը պարունակում է սպիտակուցներ, շաքարներ, աննշան քանակի ճարպեր, կալցիում, ֆոսֆոր, երկաթ, աղեր: Այսքանով հանդերձ այն ունի ցածր կալորիականություն, սննդաբանների կազմած աղյուսակներում սմբուկի 100 գրամի դիմաց նշվում է 24 կալորիա ցուցանիշ, ասել է թե չի գիրացնում, դյուրամարս է: Եվ հանկարծ, նոյեմբերի առաջին տասնօրյակի մի սովորական օր այն առեւտրային ցանցում հայտնվում է կիլոգրամը 960 դրամ գնով, որը նախորդ շրջանի գների համեմատ 600-800 տոկոս գնաճ է կազմում: Ինչ գնահատական տալ այս երեւույթին, որը տարածվում է նաեւ լոլիկի, վարունգի, պղպեղի, այլ բանջարեղենների գնագոյացման վրա, նշված կամ մի փոքր պակաս գնաճի տոկոսների տեսքով: Պարզվում է պատճառը մեկն է. բաց դաշտավարության պայմաններում աճեցված բանջարեղենը վերջացել է, առեւտրային ցանց է բերվել ջերմոցային տնտեսությունների բերքը, որը զգալի բարձր ինքնարժեքով է արտադրվում: Թե ինչու եւ ինչքանով զգալի, չի ասվում, այլ ընդամենը հիշեցվում է ջերմոցային տնտեսություն վարելու դժվարություններն ու խնդիրները: Որ ջերմատների բավարար առկայության պայմաններում էլ ջերմոցային տարածքներն ավելանում են, հեկտարներն ընդլայնվում,այս առումով ոչ մի տրամաբանված բացատրություն: Բայց չէ որ ջերմոցային տնտեսությունների սեփականատերերը հաճախ են հեռուստախցիկների առաջ հպարտանում, որ քառակուսի մետրի հաշվով, ասենք լոլիկի միջին բերքատվությունը 40-50 կգ է կազմում, երբ բաց դաշտավարության պայմաններում այն անգամ 4-5 կիլոգրամի չի հասնում: Հավելենք ասվածին նվազագույն աշխատուժի անհրաժեշտությունը, ջերմատներին տրվող գազի ցածր գինը, հաճախակի սահմանվող որոշակի հարկային արտոնությունները, կստացվի, որ զգալի բարձր ինքնարժեքի մասին հավաստիացումները խիստ կասկածելի են:

Պարզից էլ պարզ է, որ տնտեսական գործունեության առանցքային մաս հանդիսացող առաջարկ-պահանջարկի, հայաստանյան հանրության հիմնական հատվածի սակավ գնողունակության պայմաններում աննախադեպ գնաճով առաջարկվող բանջարեղենային պարենհումքի որոշակի ծավալներ վաճառասեղաններին ու պահեստներում կմնան, կնվազի դրանց սպառումը, հետեւաբար նաեւ արտադրության ծավալները, աշխատանքի ու աշխատատեղերի անհարկի կորուստներ կարձանագրվեն, կտուժի ՀՀ որոշակի ոլորտային տնտեսությունը... Ինչպես բարելավել ու բարեփոխել այս  վիճակը, որը որեւէ խնդիր չի դիտարկվում երկիր մոլորակի շատ երկրներում, ուր հաղթահարվել է գյուղգործունեության հիմնախնդիրները դրանց սեզոնայնությամբ բացատրելն ու արդարացնելը, երբ մեզանում գերադասում են ինչ-ինչ ցուցանիշների թմբկահարումը: Պատկերված լուսանկարը վերցրել ենք եվրոպական սուպերմարկետներից մեկի գովազդային թերթիկից. փաթիլները հուշում են, որ ժամկետը նախաամանորյա շրջանն է: Թե ինչ գներ կսահմանվեն մեզանում արդեն այս օրերին կիլոգրամը 750 դրամով վաճառվող սովորական լոլիկի, չերրի տեսակի 1850 դրամի դիմաց, կպարզենք, կտեսնենք:

Իդեպ. եվրոպական երկրներում վաճառվող ապրանքների գնի 40-60 տոկոսը մուծվող հարկերն են, որոնք բյուջետային ծախսերի տեսքով վերադարձվում են հանրությանը եւ աշխատողներին վճարվող բարձր աշխատավարձերը: ՀՀ-ում բյուջե-ՀՆԱ հարաբերությունը 22 տոկոս է, աշխատավարձերն էլ ինքներդ գիտեք: Այնպես որ՝ սմբուկի գնով թե թմբուկ-դհոլի աղմուկով հարցը մեզանում օրակարգում է, պարզ չէ միայն՝ կարճ թե երկար ժամանակով:

**11.11.2019**

AZG NEW SHABAT.QXD 14/11/2019 21:45 Page 11



# Կարեւորը նավթն է, թե՞ քրդերը

## *Սիրիայում կստեղծվի ամերիկյան երեք ռազմակայան*

Վաշինգտոնը նոր փոփոխություն է կատարել Սիրիայում իր քաղաքականության մեջ: Եթե անցյալում նախագահ Դոնալդ Թրամփը խոսում էր այնտեղից ամերիկյան զորքերը դուրս բերելու մասին եւ իր հայտարարությամբ Թուրքիային նույնիսկ հրահրել էր սկսելու «Խաղաղության ակունք» ռազմական գործողությունը, ապա այժմ նա բարձրաձայնում է սիրիական նավթը իր վերահսկողության տակ առնելու ծրագրերի մասին:

Ամերիկացի զինվորականները մտադիր են պաշտպանել սիրիացի քրդերի վերահսկողությանը ենթակա մի ընդարձակ շրջան: Ինչպես նշում է The Associated Press-ը, Պենտագոնը առայժմ ստուգապես չի նշում Սիրիայում մնացող ամերիկյան զորաբաժնի թվակազմը, թեեւ որոշ փորձագետներ կարծում են, որ այնտեղ կմնա մոտ 800 զինծառայող: Ըստ որում, աշխարհի բազմաթիվ լրատվամիջոցներ, չգիտես ինչու, շեշտում են **Թրամփի** «Ես կպաշտպանեմ նավթը» արտահայտությունը: Նույնիսկ Սիրիայի նախագահ **Բաշար Ասադը** Թրամփին բնութագրել է որպես ամերիկացի նախագահներից լավագույնը, քանի որ «նա ազնվորեն խոսում է սիրիական նավթին տիրանալու իր մտադրության մասին»: Սակայն իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, ամեն ինչ ավելի բարդ է:

Նախ եւ առաջ, Թրամփը արձագանքում է Սիրիայի նավթառատ արեւելքում սահմանափակ զորաբաժին թողնելու Իսրայելի եւ Հորդանանի խնդրանքին: Երկրորդ, այդ շրջանը վերահսկում են Վաշինգտոնի դաշնակից սիրիացի քրդերը՝ Սիրիայի Դեմոկրատական ուժերը: ԱՄՆ նախագահը խոստացել է քրդերին օժանդակել ունենալու ինչ-ինչ դրամական հոսքեր: Մենք կարող ենք այնպես անել, որ մեր նավթային խոշոր ընկերություններից մեկը մուտք գործի այնտեղ, եւ որ ամեն ինչ ճիշտ լինի: Մանրամասն պարզաբանումներով հանդես է եկել ԱՄՆ ազգային հետախուզության հակաահաբեկչության պայքարի կենտրոնի ղեկավարի պաշտոնակատար **Ռասել Թրեվերսը**, որը հաստատել է վերոհիշյալ ծրագիրը: Ավելի վաղ, Պենտագոնի ղեկավար **Մարկ Էսպերը** հայտարարել էր, որ ԱՄՆ-ը մտադիր չէ այնտեղ թողնել ո՛չ Ռուսաստանին, ո՛չ էլ սիրիական զորքերին:

Նշենք, որ Սիրիային այդպես էլ չհաջողվեց փակել Իրաքի հետ իր սահմանը, որտեղից Սիրիա մտան ամերիկյան զորքեր եւ որոնք մտադիր են Իրաք տեղափոխել սիրիական նավթը: Վաշինգտոնը կարող էր նման քայլի չդիմել, եթե դա նախապես համաձայնեցրած չլիներ Էրբիլի իշխանությունների հետ, իսկ այս ձեւով կամուրջ է ստեղծվում սիրիացի եւ իրաքցի քրդերի միջեւ, եւ պայմաններ են ստեղծվում Սիրիայում քաղաքական կարգավորմանը խոչընդոտելու եւ տարածաշրջանային քաղաքականությունը փոփոխելու համար:

Ստեղծվում է հետեւյալ իրավիճակը. Սիրիայի արեւելքում ամերիկյան զորքը գրավել է Ռումեյլանի նավթային հանքավայրերը՝ M-4 միջազգային ճանապարհից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Այդ ճանապարհին պարեկություն են անում սիրիական ուժերը եւ Ռուսաստանի ռազմական ոստիկանությունը: Սիրիայի հյուսիս-արեւելքում ամերիկացիները մտադիր են ստեղծել երեք ռազմակայան, որոնցում կտեղաբաշխվեն Սիրիայից բերված զինծառայողներ: Բացի դրանից, ԱՄՆ-ը փաստորեն չի հեռացել 30 կիլոմետրանոց անվտանգության գոտուց, որը թուրքական բանակը ստեղծել է Սիրիայի սահմանի երկայնքով: Այնտեղ հարաբերական անդորրը պահպանվում է սահմանափակումների զանազան բաց եւ փակ համաձայնությունների հիման վրա, որոնք մասնավորապես ձեռք են բերվել Սոչիում Ռուսաստանի եւ Թուրքիայի նախագահներ Պուտինի եւ Էրդողանի հանդիպումների ընթացքում:

Ստեղծվող բարդ իրադրության մեջ դժվար է առանձնացնել այն գլխավոր հարցը, որն անհրաժեշտ է լուծել առաջին հերթին, քանի որ Սիրիայի նավթաբեր շրջաններում ամերիկացիների ներկայությունը նրանք ներկայացնում են որպես սիրիացի քրդերի պաշտպանության քողածածկույթ: Հանրապետական սենատոր Ռոն Ջոնսոնը պարզաբանել է ամբողջ գործողության իմաստը. «Մենք զորքերը կթողնենք այստեղ, որպեսզի վստահ լինենք, որ ո՛չ Իրանը, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Ասադը չեն ստանա այդ նավթահորերը: Եթե ինչ-որ մեկը դրանցից օգուտ ունենա էլ, դա կլինեն մեր քուրդ դաշնակիցները: Դա իրոք լավ ազդանշան է, որ մենք չենք լքել քրդերին»:

Տարածաշրջանում ամերիկացիների քաղաքականության նոր փոփոխությունը չվրիպեց Մոսկվայի, Թեհրանի եւ Անկարայի ուշադրությունից: Նրանք հասկանում են, որ Վաշինգտոնը գործում է Սիրայի մասնատման սցենարով, ինչպես որ դա արվեց Իրաքում: Սակայն նոր իրողությունը ուրվագծում են Սիրիայի Դեմոկրատական ուժերի քրդական ջոկատները, որոնք գործողություն իրականացրին Սիրիայի հյուսիսում՝ Ռաքքայի նահանգում, թուրքական բանակի կողմից կռվող զինված ընդդիմության դեմ: Թուրքական հրետանին հուժկու հարվածներ է հասցնում Շելգիրասին:

Ինչպես հայտարարեց **Էրդողանը**, «սպառվել է Ռուսաստանի հետ ձեռք բերված համաձայնության 150 ժամը, բայց ահաբեկիչները դեռ չեն հեռացել այդ գոտուց, նրանք դեռ հարձակումներ են գործում, իսկ «սիրիական ազգային բանակը», պատասխանում է նրան»: Էրդողանը հարց է տալիս, «Ի՞նչ է, մենք պիտի լռե՞նք»:

Վաշինգտոնում նախագահներ Թրամփի եւ Էրդողանի նոյեմբերի 13-ի հանդիպումից հետո կփոխվի՞ արդյոք իրավիճակը Թուրքիա-Սիրիա-Իրաք եռանկյունում: Դժվար է ասել, քանի որ ասես ճիշտ ժամանակին է իր մասին հիշեցնում «Իսլամական պետությունը»: Սիրիայի Դեմոկրատական ուժերը հայտարարել են, որ իրենք միջազգային կոալիցիայի հետ համատեղ վերսկսում են պայքարը այդ ահաբեկչական կազմակերպության դեմ: Իրենց հերթին թուրքական ռազմօդանավերը հերթական անգամ հարձակում են գործել Իրաքյան Քրդստանի եւ Թուրքիայի սահմանի մոտ գտնվող մի քանի գյուղերի վրա, որտեղ կան ՔԲԿ-ի ճամբարներ: Դրանով իսկ օբյեկտիվորեն ստեղծվում է իրաքա-սիրիական քրդական ճակատ:

Ամեն ինչ չափից ավելի խճճված է: **Պուտինն** Էրդողանին առաջարկել է բանակցություններ սկսել Ասադի հետ, որպեսզի Սիրիայի կառավարական զորքերը կարողանան մոտենալ սահմանին: Փորձագետների կարծիքով, իրադարձությունների նման ընթացքը լավագույն տարբերակը կլիներ սիրիացի քրդերի առաջնորդների հետ երկխոսություն սկսելու համար: Սակայն Էրդողանը ցանկություն չի հայտնում երկխոսելու Ասադի հետ, եւ նրանք միասին անտեսում են քրդերին որպես երրորդ ուժի:

ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

# Հայկական հարցը կրկին Մերձավոր Արեւելքում

⇨1

Այսօր Սիրիայի հյուսիս-արեւելքում ջիհադիստներ թեեւ մնացել են, բայց նրանք սակավաթիվ են: Այդ տարածաշրջանը դարձել է թուրքական բանակի եւ սիրիացի քրդերի մրցակցության ասպարեզ: Վերջին օրերին բազմաթիվ սիրիական հրատարակություններում հայտնվել են լուրեր այն մասին, որ երկրի հյուսիս-արեւելքում՝, թուրքերի վերահսկողության գոտում, հաճախակի են դարձել վանդալիզմի գործունեությունները առհասարակ քրիստոնյաների եւ մասնավորապես հայկական կրոնամշակութային օբյեկտների նկատմամբ: Արեւմուտքի զանգվածային լրատվամիջոցները հաղորդել են Թուրքիայի հետ համագործակցող «Ազատ սիրիական բանակի» մարտիկների կողմից հայերի տների զավթման մասին: Բողոքներ կան նաեւ սիրիացի քրդերի առնչությամբ: Թեեւ բանը չի հասել սպանությունների:

Այդուհանդերձ, առկա են տագնապալի զգացողություններ: Իրավիճակը սկսեց բարդանալ այն բանից հետո, երբ Անկարան Սիրիայի հյուսիս ներխուժելով սկսեց «Խաղաղության ակունք» ռազմական գործողությունը: Հայ կաթոլիկների հետ պատահած ողբերգությունից օրեր առաջ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Սուրբ Աթոռի մշտական ներկայացուցիչ արքեպիսկոպոս **Բեռնարդո Աուսան** Վատիկանի խոր մտահոգությունն էր արտահայտել այն կապակցությամբ, թե ինչ է տեղի ունենում Սիրիայի հյուսիս-արեւելքում թուրքերի «Խաղաղության ակունք» գործողության պայմաններում: Սկսեցին Անկարային կապել այդ տարածաշրջանում վերսկսված քրիստոնյաների հալածանքների հետ:



Միեւնույն ժամանակ, այն տպավորությունն էր ստեղծվում, թե ինչ-ինչ ուժեր փորձում են շիկացնել հայ-թուրքական հարաբերությունները՝ ընդսմին օգտագործելով քրդական գործոնը: Հոկտեմբերի կեսերին արեւմտահայ սփյուռքի մի շարք ներկայացուցիչներ սկսել էին խոսել Ստամբուլից դուրս բազմաթիվ ծպտյալ հայերի գոյության մասին, ներառյալ Թուրքիայի ներկայիս քրդաբնակ նահանգները, որոնց պետք է սպասարկի Կոստանդնուպոլսի հայ կաթողիկե եկեղեցին: Նման պայմաններում բազմիմաստ է հնչում Ամերիկայի Հայկական ազգային հանձնախմբի հայտարարությունը, որով առաջարկվում էր Սիրիայում հայ հոգեւորականների սպանության հարցը մտցնել նախագահներ Թրամփի եւ Էրդողանի հանդիպման օրակարգի մեջ, քանի որ ողբերգության վայրը մեծ մասամբ Անկարայի դաշնակիցների հսկողության տակ է:

Ինչպես հայտարարում է Հալեպի կաթողիկե եկեղեցու առաջնորդ Պետրոս եպս. Միրիասյանը (Բուտրոս Մարայաթին), Դեր-Զոր քաղաքը, դեպի ուր ուղեւորվել էին հայ հոգեւորականները, շատ կարեւոր է մեզ համար, քանի որ հենց այնտեղ էին սպանվել 1915 թ. Հայոց ցեղասպանության բազում նահատակներ: Այսօր այնտեղ այլեւս չկան կաթոլիկ հայեր, եւ Թուրքիան չի ուզում, որ մենք վերադառնանք այնտեղ: Մեր ներկայությունը կհիշեցներ հայոց ցեղասպանության մասին: Հոգեւորականի խոսքերով, չի կարելի բացառել, որ վերջին սպանությունների հետեւում լինի «թուրքական հետք», թեպետեւ առայժմ չկան դրա ապացույցներ: Եվ եթե անաչառ դատելու լինենք, Անկարան ներկայումս ավելի շատ մտահոգված է քրդական հարցով, քան իր համար բացառապես վիրտուալ իրողություն հանդիսացող հայկական հարցով: Գուցե ոմանք հանուն իրենց շահերի փորձում են հարցը շահարկել իրենց ձեռնտու ուղղություններով: Այս կապակցությամբ աչքի են զարնում հետեւյալ հանգամանքները: Սիրիայում հայ հոգեւորականների սպանությունը տեղի ունեցավ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հայաստանյան այցի օրը: Իր հայ պաշտոնակից Զոհրաբ Մնացականյանի հետ հարցազրույցի ժամանակ Լավրովը խոսեց Սիրիայում քրիստոնյա բնակչության պաշտպանությանն ուղղված Մոսկվայի եւ Երեւանի համատեղ ջանքերի մասին:

Լավրովից երկու օր առաջ Հայաստան էր այցելել Վատիկանի արտգործնախարար, պետությունների հետ հարաբերությունների գծով Սուրբ աթոռի քարտուղար, Պոլ արքեպիսկոպոս Գալահերը, ում հետ, ինչպես ասաց Մնացականյանը, ինքը քննարկել է կրոնական փոքրամասնությունների, Մերձավոր Արեւելքի քրիստոնյաների պաշտպանության, պատմական եւ մշակութային ժառանգության պահպանման հարցերը: Իսկ ավելի վաղ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Սիրիայի հյուսիս-արեւելքում Թուրքիայի ռազմական գործողության ձեռնարկումից հետո ինքը դիմել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ խնդրելով հաշվի առնել Սիրիայի հայ համայնքի շահերը: Իհարկե, հայերը Մերձավոր Արեւելքի միակ քրիստոնյաները չեն: Նշենք, որ Սիրիայում քաղաքացիական պատերազմից առաջ հայ համայնքի ներկայացուցիչների թիվը շուրջ 110 հազար էր: Հայ բնակչությունը կենտրոնացած է գլխավորապես Հալեպում, որտեղ էլ իր մարդասիրական առաքելությունն է իրականացնում Երեւանից եկած մարդասիրական զորախումբը:

Այդուհանդերձ, պարզվում է, որ ոմանց դուր չի գալիս տարածաշրջանում հայերի քաղաքական գործոն լինելու հանգամանքը, նշում է «Ռեգնում» գործակալությունը: Հենց այդ ուժերն էլ «Իսլամական պետությանը» առաջ են քաշել տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական խաղացողների միջեւ հակամարտությունը սրելու նպատակով: Հայ կաթողիկե եկեղեցու սպասավորների վրա կատարված հարձակումը կարող է լինել ընդամենը առաջին տագնապալի ազդանշանը: Այս կապակցությամբ ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ **Մհեր Մարգարյանը** կազմակերպության գլխավոր քարտուղարի Ցեղասպանությունների կանխարգելման գծով խորհրդական Ադամ Դիենգոյի հետ հանդիպման ժամանակ վերջինիս ուշադրությունը հրավիրեց հոգեւորականների սպանության վրա՝ դրանք որակելով որպես հարձակում կրոնական եւ ազգային փոքրամասնությունների վրա:

# Թուրքիան իբր դատապարտել է Սիրիայում հայ քահանայի սպանությունը



Թուրքիայի արտգործնախարարությունը պաշտոնական հայտարարություն է տարածել Սիրիայում հայ կաթոլիկ քահանայի սպանության կապակցությամբ:

Արտգործնախարարության պաշտոնական կայքում հրապարակված հայտարարության մեջ մասնավորապես ասվում է.

«Ցավով տեղեկացանք Սիրիայի հայ համայնքի անդամ հոգեւորականի մահվան մասին, որի դեմ նողկալի հարձակումը տեղի էր ունեցել PYD/YPG/PKK («Ժողովրդավարական միություն կուսակցություն/Ժողովրդի ինքնապաշտպանական ուժեր/Քուրդիստանի բանվորական կուսակցություն») ահաբեկչական կազմակերպության վերահսկողության տակ գտնվող տարածքում»:

Հայտարարության մեջ նշվում է, որ Թուրքիան դատապարտում է կատարվածը ու ցավակցում Սիրիայի ժողովրդին:

//Տարածաշրջանում գործող եւ բոլոր սիրիացիներին, այդ թվում նաեւ քրիստոնյաներին շարունակաբար թիրախավորող ԻՊ եւ PYD/YPG/PKK ահաբեկչական կազմակերպությունները բնական կասկածյալներն են»,- ասվում է հայտարարության մեջ:

Վերջում նշվում է, որ «Սիրիայում ծագող ահաբեկչության բոլոր տեսակների դեմ վճռականորեն պայքարող Թուրքիան, այս ահաբեկչական հարձակման ոճրագործներին գտնելու համար էլ գործելու է միջազգային հանրության հետ միասին»:

Մեր կողմից նշենք, որ թուրքական նենգամտության բացառիկ այս օրինակը միտված է Սիրիայի քրդական համայնքի դեմ՝ վերջինիս վերագրելով ոճրի կազմակերպումը:

# Առաջնագծի անվտանգության ճարտարապետը



Վերջին տարիներին բավական ակտիվ քայլեր են ձեռնարկվել Արցախի զինված ուժերի ռազմատեխնիկական համալրման, առաջնագծի ողջ երկայնքով դիրքերի հագեցվածության ուղղությամբ: Արվել է հնարավոր ամենը՝ Արցախի սահմանները անմատչելի դարձնելու համար:

Արցախի զինված ուժերի առաջնագիծը թշնամու համար անխոցելի դարձնելու գործընթացի նախաձեռնողներից է Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ **Արշավիր Ղարամյանը**:

Նշանակալի է Ղարամյանի ավանդը Արցախյան ազատամարտի հաղթանակի կերտման գործում: Այսօր էլ հերոս հրամանատարը զինվորի կողքին է ամենուր՝ լինի խրամատում, առաջնագծում թե զորամասում: Արշավիր Ղարամյանի ընտանիքի եւ ընկերների անձնական միջոցներով տեխնիկապես վերազինվել է Արցախի պաշտպանական բանակի դիրքերի զգալի հատվածը: Նրա շնորհիվ Արցախի սահմանային առաջնագիծը հագեցվել է ցերեկային, գիշերային, ջերմատեսիլ օպտիկական սարքավորումներով:

Նման սարքավորումների առկայությունը հնարավորինս նվազեցնում է հակառակորդի կողմից իրականացվող դիվերսիոն գործողությունների վտանգը՝ հնարավորություն տալով րոպեի ճշգրտությամբ ֆիքսել հակառակորդի տեղաշարժը:

**Ցերեկային սարքավորումների միջոցով հնարավոր է դառնում հակառակորդի տարածքը դիտարկել 30-40կմ խորությամբ, իսկ ջերմատեսիլ օպտիկական սարքավորումների առկայության դեպքում հնարավոր է լինում առաջնագծին դեռ չհասած «կանգնեցնել» հակառակորդին:**

Մշտադիտարկման սարքավորումները շեշտակի նշանակություն ունեն ռազմադաշտում՝ աներջելիորեն փոխելով մարտի վարման որոշ կանոններ. այն է՝ գիշերային մթությունն այլեւս արգելք չէ զորքերի թե՛ պաշտպանության, թե՛ հարձակման համար: Նման սարքավորումները բազմիցս ապացուցել են իրենց կիրառման նշանակությունը՝ օրվա յուրաքանչյուր ժամի բարձրացնելով մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմի անվտանգությունը: 2019 թվականին Արշավիր Ղարամյանի եւ ընկերների մեկենասությամբ Արցախի «Եղնիկներ» կոչվող զորամասի եւ առաջնագծի մի շարք կարեւորագույն դիրքերում տեղադրվեցին տեսադիտարկման եւ կապի նոր համակարգեր: Նշյալ սարքավորումների աշխատանքի անընդհատությունը եւ շարունակականությունը ապահովելու համար Արշավիր Ղարամյանի կողմից արվում է հնարավոր եւ անհնար ամենը՝ ի շահ հայ ժողովրդի անվտանգ ու խաղաղ կեցության:

«Բանակը յուրաքանչյուրիս մեջ է, յուրաքանչյուրս՝ նրա մի մասնիկը»,- հերոս հրամանատարի խոսքերից է, ում ծառայությունը հայրենիքին երբեւէ պայմանավորված չի եղել զբաղեցրած պաշտոնով:

Նման մարդկանց շնորհիվ է, որ ազատ, անկախ, անվտանգ Արցախն այսօր կայացած քաղաքական եւ պատմական իրողություն է:

**ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար ծրագրային ապահովման թարմացման եւ ուղեկցման արտոնագրեր ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է հրապարակային մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի ծրագրային ապահովման թարմացման եւ ուղեկցման արտոնագրեր ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) ֆինանսական միջոցներ.
4) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2019թ. դեկտեմբերի 09-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2019թ. դեկտեմբերի 12-ին ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2019թ. դեկտեմբերի 19-ին ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, մրցութային հանձնաժողովի քարտուղար՝ հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

**ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# Բյուջեի նախագիծը՝ չափավոր տնտեսական աճով

**Այս շաբաթ խորհրդարանը քննարկում էր Հայաստանի 2020 թվականի պետական բյուջեի նախագիծը, որն այսօր դեռ կշարունակվի քննարկվել: Եկող տարվա համար կանխատեսվում է ունենալ 4.9 տոկոս տնտեսական աճ, սակայն ակնկալիքներ կան մինչեւ 7 տոկոս աճի գեներացման: Գնաճը կլինի 2 տոկոսի սահմաններում: Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը 22,6 տոկոս է կանխատեսված: Ակնկալվում է ունենալ արտահանման 10.9 տոկոս առաջանցիկ աճ: Արդյունաբերության աճը 5 տոկոս է սպասվում, գյուղատնտեսությանը՝ 0,5 տոկոս: Արդեն ելույթներ են ունեցել առանցքային պաշտոնյաները, ԿԲ նախագահը, ԱԺ հանձնաժողովների ներկայացուցիչները:**

**«Անարդյունավետ ծախսերի ժամանակն անցել է, սկսվել է ռազմավարություն կառուցելու ժամանակը», նշել է՝ հարակից զեկուցող, ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի նախագահ իմքայլական Արտակ Մանուկյանը՝ նոր բյուջեի թվերը վերլուծելով եւ այն անվանելով ապագա զարգացմանն ուղղված: Բյուջեի նախագծի վերաբերյալ ինտրիգը պահպանվում է, քանի որ դեռ պարզ չէ, թե ինչ դիրքորոշում կորդեգրեն ԲՀԿ- ն եւ «Լուսավոր Հայաստանը»: ԲՀԿ- ն առիթներ ունեցել է ասելու, թե այս բյուջեն հեղափոխական չէ եւ զարգացում չի ապահովի:**

# ՍԴ դատավորների՝ վաղ կենսաթոշակի անցնելու նախագիծն ուղարկվեց Ազգային ժողով

**Կառավարությունն իր նիստում «Սահմանադրական դատարանի մասին» եւ հարակից մի օրենք լրացրեց՝ ՍԴ դատավորներին կամավոր վաղ կենսաթոշակի ուղարկելու դեպքում բոլոր սոցիալական երաշխիքները պահպանելու դրույթներ սահմանելով: Այդպիսով՝ մինչեւ եկող տարվա հունվարի վերջին օրը վաղաժամ հրաժարական ներկայացնող ՍԴ անդամները եւ դատավորները ընդհուպ կենսաթոշակի տարիքը լրանալը կպահպանեն ներկա դրույքաչափերիի բոլոր վճարումները: Սա բացատրվեց նրանով, որ արդեն ուժի մեջ մտած նոր փոփոխություններով Սահմանադրությունը հնարավոր չէ կիրառել (դատավորների պաշտոնավարման վեցամյա ժամկետի առումով), քանի որ մի շարք այլ դրույթներով ՍԴ ներկա կազմը կարող է պաշտոնավարել մինչեւ 2035 թվականը: Նախագիծն ԱԺ-ում քննարկվելու է անհետաձգելի կարգով:**

# Դասադուլը շարունակվում է

**Այս օրերին ԵՊՀ հայ բանասիրության եւ պատմության ֆակուլտետներում շարունակվում է հայտարարված դասադուլը: «Հայոց լեզու եւ գրականություն» եւ «Հայոց պատմություն» առարկաների՝ բուհական ոչ մասնագիտական ֆակուլտետներից դուրս մղելու աշխատանքային նախագծի առաջացրած զայրույթն այսօր արդեն դարձել է հրաժարականի պահանջ եւ օրեցօր նոր ուսանողների է ներգավում:**

**Նոյեմբերի 13-ին, որպես նախազգուշացում, մեկօրյա դասադուլ էին հայտարարել նաեւ հիշյալ ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի 58 անդամներ:**

**Նոյեմբերի 14-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում ուսանողական մեծ հավաք է տեղի ունեցել՝ ուսխորհրդի հրավերով, որին մասնակցել են նաեւ դասադուլ հայտարարած ուսանողները: Հավաքի ընթացքում ուսանողները ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանին առաջարկել են գալ պետհամալսարան եւ լսել իրենց մտահոգությունները:**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 19.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 14.11.2019, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 14/11/2019 18:54 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 43(454)
15 ՆՈՅԵՄԲԵՐ
2019

Մելանյա ԲԱԴԱԼՅԱՆ

# «Հայոց լեզուն - հայ ինքնության, հայ էության ընդերքը...»

Ուսանողության տարիներին սովորություն էի դարձրել դասախոսության ամեն տետր վերցնելիս՝ հայացքս նախ այս տողերի վրա պիտի ընկնեին. *«Եվ երջանիկ է՝ ով քեզ / կարող է կոչել ՄԱՅՐԵՆԻ, /Երանելի է՝ով քեզանով է/ խոսում ու դասում.....»*, որքան էլ այդ տարիներին, եւ առաջ ու հետո առավել եւս, այն անտեսվում ու դառնում էր անկարեւոր, եւ է՛, եւ շարունակվու՛մ է ավելիով:

Հայրենասիրությունը մոդայի պես բան են դարձրել, պատեհ-անպատեհ շահարկվում է, նրանցից շատերին որ հարցնես՝ դա ի՞նչ է, կամ իր մոտ ինչպիսի՞ դրսեւորում ունի, հստակ պատասխան չես ստանա, կամ մի տափակ բան կլսես: Ու որ ասես՝ հայրենիք կոչվածի արյունը լեզուն է, հարցական կնայեն դեմքիդ: Մեր լեզուն ազատ չէր, հիմա էլ այդպես է. կար ժամանակ, որ հայ գավառական ինտելիգենցիան իրենից ցածր էր համարում խոսել մայրենի լեզվով: 1988-ը եկավ մաքրելու անազատ մտքի այս եւ այլ տեսակի անհեթեթությունները, երբ հրապարակներում հայերենով հնչեցին ազատություն ու անկախություն բառերը եւ ճանապարհ հարթվեց ավելի կարեւոր երեւույթների գիտակցման՝ հայրենիքի, ազգային արժեքների, բարոյականության, մոտենալու մեր արմատներին, հասկանալու մեր ինքնության հիմքերի հիմքի՝ մեր լեզվի կարեւորությունը: Այդ տարիներին հրապարակներում էին այդպիսի արժեքները հստակեցվում, մաքրվում, դուրս գալիս կապանքներից եւ մտնում մարդկանց գիտակցության մեջ՝ նոր պատկերացումով ու վերաբերմունքով, եւ եթե հիշում եք, այլալեզու քաղքենիական խավը սկսեց նահանջել այդ շրջանում: Գեղանկարիչ **Հակոբ Հակոբյանը** **«Ազգ»-**ի հրապարակախոսական շարքի իր հոդվածներից մեկում պատմում էր, թե ինչն է եղել առիթը՝ 88-ին Ազատության հրապարակի հանրահավաքների՝ իր մշտական մասնակցության, երբ մի օր այդ կողմով անցնելիս շատ պատահական լսել է գեղեցիկ, մաքուր հայերենով հնչող խոսքը Լեւոն Տեր - Պետրոսյանի: Բնավ զարմանալի չէ սա. խոսքի՝ գրագետ, բովանդակային ու գեղեցիկ լեզվական շարադրանքի, հռետորական արվեստի ներգործության ուժը հայտնի է վաղուց:

Վահան Տերյանը չէ՞ր անցած դարասկզբին գրում. *«Վտարանդի, երկրում աղոտ, / Լուսեղ, քեզ եմ երազում,/ Եվ հնչում է, որպես աղոթք/ Արքայական քո լեզուն»*: Տարիներ առաջ էր. Շվեյցարիայում ապրող մեր հայրենակիցը, որ աշխատում էր օտարների մեջ, օտարալեզու միջավայրում ու ընտանիքում շփումը միայն օտար լեզվով էր, պատմում էր, որ բանաստեղծություն է գրում հայերենով ու ասում էր, որ գրում է՝ միմիայն հայերենը չմոռանալու համար: Օրեր առաջ Յովիկ Աֆյանը այս թեմայով գրված հոդվածում հղում էր արել **Վանո Սիրադեղյանի** «Արածեք ձեր խոտը» ակնարկին, հետն էլ առաջարկել, *«որ այն համատարած անգիր հանձնարարվի, որ Հայաստանում դպրոցն ավարտած յուրաքանչյուր քաղաքացու քնից էլ արթնացնես , ասի՝ «մի՛ մտեք մեր հայոց լեզվի տաճարը, դա միակ բանն է, որ մնացել է մեզ»*:

**Վիկտոր Համբարձումյանը** հայ եւ համաշխարհային գիտական մտքի պատմության մեջ թողեց մեծ ժառանգություն, բայց իր վերջին խոսքի՝ Կտակի մեջ ժողովրդի մեծագույն առաքինությունը մայրենի լեզվի տիրապետումն ու դրա պահպանումն է համարում:

*«Ինձ հաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս կտակում եմ տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից, անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում:Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ եւ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզու:Գիտեք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը»:*

Երեսնամյա մեր՝ իբր անկախ երկրում, հետեւողական ու նպատակային քաղաքականություն տարվեց՝ ուղղված բարոյական արժեհամակարգի քայքայմանը: Շատ պարզ մի բան. մարդու մեջ փորձում էին վերացնել մարդկայինը, ստեղծելու անտարբեր ու եսակենտրոն հասարակություն, որտեղ ամենաչգնահատվածն ու նույնիսկ արհամարհվածը մեկ բառով ասած՝ առաքինությունն է, ասենք՝ ազնվությունը, շիտակությունը, նվիրումը, կարեկցանքն ու գթասրտությունը, փոխարենը՝ կարեւորելով կեղծ արժեքներ կամ սրանց հակառակ բաներ, որոնք ուղղված են հազարամյակներ առաջ քարոզված բարձրագույն արժեքի՝ սիրո դեմ: Սա ընդհանուր միտում է աշխարհում, - կասեն շատերը, - մասամբ համաձայնելով, այդուհանդերձ, մենք մերի հանդեպ, ինքներս մեր հանդեպ ենք նախեւառաջ պատասխանատու:

Երկրներ չեն նվաճում միայն պատերազմների միջոցով, դրա «քաղաքակիրթ» ճանապարհները կան վաղուց՝ մի փոքր ավելի ջանք պահանջող, իսկ գուցե՞ ոչ այդքան. բարոյալքել ժողովրդին, հասարակությանը, եւ մշակված մեթոդներն էլ վաղուց կան՝ մարդկանց սոցիալական թշվառության հասցնելուց մինչեւ հոգեւոր- մշակութային ամլություն, արժեքային համակարգի խեղաթյուրում, որի լավագույն միջոցը հայտնի զանգվածային լրատվությունն է՝ հեռուստատեսությունն ու մամուլը: Այս ճանապարհին հանդիպող խոչընդոտող հանգամանքների, մասնավորապես գիտակից, արթուն ու հստակապես պայքարող անհատների հանդեպ նույնպես մշակված վերաբերմունք ու մեթոդ կա՝ անտեսումից, մեկուսացումից, հեղինակազրկումից, ազատազրկումից մինչեւ ֆիզիկական ոչնչացում: Իսկ իրական արժեքային համակարգից զուրկ, խեղաթյուրված կյանքով ապրող, մտային ամուլ, համահարթված հանրություն - զանգվածն ի վիճակի չէ պայքարելու, վերլուծելու, գնահատելու, սատարելու իր արժեքավոր զավակներին, այսպես ասած թացը չորից զանազանելու ունակ չէ: Եվ երբ հասարակությունը կորցնում է իր ինքնությունը, իր հոգեւոր արժեքները պաշտպանելու հատկությունը, դիմադրողականությունը թուլանում է, նա դառնում է խոցելի, եւ որեւէ ծրագրի իրականացում՝ Ստամբուլյան կոնվենցիա կլինի, Ամուլսարի հանքի շահագործում, թե մայրենի լեզվի ու մշակույթի հետ կապված խնդիր, թե մեկ այլ, շատ ավելի հեշտ է դառնում:

Բարեբախտաբար, մենք դեռ դիմադրում ենք, բայց թվում է՝ հասել ենք վտանգավոր մի սահմանի, ինչ-որ անորոշ, անհասկանալի, նույնիսկ անդեմության պես մի բան: Սա, իհարկե, անցած տասնամյակների գործելաոճի անխուսափելի հետեւանքն է, որ ունի մեկ այլ երանգային շարունակություն՝ առերեւույթ գեղեցիկ, կամ գուցե անգամ ազնիվ թվացող, իրականում երերուն ու խաբուսիկ է:



Որքան շատ էին նախընթաց շրջանում ահազանգեր ու բողոքներ դպրոցական՝ հատկապես ցածր դասարանների դասագրքերի աղճատված բովանդակության հետ կապված, որոնք կա՛մ բթացնող, անհեթեթ, անտրամաբանական նյութեր, առաջադրանքներ էին, կա՛մ՝ ագրեսիայի, դաժանության քարոզչություն: Բազմաթիվ անհանգստություններ ու տագնապներ՝ աղանդավորական խմբերի ու դրանց քայքայիչ գործունեության հետ կապված, մասնավորապես ընտանիքներում ու դպրոցներում: Էլ չասած՝ հեռուստահաղորդումների որակի մասին, բարիլույսների անբովանդակ, անհամ զրույցների, տափակ, անճաշակ հումորների, հնչած ցածրակարգ երաժշտության ու հատկապես լեզվի գռեհկացման, չարաբաստիկ հեռուստասերիալների, որոնք ոչ թե պարզապես անարվեստ, անտաղանդ, այլ՝ ուղղակի ա՛ղբ էին՝ թե՛ բովանդակային, թե՛ կատարողական առումով: Իհարկե, մի շատ փոքր հատված կար, որն ապականել կա՛մ չէին հասցրել, կա՛մ հատուկ էին թողել, ինչպես հասարակության մեջ կա մի փոքր շերտ, սակայն պատվիրատուները զգոն են՝ սահմանները պահելուն եւ դրա կրողների հանդեպ համապատասխան վերաբերմունքին... Ինչեւէ, օվկիանոսի մեջ կաթիլները եղանակ չեն ստեղծում, ինչ ուզում է՝ անեն: Միեւնույն ժամանակ այդ ուժերը գիտեն, որ դրանց իսպառ ոչնչացումն էլ աղետաբեր է:

Եվ ահա՛ այս ամենի շարունակությունը: Հիմա դառնանք վերջին ժամանակների ցավոտ խնդիրներից՝ հայոց լեզու եւ հայ ժողովրդի պատմություն առարկաների՝ ոչ մասնագիտական բուհերում ոչ պարտադիր դարձնելու, կամ բուհի հայեցողությանը թողնելու նախագծին: Վերջինի դեպքում մեծամասամբ հակված են կարծելու, թե հանվելու են հայրենագիտական այս առարկաները՝ փոխարինելով դրանք իրենց նախընտրածով: Երբ հարցնում ես ուսանողներին, նրանցից մի մասն ասում է, թե բուհական ուսուցումը չի տարբերվել դպրոցական մակարդակից, երբեմն նույնիսկ ավելի ցածր է՝ սահմանափակվելով քերականական վարժությունների պարզ հանձնարարություններով, կամ թե՝ իրադարձությունների պրիմիտիվ շարադրանքով՝ հայ ժողովրդի պատմության պարագայում: (Մի քանիսն էլ բողոքում էին որոշ դասախոսների՝ սեփական դասագրքերը ուսանողներին պարտադրաբար գնել տալու դեմ): Հակառակ երեւույթի եւ բացառությունների մասին եւս չեն լռում: Ինքս ականատեսն եմ եղել սփյուռքահայ ուսանողի ընդգծված հարգանքին ու վերաբերմունքին՝ բուհում ոչ մասնագիտական առարկա դասավանդած տարիներ առաջվա իր դասախոսի հանդեպ՝ տրված գիտելիքի, հայ մշակույթի, լեզվի, գրականության նկատմամբ վերաբերմունքի, արժեւորման համար: Այս համատեքստում հարցով մտահոգ մասնագետների՝ հատկապես երկու առաջարկ ուշադրության է արժանի: Հայոց լեզու եւ պատմություն առարկաների ուսուցումը այսպես ասած խորհրդանշական կամ ձեւական լինելուց անհրաժեշտ է ազատել, այն պիտի լինի ըստ էության, գիտակցվի դրա կարեւորությունը՝ որպես ազգային նկարագիր ձեւավորող երեւույթ, անառարկելի՝ տարբերվի դպրոցական մակարդակից, թե՛ ուսուցման մակարդակով, թե՛ մատուցման մեթոդներով, բայց կարեւորը բովանդակային փոփոխությունն է: Առաջարկվում է ոչ մասնագիտական բուհական ծրագրերում ընդգրկել հայագիտություն կամ մշակութաբանություն առարկան, որն իր մեջ կներառի հայ մշակույթի, լեզվի, հայ ժողովրդի պատմությունը՝ թերեւս կամընտրական շերտերով: Պատճառաբանությունը, թե մասնագետները շատ քիչ են, թույլ է, նրանց պատրաստելը ժամանակի խնդիր է: Բացի այդ՝ այնպես չէ, թե մեր բուհերում մասնագիտական բոլոր առարկաների ուսուցումը տարվում է ամենաբարձր մակարդակով ու խորը իմացությամբ, շատ դեպքերում մասնագիտական առարկաների բավարար մակարդակ չի ապահովվում.- սա՝ իմիջիայլոց:

Այստեղ մի զուգահեռ անցկացնենք վերջերս ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում կատարված մի փոփոխության հետ: Այն իրականացնելու համար նախ պետք էր ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անունը փոխել եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի, ապա գրականություն առարկան հանել մասնագիտական առարկաների ցանկից ու դնել ասենք՝ էթիկա, քաղպաշտպանություն եւ նման առարկաների կողքին եւ ժամերը կրճատել՝ հասցնելով ընդամենը ֆակուլտատիվի մակարդակի. այնպես որ՝ կարելի է անգլերեն լավ սովորել, ասենք՝ առանց Շեքսպիր կարդալու:

Մյուս առաջարկը՝ նույնպես ուշադրության արժանի՝ բուհերի ոչ հումանիտար բաժիններում մասնագիտական հայերենի ուսուցանումն է: Հղում անելով մասնավորապես ամերիկյան բուհերի նմանօրինակ պրակտիկային՝ առաջարկվում է հետեւել այդ փորձին (սակայն որքանո՞վ կհաջողվի դա մեզանում), կամ մի քանի տարբերակներ այդպիսի հատուկ դասընթացների: Մի մասը ուշադրություն է հրավիրում օտարալեզու մասնագիտական գրականության՝ հիմնականում ռուսերեն, թարգմանության վրա:

➡Գ

# Հայ ազգային բալետի հիմնադիր
## Իլյա Արբատով (Յաղուբյան)

**Նազենիկ ՍԱՐԳՍՅԱՆ**

Արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Այս տարի բալետմայստեր Իլյա Արբատով-Յաղուբյանի 125-ամյա հոբելյանն է, ինչպես նաեւ նրա բեմադրած Արամ Խաչատրյանի «Երջանկություն»՝ առաջին հայ ազգային բալետի ստեղծման 80-ամյակը:

Գրել Արբատովի մասին՝ դյուրին գործ չէ: Նրան հատուկ է ստեղծագործական բազմակողմանիությունը եւ գործունեության լայն աշխարհագրությունը:

Իլյա Արբատովը (Յաղուբյանը) ծնվել է 1894 թ.: Խորեոգրաֆիկ կրթությունը ստացել է հանրահայտ Մարիա Պերինիի բալետային ստուդիայում՝ Թիֆլիսում: Հանդես է եկել Թիֆլիսի էստրադային բեմում՝ կատարելով բնութագրական պարեր, ինչպես նաեւ խորեոգրաֆիկ դրվագների բեմադրություններ իրականացրել հայ դրամատիկական թատերախմբերի ներկայացումներում: 1927 թ. նա հրավիրվում է որպես գլխավոր բալետմայստեր եւ մենակատար պարող Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի թատրոն: Ընդհանուր առմամբ, 1920-ից մինչեւ 30-ականների վերջերը նա աշխատել է Բաթումում, Դոնի Ռոստովում, Ուրֆայում, Կազանում, Բաքվում, Թիֆլիսում, Խարկովում, նաեւ Մոսկվայում եւ Լենինգրադում: Հատուկ պետք է նշել նրա գործունեությունը Տաշքենդում: Սկզբից նա եղել է Սվերդլովի անվան օպերայի եւ բալետի թատրոնի բալետմայստեր, որտեղ 1929-1933 թթ. իրականացրել է մի շարք բալետների բեմադրությունը՝ «Շեհերազադե» Ռ. Ռիմսկի-Կորսակովի երաժշտությամբ (1929), «Սալամբո»՝ Արեդսի երգի երաժշտությամբ (1932), Յանովսկու «Ֆերենջին» եւ Դրիգոյի «Առլեկինադան» (երկուսն էլ՝ 1933 թ.): Այնուհետեւ, 1934 թ. Նավոյիի անվան օպերայի եւ բալետի թատրոնում Թամարա Խանումի (Թամարա Պետրոսյանի) եւ Լ. Գուբսկայայի համագործակցությամբ իրականացրել է Բրուսիլովսկու «Գուլյանդոմ» ուզբեկական ազգային բալետի բեմադրությունը: Թամարա Խանումի հետ Արբատովը շատ սերտ է համագործակցել, նրա հետ ուշիմ ուսումնասիրել է Ֆերգանայի ազգային պարերը, որոնք հանդիսանում են պարսկական պրոֆեսիոնալ պարերի ճյուղերից մեկը: Այնուհետեւ նա մասնակցել է Թամարա Խանումի խաղացանկի եւ պարային ոճի ու լեզվի կազմավորմանը:

Երեւանի Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնում Արբատովը եղել է գլխավոր բալետմայստեր 1938-ից 1957 թթ., սակայն մեծ ընդմիջումներով: Նույնիսի ընդմիջումներով նա եղել է Անդրկովկասյան զինվորական շրջանի պարային անսամբլի ղեկավարը: Բալետներից բացի, Երեւանում Արբատովը իրականացրել է պարերի բեմադրություններ օպերաներում (որոնցից Վերդիի «Աիդա» օպերայում պարերի նրա բեմադրությունը պահպանվել է մինչեւ 1990-ականների սկիզբը): Նաեւ պարային դրվագներ է բեմադրել օպերետներում: Նա Էդուարդ Մանուկյանի հետ կանգնած է Հայաստանի պարի պետական անսամբլի ակունքների մոտ, մասնակցել է նրա ձեւավորմանը եւ խաղացանկի բազում պարերի բեմադրիչն է, որոնք հետագայում, չգիտես ինչու եւ ինչպես, վերագրվել են այլ բալետմայստերների: Արբատովը ձեռնամուխ է եղել նաեւ Արտեմ Այվազյանի կազմակերպած Հայաստանի էստրադային անսամբլի յուրահատուկ պարային լեզվի ձեւակերպմանը, պարեր է բեմադրել Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Օսեթիայի պարի պետական համույթներում: Նա ստեղծել է նաեւ մեծ քանակությամբ համերգային խորեոգրաֆիկ համարներ:

Արբատով-Յաղուբյանը օժտված է եղել նաեւ գեղանկարչական տաղանդով: Նա ինքն է իրականացրել իր բեմադրությունների բեմահարդարումը, այդ թվում՝ «Առլեկինադա», «Կարմիր ծաղիկ», «Բժիշկ Այբոլիտ»: Նրա էսքիզներով են ստեղծվել



«Խանդութ» եւ «Մարմար» բալետների բեմական զգեստները եւ նա է եղել «Սեւան» (Վ. Վարդանյանի համագործակցությամբ) եւ «Մարմար» (Հ. Ղուկասյանի համագործությամբ) լիբրետոների համահեղինակը:

Շատ գեղեցիկ, տպավորիչ բեմական արտաքինով եւ դերասանական տաղանդով անչափ օժտված Արբատովը հանդես է եկել հիմնականում այն դերերում, որոնք ավելի շատ պահանջում էին ոչ թե պար, այլ դերասանական մնջախաղ՝ Գիրեյ («Բախչիսարայի շատրվանը»), Լի-Շան-Ֆու («Կարմիր ծաղիկ»), Պետրոս Առաջին («Պղնձե հեծյալը»), Բժիշկ Այբոլիտ (համանուն բալետում), Գաբո բիձա («Երջանկություն»), Մաթո («Սեւան»), Իշխան Բակուր («Մարմար»): Դերասանական տաղանդն արտահայտվել է նաեւ կատարողների հետ կերպարների վրա աշխատանքի ընթացքում: Նա նույն վարպետությամբ ցուցադրել է թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց կերպարների մարմնավորման հնարքները: Ինչպես նշեց Թերեզա Գրիգորյանը, նրա կատարողական սկզբունքի նույնիսկ պարզ, մանրակրկիտ վերարտադրումը հսկայական օգուտ էր տալիս կերպարի վրա աշխատանքի ընթացքում: Պահպանվել է մի վավերագրական նկարահանում, որտեղ Արբատովը անչափ հեզությամբ, նրբորեն ցուցադրում է հայ կանացի պարերի ձեռքերի շարժումները (հայտնի է, որ նման ձիրքով օժտված է եղել նաեւ Կոմիտասը): Բեմադրական աշխատանքն ընթանում էր Արբատովի մոտ անհամաչափ՝ բոցավառումներով: Գերբարձր ստեղծագործական ակտիվության ժամանակահատվածները ժամանակ առ ժամանակ փոխվում էին անգործունյա ընդհատումներով: Պետք է նշել նաեւ բնավորության որոշ անհավասարակշռությունը եւ հիվանդագին նեղացկոտությունը: Սակայն ընդգծենք, որ հայ բալետի ողջ պատմության մեջ ոչ մի բալետմայստեր չի եղել այդքան սիրված ողջ խմբի կողմից, որքան Իլյա Արբատով-Յաղուբյանը:

Սպենդիարյանի անվան թատրոնի բեմում Արբատովը իրականացրել է հետեւյալ բալետների բեմադրությունը՝ «Առլեկինադա» (1938), «Բախչիսարայի շատրվանը», «Երջանկություն» (1939), «Խանդութ» (բալետ, որի երաժշտական պարտիտուրը մշակված է Գեւորգ Բուդաղյանի կողմից Սպենդիարյանի երկերի ստեղծագործական եւ հմուտ միավորմամբ, 1945), Մորոզովի «Բժիշկ Այբոլիտ», Գլիերի «Պղնձե հեծյալը» (1949), Եղիազարյանի «Սեւան» (1956) եւ Հովհաննիսյանի «Մարմար» (1957, Զարեհ Մուրադյանի համագործակցությամբ):

Արբատովի անհատական «ձեռագիրն», անշուշտ, արտահայտվում էր դասական եւ ռուս խորհրդային բալետների բեմադրություններում: Սակայն մենք կնշենք այստեղ միայն իր կողմից հայ ազգային բալետների բեմադրման սկզբունքները: Նախ այն պատճառով, որ հայ կոմպոզիտորների վեց բալետներից, որոնք բեմ բարձրացան 1939- 1960 թթ. ժամանակաշրջանում, չորսը բեմադրել է Արբատովը: Եվ հիմնականում այն պատճառով, որ նրա ներդրումը հայ բեմական պարի եւ բալետի կայացման մեջ հնարավոր չէ գերագնահատել:

Միանգամից նշենք, որ արբատովյան բալետների դրամատուրգիական կառուցվածքն ամբողջականությամբ ներգրավվում է 30-40-ական թթ. խորհրդային բալետում գերիշխող «խորեոդրամա» ուղղության



Կադր «Սեւան» բալետից

մեջ՝ իր ողջ դրական եւ թերի կողմերով: Դա գործողության տեղի եւ ժամանակի ստույգ որոշակիություն է հերոսների սոցիալական ու մասնագիտական պատկանելիությամբ, հրադարձությունների հագեցվածությամբ եւ մնջախաղային դրվագների առատությամբ, հերոսների գործողությունների հստակ դրդապատճառներով: Եվ քանի որ, ինչպես նշեցինք, մեծ տեղ էր տրվում մնջախաղին, հարց է ծագում. արդյո՞ք կարող էր արտահայտվել ազգային ինքնատիպությունը մնջախաղում: Մենք ենթադրում ենք, որ դա հնարավոր էր նախ այն պատճառով, որ ամեն ազգին, բացի համընդհանուր շարժաձեւից, հատուկ է շարժումների, ժեստերի որոշակի համակարգ: Երկրորդ՝ ժեստերի «երանգավորման» ձեւը նույնպես միանման չէ տարբեր ազգերին պատկանող մարդկանց մոտ: Նշենք նաեւ, որ սա այն ոլորտն է, որտեղ արտահայտվում է ոչ միայն բալետմայստերի, այլեւ կատարողի «ձեռագիրը»: Մեծագույն չափով գործայնությամբ, կենցաղային մանրամասներով հարստացումը արտահայտվում էր Արբատովի մոտ նույնիսկ դիվերտիսմենտային պարերում, մենապարերում ու զուգապարերում եւ խմբային, մասսայական համարներում, որոնք նա միշտ հագեցնում էր թեկուզ փոքր սյուժետային ծրագրով: Պարային պատկերները արբատովյան բալետներում կարելի է բաժանել երկու հիմնական տեսակի՝ դրվագներ, որոնք հիմնականում կառուցված են ազգային պարերի տարրերի կոմպոզիցիայի վրա, եւ պատկերներ, որոնցում տարբեր ձեւերով միավորվում էին դասական պարի եւ ազգային պարերի տարրերը: Բեմական պարային ոլորտում նրա ազգային տարրերի ներմուծման մեթոդը կարելի է շատ առումներով համադրել երաժշտության ոլորտում կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի մեթոդի հետ: Առաջին հերթին այն պատճառով, որ երկուսն էլ հիմնականում անդրադառնում են քաղաքային ֆոլկլորին, իսկ երկրորդ՝ այն պատճառով, որ Արբատովը, ինչպես եւ Տիգրանյանը, ենթարկում է ֆոլկլորային ակունքը զգալի վերամշակման: Սակայն Արբատովը գնաց շատ ավելի հեռու, քան Տիգրանյանը: Նրա հորինվածքներում միավորվում էին պարի շարժումներն ու ձեւերը, որոնք պատկանում էին տարբեր ազգային պարային ժանրերին, սակայն նմանակվում էին ըստ կատարման ձեւի եւ ըստ բնույթի: Մասսայական տեսարաններ ներթափանցում էին կանանց եւ տղամարդկանց մենապարային ժանրին պատկանող տարրերը, որի հետեւանքով հայ ազգային զանգվածային պարերին հատուկ սկզբունքներ վերանայված էին: Որպես օրինակ բերենք հայ պարերգը, որտեղ տղամարդիկ եւ կանայք սովորաբար կատարում են նույն շարժումների հետեւողականության «բանաձեւը», որն անընդհատ կրկնվում է: Արբատովը իրականացրեց պարային «բառապաշարի» բաժանումը՝ որպես տղամարդկանց եւ կանանց «բառապաշարի»:

Նշանակալից փոփոխությունները կապված են նաեւ մասսայական պարի «գծանկարի» հետ: Եթե հայ պարերգերում բոլոր մասնակիցները շարժվում են մի ուղղությամբ (ավելի հաճախ՝ դեպի աջ), ուղիղ, կոր կամ էլ շրջանաձեւ շարվածքով, ապա այս սկզբունքի համադրությունը մասնակիցների՝ աջից եւ ձախից սիմետրիկ շարվածքի դասական պարի սկզբունքների հետ, ինչպես նաեւ ակադեմիական պարի ոլորտի գծանկարի շարվածքների բազմազան տարբերակների հետ ստեղծեցին բոլորովին նոր կոմպոզիցիոն սկզբունքներ:

Մենք բոլորովին հակված չենք ընթերցողի մոտ «լավ» ու «վատ» պիտակներ կպցնելու ցանկություն առաջացնել: Առավել եւս՝ հայ ժողովրդական պարի մշակմանը անդրադարձած հայ բալետմայստերների նկատմամբ: Սակայն անհրաժեշտ է մատնանշել, որ այն սկզբունքները, որոնք ներմուծեց Արբատովը, մինչ օրս կենդանի են մեր բեմում, թե՛ բալետի, թե՛ ժողովրդական պարի ասպարեզում, ինչը ցույց է տալիս, թե որքան կենսունակ է Արբատովի ազգային պարի մատուցման ձեւը, իսկ քանի որ արդեն առավել քան 80 տարի է անցել այս համակարգի օրից, այն, ըստ միջազգային կանոնների, պետք է նույնպես ընդունվի որպես տիպական ազգային ոճ:

Սա վերաբերում է նաեւ «արբատովյան ձեռքերի շարժման» համակարգին: Ինչպես մեզ հետ զրույցում նշել է **Ազատ Ղարիբյանը**. «Արբատովը հասկանում էր, որ եթե մարդու մարմինը պարի հենքն է, ապա ձեռքերը՝ նրա հոգին է, նրա կենսագրությունը եւ ազգային պատկանելիությունը»: Կանանց ձեռքերի շարժումների եւ դիրքերի համակարգն Արբատովի ամենամեծ գեղարվեստական նվաճումն է: Սա ամբողջական համակարգ է, որտեղ միաձուլված են դիրքերը եւ անցումները, որոնք գալիս են արեւելյան տարբեր ժողովուրդների ազգային պարերի տարրերից: Դրան գումարվում է նաեւ 20-րդ դարի սկզբի մոդեռն պարին հատուկ երանգավորումը: Եվ վերջին հաշվով, սա իր՝ Արբատովի համակարգն է, շատ ինքնատիպ, գեղեցիկ եւ ամենակարեւորը՝ կենսունակ:

Ի վերջո, «պարային լեզվի» համակարգը, որն Արբատովն ամրագրեց ազգային բալետի կերպարներին, մի բալետից մյուսն անցնելով եւ հղկվելով՝ հետզհետե անհատական-բնութագրականից վերակերպավորվեց տիպականի, այսպիսով դառնալով այն հիմնաքարը, որի վրա հենվելով կարելի էր շարունակել եւ իրոք շարունակեցին ու բազում տարբերակներով ներկայացրին եւ մինչ օրս ներկայացնում են մեր բալետմայստերներն իրենց հորինվածքներում՝ նույնիսկ հաճախ չիմանալով, թե ինչ ակունքից են օգտվում:

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Ռուսական ավանգարդի հայազգի փրկիչը. *Նիկոլայ Խարջիեւ*

Հայազգի ռուս գրող, նորագույն գրականության եւ արվեստի պատմաբան, տեքստաբան, հավաքորդ Նիկոլայ Խարջիեւին անվանել են խորհրդային ժամանակաշրջանի ամենից ողբերգական եւ չհասկացված կերպարներից մեկը: Նա լեգենդ էր իր կենդանության օրոք, որին մեղադրել են գողության մեջ, անվանել են «պլեբեյ, որը ցանկանում է մտավորական երեւալ», «ռուսական ավանգարդի ժլատ ասպետ», մինչդեռ ուրիշները նրան համարել են ռուս գրականության եւ ավանգարդ արվեստի «փրկիչ»: Օսիպ Մանդելշտամն առաջինը նրա համար է կարդացել իր «Ուղեւորություն դեպի Հայաստանը», Մանդելշտամի այրին նրան անվանել է «ներքինի եւ դիակապուտ», թեեւ հետագայում խոստովանել է, որ միակ տեղը, որտեղ նրան թույլ են տվել մտնել ամուսնու ձերբակալությունից հետո, եղել է Խարջիեւի փայտյա կոմունալ բնակարանը... Նա եղել է չափազանց տպավորիչ արտաքինով տղամարդ, գեղեցիկ անգամ 90-ամյա հասակում. Իլֆը եւ Պետրովը իրենց հռչակավոր հերոսին՝ Օստապ Բենդերին պատկերել են Նիկոլայ Խարջիեւի արտաքինով...

Նա ծնվել է 1903-ին, Կախովկայում (այժմ՝ Խերսոնի մարզ, Ուկրաինա): Հայրը՝ Իվան Խարջիեւը, հայ էր, մայրը հույն էր Զմյուռնիայից: Նրանք վաղ են ամուսնալուծվել: Ինչպես վկայել է Խարջիեւը հայազգի բանաստեղծուհի Ելիզավետա Մնացականովային գրած նամակում, իր մեջ եղած բոլոր լավ բաներն ինքը ժառանգել է մորից, իսկ վատը՝ հորից...

Նրա արտակենտրոն լինելն ի հայտ է եկել դեռ վաղ մանկուց: Երեք տարեկան հասակում, երբ մի անգամ մորաքույրը դաշնամուրով Բրամս է նվագել, Նիկոլայը երաժշտության ազդեցության տակ մտել է դաշնամուրի տակ եւ քնել երկու օր ու գիշեր: Բոլորը խուճապահար են եղել, սակայն երրորդ օրը երեխան արթնացել է ու նախաճաշից հետո ցանկացել է նորից մտնել դաշնամուրի տակ...

Արդեն 19 տարեկանից Նիկոլայ Խարջիեւը սկսել է տպագրվել, սրբագրիչ է աշխատել «Մորյակ» թերթում: Այդ շրջանի նրա կերպարը Խարիտո անվամբ երգիծաբար հանդես է բերված Կոնստանտին Պաուստովսկու «Սեւ ծով» պատմվածքում: 1925-ին Խարջիեւն ավարտել է Օդեսայի համալսարանի իրավաբանական բաժինը եւ տեղափոխվել է նախ Լենինգրադ, ապա՝ Մոսկվա, որտեղ ծանոթացել եւ մտերմացել ժամանակի գրողների ու արվեստագետների՝ Դանիիլ Խարմսի, Օսիպ Մանդելշտամի, Կազիմիր Մալեւիչի, Վիկտոր Շկլովսկու եւ շատ ուրիշների հետ: Հետագայում Մանդելշտամն ասել է, որ Խարջիեւը «բացարձակ լսողություն ունի բանաստեղծության հանդեպ»: Խարջիեւը հատկապես մտերիմ է եղել Աննա Ախմատովայի հետ, որը նրան է ձոնել երկու բանաստեղծություն եւ մի անգամ մակագրել է՝ «Թող այս գիրքը լինի հուշարձան ոչ մի բանով չմթագնած մեր երեսնամյա բարեկամության»: Ախմատովան Խարջիեւի ութ մետրանոց սենյակը համարել է «բանաստեղծների ապաստարան», որտեղ այցելել են ժամանակի գրեթե բոլոր նշանավոր գրողներն ու արվեստագետները: Այստեղ էլ 1941-ին կայացել է Ախմատովայի եւ Մարինա Ցվետաեւայի միակ հանդիպումը...



Պատերազմի ժամանակ Խարջիեւը էվակուացվել է Ալմա-Աթա, որտեղ աշխատել է «Մոսֆիլմի» սցենարական բաժնում՝ հռչակավոր Սերգեյ Էյզենշտեյնի մոտ: Վերադառնալով Մոսկվա՝ բնակվել է երկսենյականոց մի բնակարանում: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ՝ Խարջիեւի այդ բնակարանում անգամ փոշեհատիկ չի եղել, տանը պահել է միայն աշխատանքային գրքեր: Դռան վերեւում կախված է եղել Մալեւիչի «Սեւ քառակուսին»: Տանտիրոջ հպարտության առարկան եղել է հսկայական կաշվե բազկաթոռը, որի վրա նստել են բազմաթիվ այցելուները, եւ առաջին հերթին՝ կիմոնո հագած Ախմատովան...

Սկսելով գեղարվեստական գրականությունից («Ենիչերի» վիպակը (1933), բազմաթիվ փորձարարական եւ երգիծական բանաստեղծություններ)՝ Խարջիեւն այնուհետ որոշել է նվիրվել միայն գրականագիտությանը եւ արվեստաբանությանը: «Իրավացի էր Խարմսը, երբ տխրեց՝ իմանալով, որ դուք որոշել եք դառնալ գիտնական: Իսկ դուք արվեստագետ եք»,- ասել է ընկերներից մեկը: Խարջիեւը հրատարակել է «Մայակովսկին եւ գեղանկարչությունը» (1940) եւ «Նկարչի ճակատագիրը» (1954) աշխատությունները եւ բազմաթիվ հոդվածներ տարբեր ժողովածուներում: Հետագայում, 1990-ականներին Ռուսաստանում եւ արտերկրում սկսել են հրատարակվել նրա աշխատությունները ռուսական ավանգարդի մասին, որոնցում կան չափազանց համարձակ մտքեր եւ արտահայտություններ. օրինակ, ըստ Խարջիեւի, «ռուսական Արծաթե դարը միֆ է»...

Նա նախ ամուսնացել է ժամանակի ռուս մտավորականների շրջանում որպես «ճակատագրական կին» հայտնի Սերաֆիմա Սուոկի հետ (հետագայում՝ Շկլովսկու կինը), ապա՝ նկարչուհի, բալետի պարուհի, տիկնիկագործ Լիդիա Չագայի հետ, որը թղթից քանդակներ էր պատրաստում եւ Խարջիեւի պես վառ անհատականություն էր: Ասում էին, որ ինչի որ Խարջիեւը ձեռք էր տալիս, դառնում էր «կյանքի երաժշտության» թանկարժեք աղբյուր եւ շրջապատին շռայլում էր իր ներկայությունը...

Խարջիեւին պատկանել է մի հազվագյուտ հարուստ արխիվ՝ կազմված ռուս ավանգարդ արվեստի նմուշներից, գրքերից եւ ձեռագրերից: Նա պարծեցել է, որ անգամ Լենինի անվան գրադարանը եւ պետական հավաքածուները չունեն նման հարուստ նյութեր: Նա գիտեր, թե ինչպես պետք է հմայել այն մարդկանց, որոնք ունեն ռուսական ավանգարդին առնչվող որեւիցե բան: Ձեռագրեր հայթայթելու համար Խարջիեւը դիմել է ամենատարբեր միջոցների. Միխայիլ Վրուբելի հիվանդության պատմությունը ձեռք բերելու համար հրշեջների աստիճաններով բարձրացել է հոգեբուժարանի վերեւի հարկ, իսկ Մայակովսկու նամակագրությունը ստանալու համար մի ամբողջ գիշեր է անցկացրել Լիլի Բրիկի պատուհանների տակ: Բավական էր, որ ինչ-որ նյութ ընկներ Խարջիեւի ձեռքը, այլեւս հնարավոր չէր այն վերադարձնել հանգուցյալ գրողի կամ նկարչի հարազատներին: Միայն Նադեժդա Մանդելշտամը, տեսնելով, որ Խարջիեւը չի վերադարձնում ամուսնու ձեռագրերը, նրա տուն է ուղարկել երեք մկանուտ տղամարդու, որոնք կոտրել են Խարջիեւի բնակարանի դուռը եւ սպառնացել են նաեւ կոտրել տանտիրոջ վիզը: Վերջինս վախից վերադարձրել է ձեռագրերը, բայց միեւնույն ժամանակ հաջողեցրել է չվերադարձնել ամենաթանկ փաստաթղթերի մոտ մեկ երրորդը...

Ի դեպ, Սերգեյ Գրիգորյանցի «Նիկոլայ Խարջիեւի ողբերգությունը» հոդվածից կարելի է եզրակացնել, որ Խարջիեւը քաջատեղյակ է եղել նաեւ իր ժամանակի հայ նկարչությանը եւ հավանաբար նաեւ կարողացել է հայերեն կարդալ: Խոսելով Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի մասին՝ նա նկատել է, որ, իր կարծիքով, Փիրոսմանին վստահաբար հայ է եղել: «Նրա նկարների մակագրությունները վրացերեն, ռուսերեն եւ հայերեն են, բայց միայն հայերենում նա սխալներ թույլ չի տվել: Վրացիներն առհասարակ նկարչության հանդեպ այնքան էլ հակումներ չունեն»,- ասել է նա:

Կյանքի վերջին տարիներին, երբ Նիկոլայ Խարջիեւի հավաքածուն արդեն միլիոններ է արժեցել, որոշ խարդախներ սկսել են նրանից թաքուն գողանալ եւ վաճառել նրա արժեքավոր իրերը: Այդպես անհետացել են Մալեւիչի մի քանի հարյուրի հասնող գծանկարները, Խլեբնիկովի գրքերը՝ հեղինակի ուղղումներով:

Նրան թալանողների մեջ է եղել նաեւ շվեդ ճանաչված սլավոնագետ Բենգթ Յանգֆելդթը, որն իր հետ թաքուն Շվեդիա է տարել Մալեւիչի չորս նկարները: 1993-ին Ամստերդամի համալսարանի սլավոնագիտական ինստիտուտի պրոֆեսոր Վիլլեմ Վեստստեյնը 90-ամյա Խարջիեւին կնոջ հետ հրավիրվել է Նիդեռլանդներ: Այդ ժամանակ Խարջիեւի կենսապայմանները գնալով վատթարացել էին, նրան մշտապես տպագրում էին աղավաղումներով, երկրում քաոս էր տիրում, ուստիեւ նա ասել է, որ ցանկանում է հաստատվել Արեւմուտքում՝ դրա դիմաց նվիրաբերելով իր ողջ հավաքածուն ու արխիվը: Եվ քանի որ այդ հավաքածուն անհնար է եղել օրինական ճանապարհով դուրս տանել Ռուսաստանից, Վեստստեյնը կազմակերպել է դրա դուրսբերումը մաքսանենգ ճանապարհով: Նա մի քանի հանցակիցների հետ Խարջիեւների հետ պայմանագիր է ստորագրել, որ վերջիններիս՝ Ամստերդամ գալուն պես նրանց վճարելու է 2.5 միլիոն դոլար՝ ապահովելով նրանց կեցությունը: Դրա դիմաց նրանք վերցնելու էին չորս աշխատանք, սակայն իրականում իրենց հետ տարել են գրեթե ամեն ինչ: Այնպես որ Ամստերդամում ծեր ամուսինները հայտնվել են փաստի առաջ. արխիվն ու հավաքածուն Նիդեռլանդներ չեն հասել, նրանք մնացել են մեկուսացված, իսկ ռուսական իշխանությունները նրանց դեմ դատ են բացել՝ մաքսանենգության մեղադրանքով: Ի վերջո 1995-ին արխիվի եւ հավաքածուի մնացած մասը կանոնակարգելու համար Ամստերդամում գրանցվել է «Խարջիեւ-Չագա» հիմնադրամը: Սակայն նույն թվականին զոհվել է Լիդիան, իսկ մեկ տարի անց Ամստերդամում մահացել է 93-ամյա Նիկոլայ Խարջիեւը: Նրա բազմաչարչար հավաքածուն սկսել են մաս-մաս վաճառել: Միայն 2011-ին Գրականության եւ արվեստի ռուսական պետական արխիվը Նիդեռլանդներից ստացել է Խարջիեւի արխիվից 1427 միավոր, սակայն գեղանկարչական մասը մնացել է Արեւմուտքում...

# «Հայոց լեզուն - հայ ինքնության, հայ էության ընդերքը...»

Այս առաջարկը տարիներ առաջ դեռ կար, բայց եղածը, ինչպես ուսանողներն են ասում, շատ քիչ մաս է կազմում. մասնագիտական թարգմանական կարողության ռեսո՞ւրսն է պակաս, պետական աջակցության բացակայությո՞ւնը, քանի որ չնչին վարձատրություն է տրվում բավականին բարդ աշխատանքի դիմաց, թե՞ մեր լեզվի հնարավորությունները: Ֆրանսիացի անվանի հայագետ **Ֆրեդերիկ Ֆեյդին**՝ հիացած հայերենի բառային ու ոճային հարստություններով, գրել է. *«Մի մասնավոր շնորհ ունեցող այս լեզուն, որ այսօր իսկ զորություն ունի առատորեն եւ ստույգ արտահայտելու գիտական ճշտորոշ միտքը, փիլիսոփայական գաղափարները եւ բանաստեղծական նրբին, բազմերանգ կիսաստվերները միաժամանակ»:*

Այն կարծիքը, որ հայոց լեզու, գրականություն եւ հայ ժողովրդի պատմություն առարկաների ուսուցման մակարդակը պետք է բարձրացվի դպրոցներում, անկախ այս նախագծի լինել- չլինելուց, անհրաժեշտ է, եւ առհասարակ ընդհանուր կրթության որակը պիտի բարձրացվի ու փոփոխության ենթարկվի: Սոցցանցերում արված գրառումները՝ տաբեր տարիքի ու տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, լավագույն պատկերն են հայերենի իմացության, տարրական գրագիտություն չկա, այնպիսի ուղղագրական սխալներով են գրում, որ ապշած ես մնում, եւ հիմնականում՝ համալսարանականներ:

Իսկ որքանո՞վ է իրեն հարգում որեւէ ասպարեզի բարձր մասնագետ, որ տիրապետելով թեկուզ մի քանի օտար լեզուների, չի կարողանում մայրենի լեզվով ներկայացնել իր գիտությունը, իր ուսումնասիրության առարկան կամ ոլորտը եւ սկսում է կիսատպռատ, մի կերպ արտահայտել մտքերը հայերենով, երբ ինքը նախեւառաջ այդ լեզվի կրողն է. սա գիտակցության խնդիր է, եթե չասենք՝ ազգային արժանապատվության:

Հիմա հարց՝ այս երկիրը, հայրենիքը մի՞թե զուտ տարածք է եւ մի՞թե ֆիզիկական միավորով է միայն չափվում կամ արժեւորվում: Երբ վտանգ է սպառնում հայրենիքի սահմաններին, մեր ֆիզիկական անվտանգությանը, մենք ակնթարթորեն արթնանում ենք՝ կյանքի գնով պաշտպանելու այն, իսկ երբ այդ նույն հարձակումը տեղի է ունենում մեր հոգեւոր տարածքի, հոգեւոր անվտանգության՝ մեր լեզվի, մշակույթի, հավատի, բարոյական արժեքների դեմ, ինչո՞ւ է թմրում դիմադրելու մեր գիտակցությունը:

Հայաստանի Պահպանողական կուսակցության հայտարարության տեքստում, որտեղ մեր *«հայրենակիցներին հորդորվում է վճռականորեն դիմագրավել հայության հոգեւոր միակ հիմնասյան դեմ նախատեսվող ոտնձգությանը»*, ***կարեւոր այսպիսի միտք է հնչում.*** *«Ամուլսարն ընդամենը երկրի մի հատվածի ընդերք է, իսկ Հայոց լեզուն հայ ինքնության, հայ էության ընդերքն է, որի ավերման ցանկացած փորձ պետք է կանխվի անխնա եւ դեռ չսկսված»:*

Ֆրանսիայի նախագահ **Էմանուել Մակրոնը** Շառլ Ազնավուրի վերջին հրաժեշտի արարողությանը արտասանած խոսքում մի միտք հնչեցրեց. նա ասաց՝ *«Ֆրանսերենը հայրենիք է»*:

Հայերենը հայրենի՛ք է:

AZG NEW MSHAKUIT.qxd 14/11/2019 18:54 Page 4



# «Բրիտանական եւ հայկական երաժշտական կամուրջ» նախագիծ

**Արփինե ԿԱԼԻՆԻՆԱ**

*Կոմպոզիտոր, դաշնակահար*

Նոյեմբերի 5-ին, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տողերիս հեղինակի նախաձեռնությամբ եւ անձնական ներդրումներով կայացավ «Բրիտանական եւ հայկական երաժշտական կամուրջ» նախագծի երրորդ համերգը: Նախագիծը սկիզբ է առել 2017 թ. սեպտեմբերին` Կոմիտասի թանգարան-ինստիտուտում կայացած համերգով` նվիրված Միացյալ Թագավորության եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին, Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ: Նախագիծը նպատակ ունի հանդիսատեսին ներկայացնել բրիտանական դասական եւ ժամանակակից երաժշտությունը, ինչպես նաեւ տարածել հայ մշակույթն ու գրականությունն աշխարհում` բրիտանացի կոմպոզիտորների շնորհիվ: Նախագծի երկրորդ համերգը տեղի է ունեցել 2018 թ.-ին` կրկին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում: Հատուկ այս նախագծի համար բրիտանացի տաղանդավոր կոմպոզիտորներ **Ջեյմս Մորիարթին, Ջոզեֆ Հոուարդը, Ալիս Հանթերը** եւ **Ջոնաթան Վուլգարը** խիստ տպավորիչ ստեղծագործություններ են գրել հայ պոեզիայի հիման վրա: Իսկ Ջոնաթան Վուլգարը եւ Ջեյմս Մորիարթին 2017 թ. ժամանել են Հայաստան եւ ներկա գտնվել նախագծի անդրանիկ համերգին:

Վերոնշյալ կոմպոզիտորները Լոնդոնի Թագավորական երաժշտական ակադեմիայի շրջանավարտներ են, որոնց հետ տողերիս հեղինակը սովորել եւ առնչվել է նույն Երաժշտական ակադեմիայում: Հենց այդ առնչությունն էլ դարձել է բրիտանական եւ հայկական երաժշտական կամրջի հիմքը: Լոնդոնում ուսանելիս կազմակերպել եմ հայ երաժշտության համերգներ` բրիտանացի երաժիշտների մասնակցությամբ, որոնց ներկա են եղել բրիտանացի երաժիշտներ, կոմպոզիտորներ, որոնց մեջ հետաքրքրություն է արթնացել հայ երաժշտության եւ մշակույթի հանդեպ:

Նոյեմբերի 5-ին կայացած համերգը նվիրված էր Մեծն Կոմիտասի 150-ամյակին: Համերգի առաջին մասում հնչեցին Կոմիտասի հայ ժողովրդական երգերի եւ Բենջամին Բրիթենի բրիտանական ժողովրդական երգերի մշակումները: Հայտնի է, որ 1965 թ. Բրիթենն այցելել է Հայաստան, ավելի քան երեք շաբաթ իջեւանել եւ ստեղծագործել Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տանը: Նույն թվականի օգոստոսին Երեւանում կայացել է Բրիթենի ստեղծագործություններին նվիրված փառատոնի բացումը` հեղինակի ներկայությամբ:




Համերգի երկրորդ մասը բաղկացած էր բրիտանացի եւ հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններից: Հատուկ այս համերգի համար վերոնշյալ չորս բրիտանացի կոմպոզիտորները` Ջեյմս Մորիարթին, Ջոզեֆ Հոուարդը, Ալիս Հանթերը եւ Ջոնաթան Վուլգարը, ստեղծագործություններ էին գրել հայ բանաստեղծների` Ավետիք Իսահակյանի («Գետակի վրա»), Եղիշե Չարենցի («Կան անտես հյուրեր», ծաղկաքաղ «Ռուբայաթներից», «Արեւի ոսկին ինչու է փակում») եւ Վահագն Դավթյանի («Վերջերս հաճախ երազներիս մեջ») բանաստեղծությունների անգլերեն թարգմանությունների տեքստերով: Այս ստեղծագործությունները կատարեցին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչներ **Սոֆյա Սայադյանը** (սոպրանո) եւ **Պերճ Քարազյանը** (տենոր, ՀՀ վաստակավոր արտիստ), որոնք ներգրավված էին նախագծի նախորդ համերգներում եւս: Համերգին մասնակցում էր նաեւ սոպրանո **Մարգարիտա Սարգսյանը**: Հասկանալի է, որ բրիտանացի կոմպոզիտորներն իրենց ստեղծագործությունները գրել են հատուկ վերոնշյալ երգիչների ձայների համար: Դաշնամուրային պարտիան կատարում էր տողերիս հեղինակը:

Համերգի առանցքը Ջեյմս Մորիարթիի` Եղիշե Չարենցի «Կոմիտասի հիշատակին» պոեմի հիման վրա գրված «Մի այլ երգ» ստեղծագործության պրեմիերան էր:

Ջեյմս Մորիարթին գրել է. «Գիտակցում եմ` որքան կարեւոր իրադարձություն է Կոմիտասի 150-ամյակը: Ինձ համար պատիվ էր իմ ստեղծագործական ներդրումն ունենալ Կոմիտասի ծննդյան տոնակատարությանը: Չարենցի «Կոմիտասի հիշատակին» պոեմը դարձավ իմ նոր ստեղծագործության հիմքը: Սա իմ երրորդ անդրադարձն է Չարենցի բանաստեղծական աշխարհին: Ինձ վրա ցնցող ազդեցություն է թողել այն, թե ինչպես է Չարենցն իր պոեմում միահյուսում-հարադրում հզոր եւ խորը հուզականությամբ առլեցուն բանաստեղծական պատկերները գրեթե առեղծվածային եւ երկիմաստ պատկերների հետ: Հենց այդ պատկերաշարն ինձ հուշեց երաժշտություն գրել ձայների մոգական, գեղեցիկ համադրության` երկու սոպրանոյի համար: Պոեմից քաղված փոքր հատվածների միջոցով փորձել եմ արտացոլել չարենցյան խորին արտահայտչականությունը: Ստեղծագործության հանդարտ տեմպը եւ կրկնվող դարձվածքները դրան հաղորդում են գրեթե ծիսական բնույթ, եւ հույս ունեմ, որ այդ ծիսականությունը պատշաճում է երկու ստեղծագործ հսկաների` Կոմիտասի եւ Չարենցի հանդեպ իմ հարգանքի տուրքին»:

Վերջում հակիրճ ներկայացնենք կոմպոզիտորներին:

Ջեյմս Մորիարթին լայնաշունչ մտածողության տեր կոմպոզիտոր է, հեղինակ է թե՛ սիմֆոնիկ մեծակտավ եւ թե՛ կամերային երաժշտության (ներառյալ` փորձարարական եւ մանուկների համար գրված երաժշտությունը): Նրա ստեղծագործական մտածողությունը կամրջում է պարզն ու նրբագեղ մշակումը, համայնականն ու ներանձնականը, ճշգրիտն ու խորհրդավորը` արձագանքելով ժամանակակից կյանքի բազմազանությանը: Ջեյմսը համագործակցել եւ աշխատել է այնպիսի հեղինակավոր երաժշտական հաստատությունների եւ համերգասրահների հետ, ինչպիսիք են Լոնդոնի Սիմֆոնիկ նվագախումբը, Թագավորական երաժշտական ակադեմիան, Ռոյալ Ալբերտ Հոլը եւ այլն:

Ջոզեֆ Հոուարդը գրում է երաժշտություն դասական գործիքների եւ խմբերի համար: Նրա երաժշտությունը կատարվել է Մեծ Բրիտանիայում եւ այլուր (ԱՄՆ, Շվեդիա), ինչել երաժշտական փառատոներում: Նա 2016-2017 թթ. աշխատել է Լոնդոնի Թագավորական երաժշտական ակադեմիայի կոմպոզիցիայի բաժնում, 2017-2018 թթ. հաճախել է «Բրիթեն-Փիըրս» կոմպոզիտորական դասընթացին, 2018 թ. համագործակցել է «Ռամբերթ» պարային ընկերության հետ,: Այժմ աշխատում է իր թեկնածուական թեզի վրա:

Ալիս Հանթերի երաժշտությունը բազմաշերտ է, բազմաբովանդակ եւ ունկնդրին մղում է խորհրդածության: Նրա երաժշտությունն աչքի է ընկնում հարմոնիկ նորարարական լուծումներով եւ զարգացումներով, բարդ մեղեդիական դարձվածքներով` նպաստելով երաժշտական գործիքների տեխնիկական հնարավորությունների ընդլայնմանը: Նրա գործիքային երաժշտությունը հաճախ նորարարական է, խորը եւ կոնտրաստային. ստեղծագործությունները հիմնականում ծրագրային են, ընդգրկում են երաժշտական եւ մշակութային ավանդույթների լայն դիապազոն, աչքի են ընկնում հստակ եւ հարուստ երաժշտական ձեռագրով:

Ջոնաթան Վուլգարի երաժշտությունը խարսխվում է երաժշտական լայնածավալ փորձի վրա` առնչության ուղիներ փնտրելով ունկնդրի եւ կատարողների հետ` միաժամանակ հարազատ մնալով սեփական մտահղացմանը: Նրա ստեղծագործությունները հնչել են տարբեր երաժշտական խմբերի կատարմամբ, հեռարձակվել BBC Radio 3-ով: 2010 թ. դարձել է «BBC Proms» պատանի կոմպոզիտորների հեղինակավոր մրցույթի դափնեկիր: 2010-2013 թթ. ուսանել եւ գերազանցությամբ ավարտել է Քեմբրիջի Ֆիցվիլյամ քոլեջի երաժշտագիտության եւ կոմպոզիցիայի բաժինները, ապա` Լոնդոնի Թագավորական երաժշտական ակադեմիայի կոմպոզիցիայի բաժինը: Այժմ Գիլդհոլի երաժշտության եւ դրամայի դպրոցում աշխատում է թեկնածուական թեզի վրա:

# «Շառլ» կենսագրական մյուզիքլը Լոս Անջելեսում

Լեգենդ դարձած Շառլ Ազնավուրի կենսագրական տվյալների եւ մարդկանց հուզող երգերի հիման վրա գրված **Թալին Պապայանի** «Շառլ» մյուզիքլը նոյեմբերի 9-ին ներկայացվեց Հոլիվուդի NoHo Arts շրջանի «El Portal» թատրոնում:

Ըստ «Միրոր-Սփեքթեյթր» լրատվության, 90 րոպե տեւողությամբ շոուն հարգանքի տուրք է մեծավաստակ երաժիշտ-դերասանին, որ ֆրանսիական էստրադային երաժշտության ոսկեդարի կերտողներից էր, իսկ հետագայում դարձավ նաեւ դիվանագետ եւ բարեգործ:

«Boundaryless Productions-ի» արտադրության, **Հարութ Սողոմոնյանի** երաժշտական վերահսկողության եւ Թալին Պապայանի բեմականացման արդյունքում ստեղծվել է հոյակապ մի մյուզիքլ, որի առաջնախաղը հոկտեմբերի 12-ին «Hotel Café-ում» խորապես տպավորել է հանդիսատեսին: Ազնավուրի դերում հանդես են եկել **Մորիս Սուջյանն** ու **Բեռնար Բայերը,** իսկ էդիտ Պիաֆին մարմնավորել է **Մարիետ Սուջյանը**, որ նաեւ Ազնավուրից երկու երգ («Take Me Away» եւ «She») մատուցել է անգլերենով:



*Ձախից` Մարիետ Սուջյան, Հարութ Սողոմոնյան, Բլեյք Շիլդս Աբրահամովիչ, Բեռնար Բայեր, Մորիս Սուջյան եւ Թերի Ուիբլ*

«Մեր արտերը սկսեցին խայտալ երաժշտության հնչյունների ներքո: Դա իրավամբ գլուխգործոց ներկայացում էր տաղանդավոր եւ կենսախինդ դերակատարների մասնակցությամբ, որոնք պատճառորեն մեծարեցին լեգենդ դարձած երաժշտին», նշել են հանդիսատեսներից Գրեյ Մորելն ու Շեյն Ռասմուսենը:

Ծավալվող իրադարձությունները անձնական բնույթ են կրել որոշ դերասանների համար, որոնցից ավստրիացի դաշնակահար եւ դերասան **Բեռնար Բայերը** հիշել է, թե ինչպես հոր հետ ըմբոշխնում էին Ազնավուրի կատարումները: «Նրան մարմնավորելը չափազանց հուզիչ էր եւ պարտավորեցնող: Բեմի վրա ես զգում էի հանդիսատեսի բոցավառվող սերը Ազնավուրի նկատմամբ», նշել է նա եւ ավելացրել. «Ինձ համար երկար սպասված երազի իրականացումն էր, որն իմ մեջ հիշողություններ արթնացրեց»: **Հաննա Պոլոքն** էլ հավելել է, որ ներկայացման մեջ շատ «նոր բացահայտումներ կային, որոնց տեղյակ չէինք»:

Պապայանը կարողացել է ճշգրիտ արվեստագետի բնազդով ներկայացնել Շառլին, որ բազում դժվարություններ հաղթահարելով շուռ է տվել աշխարհը եւ ստիպել նրան ընդունել իրեն եւ իր անկրկնելի երաժշտությունը: «Դրանով նա աշխարհը դարձրեց մի փոքր ավելի բարեկիրթ, ինքնավստահ եւ ոգեւորիչ», գտնում է Պապայանը:

Հ.Ծ.